



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




4510

91(5)  
2h-26



15-218  
youthful fun



44192-a-h.

91(5)  
Ա-26

Հ.Բ.

ԱՐԵԱԿ ԱԹԱՅԵԱՆ

Հայոցի քառական  
Կ. Արքուն Հայութեամբ

# ՍԱԼԹՈՍ

1906 թ. 24/15

Ա. - Տուշուր (Արտաս)   
Հրե - Գիուլյան (Խաչիար)

+006  
29348

Հրատ. Կ. Աթեան

79

80

Նոր-Զուղա

Ա. Ամենափրկիչ վաճիք սպառան

1906

of India, Sir PHERO



2004 J 04

of India, Sir PHERO

april - 1904

Document of the Government of India

2004

# ՍԱԼՄԱՍԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

## ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Սալմաստն Ատրպատականի գաւառներից մէկն է, ամենաարևմտեանը, որ Թիւրքիաի և Իրանի սահմանն է կազմում։ Սա հին Սաղամաստն է. թուրքերը (տիրող տարրը) անւանում են Սալմաս<sup>1)</sup>, որ իբր ծագում է պարսկերէն «սալմամ» (ողջ, առողջ) և «ա'ոթ» (է) բառից՝ իր իբրթէ առողջարար կլիմակի պատճառով։ Սալմաստեցի Հայերն իրանց գաւառին տալիս են «Սալմաստը՝ փո'ս»<sup>2)</sup> անունը։

Եթէ հետեւենք քաղաքական բաժանման, Սալմաստ գաւառը գտնւում է 42,<sup>0</sup>—42,<sup>74</sup> արևելեան երկարութեան և 37,<sup>0</sup>—38,<sup>0</sup> հիւսիսալին լայնութեան տակ. իսկ եթէ ինկատի ունենանք ընական բաժանումը, Սալմաստի մի մասը պէտք է համարենք և ծարայի

<sup>1)</sup> Ա'(ա') տառը պէտք է հնչել փափուլի, ինչպէս ֆրանս.

ԼԱ յօդի մէջ է հնչւում, որպէս և լ' տառը.

<sup>2)</sup> Բ'(ը') տառը պէտք է արտասանել բերանը բոլորովին բաց, այնպէս որ ստացւի մի հնչւն, որ մէջտեղը բռնկլիս լինի ը, ա և է տառերի։

Ո'(ո') տառը պէտք է արտասանել ուր։

շրջանը (տես քարտեզը), որովհետեւ ծարան  
կազմում է ծալին ալն կաթսալաձեւ հովտի,  
ուր զետեղւած է Սալմաստը:

Գաւառը շրջապատող հարաւալին և հիւ-  
սիսալին շղթաներն արևմուտքից գալով—ա-  
ռաջինը դէպի արևելա-արեւելա-հիւսիս և երկը-  
ըսրդը դէպի արևելա-արևելա-հարաւ—հետրգ-  
հետէ նեղանում են և հասնում Ուրմիի լճի  
ափերին (ալդտեղ երկու լեռնաշղթաների մէջ  
եղած տարածութիւնը մօտ 8 վերստ է), ալդ-  
տեղից շարունակում—հիւսիսալինը մտնում  
է Գ'ունէլ<sup>1)</sup> գաւառակը, ապա Թաւրիզի գաւա-  
ռը, հասնում Սա՛հա՛նդ՝ գագաթին, իսկ հա-  
րաւալինը դէպի հարաւ ծռւելով՝ Ուրմիի լճի  
ափով անցնում, կտրում է Ուրմիի գաւառը և  
հասնում Քիւրդստան:

Սալմաստը շրջապատող լեռները հետեւալ-  
ներն են. հիւսիս-արևմուտքից Սօլաւա գա-  
գաթն է, որից մի անանուն շղթա (Սալմաս-  
տում կոչում են Խօլի սարեր, իսկ Խօլում՝ Սալ-  
մաստի սարեր) դէպի արևելք գալով՝ հասնում  
է «Խօլի-Գ'ա՛դուկ» կոչւող լեռնանցքին և շա-  
րունակելով՝ անցնում Գ'ունէլ գաւառակը.

<sup>1)</sup> Գ'(գ') առար պէտք է արտասանել այնպէս, ինչ  
հնայիւն ունի ի տառից առաջ, որպէս և բոլոր «՝»  
նշանն ունեցող բաղաձայն տառերը:

արևմուտքից Աղբակի լեռներն են՝ Ա՛րա՛ւա՛ւլ՝<sup>1)</sup> և Պիր-ծօպան՝ գագաթներով. Հարաւ-արև-մուտքում Շնատալ գագաթն է, որից շարունակուում են արևելա-արևելա-հիւսիսային ուղղութեամբ ծարալի և Սօմալի գաւառի լեռներն Աղվան գագաթով և հասնում Ուրմիի լճին։ Սալմաստին սահմանակից գաւառներն են—հիւսիսից Խօլ և հիւսիս-արևմուտքից Ղօֆուռ գաւառները, արևմուտքից Տաճկաստանի Աղբակ ընդարձակ գաւառը, հարաւից Սօմալիի և հարաւ-արևելքից Ուրմիի գաւառները, արևելքից Ուրմիի լիճը և արևելա-հիւսիսից Գ'ունէլերկար ու նեղ (ամենալայն տեղը մօտ 5 վերստ) գաւառակը։

Սալմաստի ամենաերկար տեղն է (հաշւած և՝ ծարան) հարաւ-արևմուտքից դէպի հիւսիս-արևելք ուղղութեամբ 64 վերստ, ամենալայն տեղը հիւսիսից հարաւ 55 վերստ, ընդամենը մօտաւորապէս 2000 քառակուսի վերստ<sup>2)</sup>)։

## ՍԱԼՄԱՍՏԻ ՀՈՎԻՏԸ

Սալմաստն՝ ինչպէս ասացինք՝ մի հովիտ է՝

<sup>1)</sup> Ուլուց տառը պէտք է հնչել այնպէս, ինչպէս ֆրանսերէնում Ս տառը։

<sup>2)</sup> Մօտաւորապէս ենք ասում, որովհետեւ Սալմաստի, որպէս և Պարսկաստանի բոլոր գաւառների սահմանները ճիշտ որոշած չեն . . .

ընկած երեք կողմից շրջապատող լեռների մէջ։  
Այդ հովիտը (որպէս պարզ կերպով ցոյց է տալիս  
հողի և բլուրների կազմութիւնը, որպէս և  
լեռների վուլկանական լինելը) ծովի լատակ է  
եղած։ Նա ուղղակի Ուրմիի լճի շարունակու-  
թիւնն է եղած։ Լճի մակերեսովից տարեցտա-  
րի ցածրանալով՝ ժամանակի ընթացքում նրա  
աւելի ծանծաղուտ մտսը բռնորովին բացւել,  
ազատւել է ջրերից և քնակութեան լարմար  
դարձել, որպէս և Խօլի ու Գ'ունէլի գաւառնե-  
րը և Ուրմիի ու Թաւրիզի գաւառների որոշ  
մտսեր (Սալմաստի և Խօլի ճահիճներն ուղղա-  
կի լճալին ժժմակներ են)։

Սալմաստն արեմուտքում աւելի բարձրադիր  
է, որ հետզհետէ ցածրանալով իջնում է մին-  
չե Ուրմիի լիճը։ Սալմաստի կենտրոն Դիլիման  
(Դիլ'մա՛քան) աւանը ծովի մտկերեսովիցից 5771  
ոտնաչափ բարձր է, գաւառի միւս տեղերը  
(բացառութեամբ երեք կողմից շրջապատող  
լեռնալին մասերի) իրանց բարձրութեամբ շատ  
չնչին տարբերութիւն ունեն Դիլիմանից։ Ու-  
րեմն Սալմաստն աւելի բարձրադիր է, քան  
իր սահմանակից գաւառները—Խօլ (քաղաքը  
3896 ոտնաչափ ծ. մ.), Ուրմի (քաղ. 4513  
ոտն. ծ. մ.), Գ'ունէլ (մօտ 5000 ոտն. ծ. մ.)։

Սալմաստի հովիտը կազմւած է մեծ մա-

սամբ աւագախտուն Հողից, քարքարուտից, մաստմբ կրահողից և Ուրմի լճին մօտ ահագին տարածութեամբ ճահճուտներից ու աղտաղտուկներից (աղալին գաշտերից), ուստի և Հողի բերքը չափազանց խղճուկ է (մէկին 2—10). Հողի մեծ մասը մնում է չփանած, որի պատճառներից մէկն էլ ջրի պակասութիւնն է։ Սահմանակից գաւառներից միայն Խօյի Հողն է, որ աւելի ստոր է Սալմաստի Հողից։

### ԼԵՒՆԵՐԸ

Սալմաստը շրջապատող լեռներից տժենարարձր գագաթներն են Սօլաւա, Շնատալ, Արա՛ւռ՛ւլ՛, Պիր-ծօպան և Աղվան, որոնց լարձրութիւնը դժբախտաբար չկարողացանք իմանալ<sup>1)</sup>։ Այս գագաթների վրա ձիւնը մնում է մինչև ամառաւ մէջերքը։

Շնատալ գագաթից սկիզբն է առնում Զօլա կամ Սօլա գետակը, իսկ Սօլաւալից Դուշշ՝ մա՞ն-Դա՛րա՛լի առուն, որ միանալով լայտնի Դերիկի հանքալին աղբիւրից և նրանից հիւսիս-արևեմուտք գտնւող գիւղերից եկող ջրերից գոյացած առւակի հետ՝ կոչւում է Դերիկի-Զուր։ Աղվան գագաթի լանջից բղխում են

<sup>1)</sup> Քիւրդերի պատճառով վահնվաւոր է այդ լեռները դնալը։

Սալմաստում լայտնի «Գութե»-ները (հանքարին աղբիւրներ), որոնցից մի առևտկ կազմւելով թափւում է Զօլտ գետակը:

Հարաւում Ուրմիի լճի ափերից մի լեռնաշղթա գնում է գեղի հարաւ-արեմուտք, որ կոչւում է Սօմալի լեռներ՝ համանուն գաւառի սահմանը լինելու պատճառով. այդ շղթաի մէջն է Աղվան գագաթը: Այդ լեռնաշղթան հասնելով Շնատալ բարձր գագաթին՝ ծրուում է համարեած գեղի հիւսիս, կազմելով երկու պետութիւնների—Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանը. Սալմաստում այդ շղթան անւանում են Աղբակի լեռներ՝ տաճկական համանուն գաւառի անունով. այդ շղթաի մէջն են Ա'րա'ւուլ՝ և Պիր-ծօպան գագաթները, իսկ հիւսիսային ծալրում Սօլաւա գագաթը, որից լեռնաշղթան շարունակում է գեղի հիւսիս, իսկ մի ուրիշ ճիւղ ծռւում է գեղի արևելք՝ կազմելով Խօլի սահմանը, հասնում Խօլի-Ք'ա'դուլին, ոյնտեղից էլ թեքրուում արևելա-հարաւ ուղղութեամբ և անցընում Ք'ունէլ գաւառակը:

Այդ լեռների առաջով, գլխաւորապէս զուգահեռաբար, իբրև նրանց ստորոտներ, ձգւում են մի քանի բլրաշարքեր, որոնցից նշանաւորներն են—Սպի-Ք'ա'մա'լ՝ (քիւրդերէն՝ սպի-

տակ գօտի), որը բաղկացած է իրար լաջորդող հողի և սպիտակագոյն քարի շերտերից, ճարտի բլրաշարքեր, Եօ'ն'ջա՛լը<sup>1)</sup> բլուրներ, ուր կամարմարիօնի անմշակ հանք, Ղառլնը-Ետրը (թուրքերէն՝ փորը կիսած), Փիլ-Զաւուշ (թուրքերէն՝ սուրը գզիր), որի ստորոտում երկու հանքալին աղբիւրներ կան:

Ղառլնը-Ետրըղի մասին արժէ առանձին խօսել. ալդ հսկա լեռնաբլուրը հետաքրքիր տեսք ունի. նա կանգնած է առանձին. բաղկացած է նոյն թոյլ աւազանման քարից, ինչ որ միւս բլուրները, բայց գագաթը կազմւած է ամուր ճերմակ քարից մօտ 5 սաժէն բարձրութեամբ. ալդ ճերմակ քարէ պսակն իրանից պայտաձև չորս ճիւղ է արձակում դէպի ցած՝ հիւսիսալին ուղղութեամբ՝ նոյնպէս մօտ 5 սաժէն բարձրութեամբ, որոնք մինչեւ ստորոտը հասնելը հետզհետէ ցածրանում են, ալդպիսով կազմելով երեք վերիցվալը տարածւող նեղ հովիտներ, այնպէս որ հեռւից նալողի վրա հսկա խալապղէտ խողի տպաւորութիւն է անում։ Ժողովուրդն ալդ բլրի մասին պատմում է հետեւեալ աւանդութիւնը. երեք եղբալը սիրահարւում են մի աղջկանից,

<sup>1)</sup> Օ՛ (օ՛) տառը պէտքէ հնչել վախուկ, որպէս ֆրանսերէն ԷՍ :

և իւրաքանչիւրն առաջարկում է գեղեցկուհուն իր սիրտը։ Ազջիկն ապրելիս է լինում բլրի ծալրին շինած ամրոցում։ Նա առաջարկում է հետեւեալ պայմանը։ թող երեք եղբայրներն էլ բլրի տակից փորելով գան, ով շուտ հասնի ծալրին, կնշանակէ նա ամենից շատ է սիրում իրան, ուստի ինքը նրա կինը կդառնա։ Երեք եղբայրներն սկսում են փորելով բարձրանալ, կրտսերն առաջ հասնում և կին է առնում գեղեցկուհուն, իսկ միւս երկու եղբայրներն ընկում, մեռնում են ճանտպարհին, ահա թէ ինչու նրանց փորած ճանապարհները կրտսերի փորածից կարճ են (մի հովիտն աւելի բարձրից է սկսում, քան միւս երկուսը)։

Մի ուրիշ աւանդութիւնն էլ պատմում է, թէ չորս արքայորդի եղբայրներ հար մտհից յետո գահը ժառանգելու վեճ ունենալով՝ որոշում են, թէ ով շուտ հասնի բլրի գաղթը, նա կլինի թագաւոր, կրտսերը շուտ հասնում, թագաւոր է դառնում, միւսները տեղչհասած՝ ընկնում, մեռնում են ամօթից։

Այդ լեռնաբլրի գաղթին կան աւերակ տների և բերդի պարզ հետքեր, որոնք այնքան էլ հին չեն երեսում. կարծը ճերմակ քարէ ապառաժի մէջերքը, համարեանառիկ

տեղերում, փորւած են (երեւի գժոխալին տան-  
ջոնքներով) սենեակիկներ, որոնց մէջ մտնելը  
բաւական գժւարութիւն է ներկայացնում:  
Հովհաններից մէկի վերին ծալըում գտնւում  
է մի կիսա-ստալլակտիտի ալր, որի առաստա-  
զից ջուրը կաթկաթելով՝ փոս է գոլացրել։ Մի  
ուրիշ ալրի մէջ մի քաղցրահամ աղբիւր կա։<sup>1)</sup>

### Զ Ր Ե Ր Ը

Սալմաստը բաւական աղքատ է ջրերով,  
եթէ ինկատի ունենանք, որ հողերը ջրաբբի են։  
Եղած ջրերը հետևեալներն են. Ուրմիի աղ-  
տաղի լիճը, որ ընկած է Սալմաստի ամենա-  
ցածրադիր մասում (1559 մետր բարձր.), որից  
ուրիշ պալմաններում էլ օգտւել չեր կարելի։  
Մեծ նշանակութիւն ունի Սալմաստի համար  
Սօլա (քիւրդերէն, իսկ թուրքերէն Զօլա, հա-  
յերն անւանում են Սօլաու-Զուր) գետակը,  
որ կազմւում է ծարալի առւակներից և անցը-  
նելով Սօլա գիւղի մօտով՝ ստանում է նրա  
անունը, նա մանելով բուն Սալմաստ՝ բա-  
ժան-բաժան է լինում թէ դաշտերը ոռոգե-

1) Մահլամ գիւղի քահանան ասում էր, թէ  
ինքն Առաքել պատմագրի պատմութեան մէջ կար-  
դացել է, որ Ղառընը-Եարըզի բերդում նստելիս  
է եղիլ հայոց Սահատրուկ թագաւորը . . .

լու, և թէ խմելու համար։ Իր ընթացքը հիւս-արևելեան ուղղութեամբ շարունակելով՝ նա իր մէջ է ընդունում Դերիկի (Ճմեռը միալն), Բութամինի (միշտ) և Դերալուի հեղեղատի (երբեմն գարնանը) ջրերից գոյացած Հար'զաւ տռուն Վալասար գիւղի տակ. այդտեղից փռքըի զիգզագներ անելով՝ հասնում է թուրքական Եաւշանը գիւղը և ապա մի գեղեցիկ կլոր սլտուտ անում դէակի հարաւ, այնտեղ ընդունում «Գուաւ»-ներից գոյացած առւակը և նորից սլտուում դէպի արևելյք, ապա դէսի հիւսիս-հիւսիս արևելք և ճիւղաւորւելով՝ ու դելտաներ կտղմելով՝ թափւում Ուրմիի լիճը։

Սօլտի մէջ թափւող վատկները չտփազանց աննշան են և պատահական. ամենանշանակալուորը Դերիկի-Ճուրն է, որ սկիզբն է տռնում Սօլտւա գագաթից, անցում Դուշ'ման'-Դարալով (թշնամու ձոր՝ թուրքերէն՝ ստանալով այդ լայտնի ձորի անունը, Գուրթ-Դար'լով) (թուրքերէն՝ գայլի ձոր), իր մէջ ընդունում Գուգիկ գիւղի աղբը ջուրը, մի ուրիշ ճիւղէլ սկիզբն է առնում Բըուշխօրան, Վզըւ-Ք'ան'դ' և Հարլ'արան լեռնալին գիւղերի աղբիւրներից, երկու Դերիկ գիւղերի մէջտեղը գտնւող հանքալին աղբիւրներից գոյացած առ-

ւակն իր մէջ ընդունում Գ'ուլ'-'Դա՛րա՛լի (վարդի ձոր) սկզբում և «Դերիկ-Սու» կամ «Դերիկի-Զուր կոչելով հոսում գէպի հարաւ, իր մէջ ընդունում Սնջի և Աւրա՛ր'զա գիւղերի աղբիւրներից գոլացած առւակը, աւելի հարաւում ընդունում Ա՛լի-Բուլաղ (թուրքերէն՝ լիսուն աղբիւր) գիւղի աղբիւրներից գոլացած առւակը և ծուռում գէպի արևելք, անցնում Հին-Քաղաքի մօտով, Սաւրա գիւղի միջով, հասնում Ահրեան, ալդտեղից անցընում Դիլիման և Փալաջուկ գիւղի արևմտեան ծալքում (երեեմն ընդունելով Դերա՛լ'ու հեղեղատի ջուրը) միանում Բութա՛մինի և Զօլալից վերցրած ջրերից գոլացած առւակի հետ, ալդտեղից Հա՛ր'զաւ անունն ընդունելով՝ անցնում Փալաջուկ գիւղի մօտով և Ղալասարի միջով հոսելով՝ թափւում Սօլա գետակը։ Ամառները Դերիկի-Զուրը Հին-Քաղաքից գէնը չէ անցնում։ Լեռնալին Զեա՛ջուկ գիւղի վերը գտնւող աղբիւրի և ք'ա՛հ'ըշէղի ջուրը թափւում է Սառնա գիւղի վերից հոսող մի առւակի մէջ, որ գուրս է բերւած Սօլալից։ Սալմաստում եղած աղբիւրները համարեամ միայն լեռնալին մասերումն են, գլխաւորապէս ճարտում։ իսկ գաշտալին գիւղերը կամ բուն Սալմաստն օգտւում է լեռնալին գիւղերի

զրերից գոյացած գետակից և առւակներից:

Սոլալի ստորին մասերում և Դերիկի-Զրում  
գտնվում են աննշան քանակութեամբ մի  
տեսակ ու ձկնիկներ, որոնցից շատ էլ չեն  
օգտվում տեղացիները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԵԲՐ, ԵԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Սալմաստը բաւական հարուստ է հանքա-  
լին ջրերով, սակայն ժողովուրդը համարեա-  
չէ օգտվում նրանցից. չօգտւելու պատճառը  
բացի տգիտութիւնից ջրերին կարեւորութիւն  
չտալուց՝ մասամբ աղբիւրների անխնամ լինելն  
է, մասամբ էլ նրանց վտանգաւոր տեղերում  
գտնվելը. Հռչակաւոր Դերիկ վանքից հիւսիս  
գտնվող հանքալին (թթու և ծծմբալին) ջրերը,  
որը և՛ խմում էին, և՛ մէջը լողանալով՝ բժրշ-  
կութիւն էին որոնում որոշ հիւանդներ, այժմ  
քիւրդերի պատճառով անմտաշելի են դարձած  
սալմատեցիների համար. Նոյնիսկ Աղվան գա-  
գաթի լանջից բղխող «Գուաւ»-ներ կոչւող հան-  
քալին ջրերը, որ անքան մօտ են Սալմաստի  
հովտին, քիւրդերի ահից սալմատեցին չէ կա-  
րողանում իր օգտին ծառալեցնել: Ալդպէս են  
և՛ Գ'աւր-աւա գիւղի ու ձարա ամրոցի աղբիւր-  
ները: Մնում են մատչելի միտն Փիր-Զաւուշ  
(հալերի ասութեամբ՝ Փլչաւուշ) լեռնաբլրի

ստորոտի երկու աննշան աղբիւրները, որոնցից ոչոք չէ օգտւում: Բութամինի, Թամամթա'մալի, Փրիշատի, Ուրմիի լճի ջրերից նոյնպէս համարեած չեն օգտւում: Հիւանդները երբեմն ալցելում էին Ուրմիի գաւառում գըտնւող Զնդաշտ հանքալին ջուրը, որին աւազանի ձեւ է տրւած և փայտով ծածկւած, բայց ալժմ վտանգների պատճառով ալդտեղ զնալուց էլ են դադարել: Մի փոքրիկ հանքալին ջուր էլ գտնւում է Վարդան գիւղի մօտ, ուր լողանում են ջերմախտաւորները:

Եօ՞ն'ջա՞լը սարերում մարմարի հանք կա, որ չէ շահագործւում: Վարդան գիւղի մօտ այստարի գտնւած է դաճի հանք: Ասում են, Անքա՞ն'դ' կոչւող լեռնաբլուրներում մետաղի հանք կա, բայց քիւրդերի ահից ոչոք չէ զնում ալնտեղ:

### Կ Լ Ի Մ Ա Ն

Թէ ո՛րքան անբաւարար է Սալմաստի կլիման, դրան ապացոյց են ճահիճները, աղբիւրի ջրերից համարեած զուրկ լինելը, անտառների կատարեալ բացակայութիւնը, անանձիւ ամառները, հողի ջրաբրի լինելը (ջրած արտերում և նրանց շուրջը ջրերը կանգ են տունում, լճանում, դրան հետեւում է նեխւած ջրերի գոլորշիացումը), որից տուժում են մար-

դիկ՝ զլխաւորապէս ջերմախտից բռնւելով): Զմեռն սկսւում է հոկտեմբերից և տևում մինչև ապրիլ (տեղացիների ասութեամբ երբեմն էլ աւելի). ուստի առանց այն էլ խըդճուկ բուսականութիւնն ուշ է երեան գալիս. ցուրտը, կամ աւելի ճիշտը՝ սառնամանիքը երբեմն հասնում է — 30°-ի, ջրերը բոլորովին սառչում են, և միքանի գիւղերի բնակիչներ ստիպւած են լինում կուժերն ուսերին երկու-երեք վերստ անցնել և ջուր բերել (հաֆթը վանցիները Հին-Քաղաք և այլն): Գարնանը շոգերն սկսւում են լանկարծակի, բայց գիշերները ցուրտ անում, այնպէս որ ծառերի ծաղիկներն ու բուսերը լաճախ ենթակա են ցրտատար լինելու վտանգին: Անձրեներ շատ քիչ են լինում, եղածն էլ կարճատե, իսկ կարկուտ ստէպ-ստէպ է գալիս: Ամառն առանց անձրե է անցնում. շոգերը երբեմն հասնում են + 50°-ի. ալստեղ հասնում են փշշատ, նուշ, ծխախոտ, տաքութիւնից բնակիչների դէմքերն ու ձեռները թխացած են լինում, այնպէս որ արաբի տպաւորութիւն են անում:

Ենորհիւ այն հանգամանքի, որ աղբիւրների բացակալութեան պատճառով գետի կամ առ-

ւի ջուրը են՝ խմում ճահիճների և ընդհանը-  
րապէս վատառողջ կլիմալի, սաստիկ տարած-  
ւած է ջերմախտը, որին իբրև ապացոյց կա-  
րող է ծառայել (որպէս ապագայում կտեսնենք)  
նուև սրբերի և ուխտատեղիների այն գերակշը-  
ռող քանակութիւնը, որ լատկացրւած է ջեր-  
մախտաւոր հիւանդների ալցելութեան համար:

ԲՈՒԱԱԿԱՆ ԱԽԹԻԽԵՐԸ


Սալմաստի գաւառը միանգամայն զուրկ է  
տնտառներից. ոչ մի ծառ, ոչ մի թուփ չը-  
կա բնական. վառելանիւթը բազկանում է ա-  
թարից (փթիր, քակոռ), կոշտ խոտից (ըլոփկ'),  
մի տեսակ փշոտ բոլսից, որ «գ'ա'զ'» է կոչւում,  
«խազա'լ»-ից (չոր տերև), «ք'ուլա'շ»-ից (ծը-  
ղթ) և մարդկային ձեռքով տնկոտած ծառերի  
փալտից։ Փալտ ալրելը վազուցւա բան չէ, այլ  
սկսւել է զերջին տարիներս՝ թիթեղէ վառա-  
րանների մուտք գործելով։ այժմ որովհե-  
տև ալդ վառարանների թիւը մեծանում է,  
ուստի օրէցօր փալտը նւազում ու թանգա-  
նում է։ Եթէ ալդպէս շարունակւի, տեղա-  
ցիների կարծիքով՝ շուտով ալդիներում ալլես  
ծառեր չեն մնալ ալրելու։

Արօտներ նոյնպէս չկան համարեա. եղած-  
ներն էլ ըուն Սալմաստից հեռու, վտանգա-

ւոր տեղերում և աննշան են, ինչպէս Անքա՞նք՝  
լեռնաբլուրը և «Թուզեր» կոչւող տեղը,  
որոնցից օգտվում են քիւրդերը միայն:

Արտերում, պարտէզներում և ալֆիներում  
ցանում են ցորեն, գարի, կորեկ (քիչ), կը-  
տաւատ, գետնախնձոր, առւոյտ, խաժխտժ  
(խաշխաշ—քիչ), սեխ, ձմերուկ, վարունկ,  
սիսեռ (քիչ), լոբի, բնի (ճակնդեղ), ռե-  
հան, սուսամ'քա՛ր' (զամբախ), մա՛զրա,  
նա՛նա՛ (անանուխ), թարխուն, քա՛րա՛ւս'  
(քա՛րա՛ւս՛ւզ'), գունա՛րախան (արևածա-  
ղիկ), բադրիջան, պամիդօր, բազլա (բակլա—  
քիչ,), մա՛քա՛դա՛ռու կամ փեղամ (սիմինդը),  
բամիտ, դգում, բիբա՛ր' (պղպեղ), ք'աբառ  
(ք'ա՛ւս՛ր'), սսպ (քիչ), կանեփ (քիչ), կա-  
զամբ, ք'ահի (սալաթ), սոխ, սխտոր, ծը-  
խախտ (քիչ), բողկ, գինձ, շաֆրան, սա-  
միթ, մաղատանոս, շաղգամ, ք'ա՛շո՛ւր' (գա-  
զար), գուլ'-սաբահի (առաւօտեան ծաղիկ),  
մանուշակ (երկու տեսակ, մէկը սովորական,  
միւսը երկար ցողունով մի ուրիշ ծաղիկ,  
որը մանուշակի գոյն ունի):

Դաշտերում, սարերում, ճահիճներում և պար-  
տէզներում բուսնում են պոաս, գ'օզալ-բարբիթ,  
խինձ (սինձ), գ'ա՛ն'դա՛լա, աւելուկ, զրէշ, սի-  
բեխ, քաչալոկ, գինձ, գետնիթութ (մորի),



ք'աբառ, դաղձ, դաղդաղուկ (եղինճ, աղջան), փարփինա (դանդուռ), թալ, փիփերթ, պառեխ, բոզիկ' (բոխ), ըշղում<sup>1)</sup> (շխունդ), գետնախընձոր (եր-ալմասը—հազւագիւտ), ճնճղան-պաշար, ջրկոտեմ, պուտ, ման'գիկ', էրիժնակ, մճաղէս, իշուկաթնուկ, դֆտօ, կաթնարարուկ, սօր, թօփալ-ծաղիկ, նա'ր'գիզ, սարի-լալա կամ բէլբուն (շուշան), ձնծաղիկ, դեղին-ծաղիկ, լուի-ծաղիկ, խինալի-ծաղիկ, ուրց (խուրձ, դարաբաղցերէն՝ խոռնը), ապրեմ-չապրեմ, աւել, դօլաշա (պատատուկ), առւոլտ, զօռնդ'ա (կօռինկա), փշփշուկ, զիտդ (սովորական խոտ), գ'ա'զ', երեքթիկէն (սիրի-սիրի), շան-հաւող (շան-խաղող), ճարճատուկ, եղեգն, եարդուն, զա'րնիկ' (պարսկերէն՝ ուզարլիկ կամ սպանդ, մի գարշահոտ բոյտ, որից մտհմէդականները խունկ են պատրաստում):

Ալգիներում բուսնում են հետեւեալ ծառերն ու թփերը. ծիրանի, տանձենի, խնձորենի, ընկուզենի, զարալու (դամբուլի), սերկելի, գեղձենի, կեռասենի, նշենի, փշատի, թզենի, նռնենի, գիլանառի, սալորենի, եմիշան, թթենի, դ'ա'լա'մա (բարդի), ք'ա'լա'մբար (սօսի), ուռի, զարաղաջ, վարդենի, լասմիկ և խաղող, ուրիշ ոչինչ:

<sup>1)</sup> Ա. (լ.) պէտք է հնչել կոչտ, կոկորդում սղմելով:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՒԹԻՉՈՒՆՆԵՐԸ

Կենդանիներով հարուստ չէ (Սալմաստը, բացի ընտանի սովորական ձիեց, էշեց, ջորուց, ուղտից, եղից, կովից, զոմշից, ոչխարից, ալծից (քիչ), կատւից և մկնից՝ դաշտերում և լեռներում ճարւում են նտպաստակ (քիչ), ազւէս, գալլ (երկուսն էլ (հազւագիւտ), վալրի խոզ, արջ (հազւագիւտ), կուզ (առնատ—քիչ): Ընտանի խոզ չեն պահում թուրքերի կրծնական գգացմունքները չփրաւորելու համար. բացառութիւն է կազմում Խոսրովացի միքանական միստիօնարութիւնը, որ նմուշի համար միքանի հատ ունի:

Ընտանի թուչուններն են, հաւ, աղաւնի, սագ, բադ, հնդուհաւ (բացի հաւից մնացածը շատ քիչ): Վալրենի թուչուններն են. բազէ, մանգաղաթե, արտուտիկ, աղաւնի, եղտիւրիկ (կիւ-կիւ), ագռաւ, կաչաղակ, սարեակ, ճնճուղ (ճնճղուկ), պիպու (յոպուղ), ծիծեռնակ, զումրի (տատրակ), լոր, ջրի-լոր, դաշտիսաւ (դաշտի-հաւ), գ'օ'զ'-զուշի, ճարճատուկ (այս անունով բոլու էլ կա), բու, կապուտ-զուշ, սոխակ, շէլդա-բլ'բուլ', մարթխափուկ (մարդխարուկ), ներկարար, բադ, արագիլ. ամառը լինում են կռունկներ և թթի-զուշ:

## ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՌԸ

Սամաստի հայերը ցըւած են 23 գիւղերում, որոնցից միայն հինգն է զօւտ հայաբռնակ — Հա՛ֆ�թվան, Փայտջուկ, Մա՛հ՛լամ, Ղալասար և Սառնա, իսկ միւս գիւղերում հայերն ապրում են թուրքերի և մի-երկուտեղ ասորիների ու քիւրդերի հետ խտոն:

Այն, ինչ որ ամենից առաջ օտարականի աչքին է զարնւում Սալմաստի գիւղերը մըտնելիս, ծալրայեղ անմաքրութիւնն է, թւում է, թէ առաջին պատահած տեղը գիւղի ընդհանուր աղբանոցն է, ըստց ճանապարհը շորունակում էք փողոցներով և տեսնում, որ ամբողջ գիւղն աղբանոցների մի ահագին ժաղավածու է. ամենուրեք նոյն կեղտը, նոյն գարշահոտութիւնը. աղբը մնում է, հետզհետէ տւելանում, վրան ձիւն է գալիս, հայում, և գարնան վերջերին ընակիչներն ալդ աղբից աթար են պատրաստում. սակայն փողոցները չեն ազատում իրանց սովորական աղբից, նոյն օրը ևեթ սկսում է նորից աղբը փոելու գործողութիւնը:

Փողոցները ծուռումուռ են, երբեմն այնքան նեղ, որ երկու մարդ իրար կողքով դրժւարութեամբ են անցնում: Եատ տներ մըտնելու համար ստիպւած էք լինում դարբասից մտնելով՝ նորից ընկնել փողոցի պէս միքանի մէջ, ուր ձեր առաջ բացւում են միքանի դռներ. անցնում էք դրանցից մէկով, և ձեր առաջը գալիս է նորից պատ, որի ծալը հասնելով՝ նոր միայն դռւրս էք գալիս բակը վերջապէս: Տների լուսամուտները (որ ոչ ամեն տուն ունի) դէպի բակն են նայում, փողոցի կողմը պատուհանից զուրկ է. բացառութիւն են կազմում գլխաւորապէս Վալասար գիւղում միքանի տներ, ընդհանրապէս հարուստ և նորաշէն, որոնք դէպի փողոցը նայող փոքրիկ պատուհաններ ունեն: Տները սակաւաթիւ բացառութեամբ միահարկ են, հողէ պատերով և սաստիկ ցածր առաստաղներով. իսկ դռներն արդէն զարմանալի են, որպէս գուցէ ամբողջ Պարսկաստանում. ամենացածրահասակ մարդն անգամ մտնելիս ստիպւած է մէջքը կորացնել, կարծես որջ է մտնում. դռների ալդքան ցածր լինելը տեղացիները կատակով բացառը լում են ալապէս. «Պարսկաստանը կեղծաւոր երկիր է. դռներն ալդքան ցածր են շինւում

այն պատճառով, որ դեռ տունը չմտած սկը-  
սէք երկրպագել (բարեել) տանտիրոջը» . . .

Հալերի թաղը, որ համարեա բոլոր գիւղերում  
առանձնացած է թուրքերի թաղից, վերջինիցս  
տարբերում է համեմատաբար գէպի լաւը:

### ՀԱՅԻ ԹՎԱՆ

Սա գուտ հայաբնակ գիւղերից ամենամեծն  
է, որ գտնւում է Դիլիման կամ 'Դիլ'-մա'քան  
(պարս. և արաբերէն՝ տեղի սիրտ—գաւառի  
կենտրոն) աւանից  $3\frac{1}{3}$  վերստ հեռաւորու-  
թեան վրա (մէկի կենտրոնից մինչև միւսի  
կենտրոնը) գէպի հարաւարեւմուտք և  
Սալմաստի հովտի համարեա մէջտեղը: Ունի  
423 տուն՝ 2314 բնակչով: <sup>1)</sup> 1828 թւի  
ոսւս-պարսկական պատերազմի ժամանակ  
ալս գիւղից մի մեծ գաղթականութիւն գի-  
մել է գէպի Երեանեան նահանգը, որպէս  
և միւս համարեա բոլոր գիւղերից:

Դիլացիները գիւղի անունը ծագած են  
համարում պարսկերէն հա՛ֆ'թ (եօթ) և «գի-  
ւան» (գատարան, դատաստան) բառերից.

1)Վիճակը բութիւնը կազմւած է 1905 թ. մայիսին.  
յուլիսի սկզբում Հին-Քաղաքից մի հայ (բողոքա-  
կան) ընտանիք փոխադրւեց Հա՛ֆ'թվան, հետե-  
ւապէս տների թիւը դարձաւ 424, որոնցից 4-ը  
բողոքական է:

գուցէ և՝ բաղկացած է «Հա'ֆ'թ» և «աւան» (եօթ շէն) բառերից, մանաւանդ որ շատ մեծ է եղել մի ժամանակ. Սալմաստում շատ գիւղերի անուններ կան «տւան» կամ «աւա» (քիւրդական ձև) վերջաւորութիւնն ունեցող: Միւս գիւղացինները Հա'ֆ'թվանի անհիւրասիրութիւնն ակնարկելով ասում են. «Հա'ֆ'թվան կեթաս՝ խաց վերց, Հա'ֆ'թվանա կըլես՝ ո՞տ վերց» (Հա'ֆ'թվան կերթաս՝ հաց վերցրու, Հա'ֆ'թվանից կելնես՝ ո՞տ վերցրու):

Իբրև Սալմաստի հայութեան կենտրոն՝ Հա'ֆ'թվանում է գտնւում առաջնորդարանն, ուր նստում է առաջնորդական փոխանորդը: Կրթութեամբ ու կրթական գործով այս գիւղը գերազանցում է միւս գիւղերից. ունի երկդասեան և երկսեռ դպրոց 17 տարւա գոյութեամբ. շէնքը բաւական լարմար է. այստարի (1905 թ.) դպրոցն ունէր 4 ուսուցիչ, 1 ուսուցչուհի, մօտ 120 աշակերտ-աշակերտուհի<sup>1</sup>): Կա մի գրադարան, որ առաջ «Գը-

<sup>1</sup>) «Մօտ» ենք ասում, որովհետեւ սաների երթեեկութիւնն այնքան էլ կանոնաւոր չէ կատարւում, որպէս ընդհանրապէս ամբողջ Սալմաստում, մանաւանդ գարունը բացւելուն պէս, երբ սկսում են դաշտային աշխատանքները. միւս կողմից՝ սալմաստեցին մեծ կարևորութիւն չէ տալիս դաշտակի կրթութեանը . . .

բասիրաց անունն էր կըում, իսկ այժմ «Գոլոշեան» է կոչւում իր հիմնադրի (տաճկահալ) անունով. գրադարանն ունի 800 կտորից աւելի հայերէն գիրք և ստանում է միքանի պարբերական հրատարակութիւն։ Դըլրոցի շինութեան մէջ կա թատերասրահ, ուր ուսումն. տարւա ընթացքում երբեմն ներկայացումներ են տալիս ուսուցիչներն ու տեղացի երիտասարդները։ Այս գիւղում երկու տարուց իվեր գոլութիւն ունի «Հա՛ֆ'թվանի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն» անունով մի կազմակերպութիւն, որ նոր միայն այստարւա յունիսից սկսեց իր գործունէութիւնը՝ առժամանակեա կարուձեի գպրոց բանալով, ուր ուսուցանում է գիւղի գպրոցի վարժուհին։ Մի շվեդուհի աղջիկների մի որբանոց է պահում (գպրոց՝ մէկ ուսուցչով), ուր պատսպարւած որբուհիների թիւը 13 է։ Բնակիչների մօտ կէսը դրագէտ է։

Հա՛ֆ'թվանի Ս. Գէորգ եկեղեցումն (2 քահանա, երբորդը գաղթական, անպաշտօն) է հոչակաւոր Պերիկ վանքից բերւած Բարդուղիմէոս առաքեալի տջը, որ էակնդէմիայի կամ երաշտի ժամանակ թափորով շըջեցնում են։ Ալդտեղ կա և՛ մի հին աւետարան, որին

Համբուրելու են զալիս մանուկ ուխտաւորները գլխաւորապէս։ Գիւղիշուրը կա երեք ուխտատեղի—Մարիամ-Աստւածածին, ուր յաճախում են գլխաւորապէս դէմքներին վէրք ունեցող կանալք և մանուկները, Ա. Պօղոս և Ա. Թագէոս, որ ջերմախտի բուժիչների հոչակ ունեն։

Գիւղն իր հողերով 10 տարուց իվեր խալիսաւ է (սեփական. «խալիսա»՝ բառն իսկապէս նշանակում է տէրունական)։ Հողից օդտըւում են բնիկներն, իսկ գաղթականները բաժին չունեն։ Հողը բերք է տալիս մէկին 2—10. գա ապրուստի գլխաւոր աղբիւրը չէ, որպէս և միւս գիւղերում։ սալմաստեցին իր հացը ճարում է պանդխտութեամբ՝ դիմելով Ոուսաստան։ Հա՛ֆ՝ թվանցիների գլխաւոր սպանդխտավայրը Թիֆլիզն է։ Մեր պիճակագրութիւնը կազմելու ժամանակ 2314 բնակիչ ունեցող Հա՛ֆ՝ թվանից 597 հոգի պանդըխտութեան մէջ էին, այսինքն բնակիչների  $\frac{1}{4}$ -ից աւելին . . . Սա մի սոսկալի թիւ է, բայց և ախպէս մեծ տոկոս չէ՝ համեմատած միքանի ուրիշ գիւղերի հետ . . .

ՓԱ. ՑԱ. ԶՈՒ. ԻԿ

Այս գիւղն, ինչպէս լալտնի է, մեր տա-

դանտաւոր՝ վիպասան՝ Յաֆֆիի Տննդավայրն  
է։ Գտնւում է Դիլիմանից 3<sup>1</sup>/<sub>2</sub> վերստ (կեն-  
տրոնից-կենտրոն) հեռաւորութեան վրա դեպ  
արևելք։ «Փայաջուկ» (թուրքերն արտա-  
սանում են «Փայաջիլ») բառը բաղկացած է  
թուրքերէն «փայա» (գոմ, գէզ) և «ջըղ»  
(փափկացած՝ «ջիք» կամ «ջիլ» — կրծտած ձեն)  
է «ջըլըղ» կամ «չիլըղ» վերջաւորութեան, որ  
համապատասխանում է հալերէն «պաննոց»  
բարդ վերջաւորութեան) մասերից։ «Ջըղ» կամ  
«ջուկ» վերջաւորութիւնն ունեն Սալմասի  
և՝ միքանի ուրիշ գիւղեր — Բախճաջուկ, Զե-  
ւաջուկ, Մուղանջըղ ևալլն։ Պատմում են,  
թէ մի նշանաւոր խան եկել՝ բնակւել է Հա՛ֆ'-  
թվանից արևելք գտնւող բլրի մօտ և ալդ-  
տեղը կոչել Բութամին (թուրքերէն՝ բիթ-  
մաղ — «գոյանալ» բառից). ալդ խանի գոմերը  
եղել են Փայաջուկի տեղը։ Միւս գիւղացիներըն  
ալդ գիւղի բնակիչներին անպիտոն և  
կուարար համարելով՝ տառւմ են «դուդըլ»  
(«կորիր» — ձայնարկութիւն) է, որ գործ է  
ածւում շներին հեռացնելու համար), որ մի-  
ևնոյն է, թէ փայաջուկցիները շուն են։  
«Գիւղում կա երկդասեան-երկսեռ դպրոց,  
ուր ալստարի դաստաննդում էին 4 ռւսաւ-  
ցիչ (մէկը և՛ Հա՛ֆ'թվան դասեր ունէր) և 1

ուսուցչուհի, աշակերտ-աշակերտուհիների թիւ-  
բան էր մօտաւորապէս 100 : Դպրոցի շենքը  
նոր է, լարմար, 1904 թւին կառուցւած տե-  
ղացի Մանասերեան եղբայրների ծախքով:  
Դպրոցն ունի բաւական կոկիկ թատերասրահ  
և Ծաֆֆի անունով մի գրադարան՝ մօտ 1000  
կտոր գրքով, ստանում է և՛ մի-երկու  
պարբերական հրատարակութիւն: Զնայած  
դրան՝ գիւղում սաստիկ տարածւած է օղե-  
վաճառութիւնը. նոյնիսկ գիւղի քահանանե-  
րից մինը—տէր Աւետիքը—պարապւում է ալդ  
ստորացուցիչ առևտրով . . . Քահանան «միկի-  
տանչի» . . .

Դիւզն «աղալլը» (աղալլի, կալւածատէրի  
սեփականութիւն) է. բերքի <sup>1/7</sup> մասը աղա-  
լինն է. բերքը բերում է մէկին 3—7:

Դիւզի տակով անցնում է Հա՛ր՝ զաւ առուն,  
որ գոյանում է Զօլա գետից գուրս բերած  
ջրանցքի, Բութա՞մին բլրի ստորոտների ճահ-  
ճալին (հանքալին) աղբիւրների և երբեմն  
գործող Դերիկի-ջրի ու Դերա՛լը հեղեղատի  
ջրերից: Ալդ առւի եզրին կա մի աղբիւր, որի  
ջուրը գործ են ածում խմելու համար:

Դիւզը զուտ հայաբնակ է, 294 տնով,  
1478 բնակչով, որոնցից պահպխութեան  
մէջ է գտնւում 359 հոգի:

ՄԱՀԱԿԱՎՈՐ

Այս գիւղը գտնվում է Զօլա գետի աջ տփից  
1 վերստ, Դիլիմանից 8 վերստ հեռու, «Ղա-  
ռընը-Եարըդ» բլրի մօտ: «Մահակավոր» պարս-  
կերէն «մարհամ» (ոպեղանի) բառի ազաւա-  
ղումն է թուրքերէնում: Իսկ թէ ինչու է  
գիւղն այդպէս կոչւում, գիւղացիներն ասում  
են, թէ ալդտեղ է եղել վերը լիշտ խտնի  
(տես՝ Փալաջուկ) գեղատունը: Գուցէ և՛ իր  
առողջաբար կլիման է պատճառն այդպէս  
կոչւելուն: Մի ժամանակ այս գիւղում ընակ-  
ւելիս են եղել և՛ քիւրդեր, իսկ այժմ գուտ  
հայաբնակ է (մի ոռւս կին կա) և ունի 185  
տուն՝ 1048 բնակչով, որից պանդխտութեան  
մէջ է գտնվում 174 հոգի:

Կրթական գործն ալստեղ սահմանափակ-  
ւում մի երկդասեան-երկսեռ դպրոցով, որ  
քիչ-շատ կանոնաւորւած է միայն 1904 թը-  
ւականից և ալստարի ունէր 2 ուսուցիչ,  
1 ուսուցչի, 82 աշակերտ-աշակերտուհի՝  
(54 տղա, 28 աղջիկ): Դպրոցն ունի գրադա-  
րանի պէս մի բան՝ 200 կտոր գրքով:

Ալստեղ ևս գինեմոլութիւնը բաւական  
տարածւած է, որպէս ընդհանրապէս ամբողջ  
Սալմաստում. չնայած՝ տեղացիները համարեա-  
չունեն սեփական այգիներ, թուրքերինն էլ

քիչ է, բայց Ուրմիի գաւառուց խաղող է առնում և գինի պատրաստում գըեթէ մեծամասնութիւնը:

Գիւղն իր հողերով «խալիսա» է, բայց ունի և՛ մի աղա, որին վճարում են բերքի <sup>1/8</sup>-ը: Ապրուստի գլխաւոր աղբիւրը պանդխտելն է. գլխաւոր պանդխտավայրերն են Թիֆլիզ, Բաթում և կովկասեան երկաթուղու կալարանները:

Որպէս քիւրդաբնակ վայրերին մօտիկ գիւղ՝ Մա՛հ' լ'ա՛մը լաճախ է ենթարկւում քիւրդերի լարձակումներին. քիւրդերի ահից մա՛հ' լ'ա՛մցիները չեն կարողանում օգտւել նօյնիսկ իրանցից երկու վերստաչափ հեռու աղբիւրի անուշահամ ջրից, որ կարող են գիւղը բերել խողովակներով, և գործ են ածում Զօլտ գետից հանած ջրանցքի ջռւրը:

Գիւղը երեք ուխտատեղի ունի. — Ա. Գէսորդ, Վարդան Զօրավար և Վանքեր: Վարդան Զօրավարը ջերմախտ բուժող է համարւում: «Վանքեր» կոչողը մի ըլուր է, որի վրա երկու աւերակ շինւածքի հետքերը միայն կան, և պատերի քարերից մի կոյտ է շինւած շուրջանակի, մէջտեղը քիչ բաց, ուր զետեղւած է մի խաչքար տուանց արձանագրութեան որևէ հետքի:

## ՍԱ. Ի Բ Ա.

Սալմաստեցիներն ալս գիւղն անւանում  
են «Սաւրի-կերդ» (Սաւրի-գիւղ). սա Ռաֆֆիի  
«Խաչագողի լիշտակարանը» վեպի. Սաւրի-  
գեղն է, խաչագողների հայրենիքը։ Ըստ տե-  
ղացինների ասութեան՝ Սաւրան առաջ կոչ-  
ւելիս է եղել «Նըզըլ-ք'ա'ն'դ'» (թուրքերէն՝  
ոսկի-գիւղ), բայց նա'դիր-շահը (թէ Ֆա'թ'-  
Ա'լի-շահը, ճիշտը չգիտեն) գալով Սալմաստ՝  
բարձրացել է Սաւրայից  $3\frac{1}{4}$  վերստ հեռու  
գտնւող Ս. Յովհաննէս վանքի բլուրը և հի-  
անալով գիւղի երթէ գեղեցիկ (այնքան գե-  
ղեցկադիր էլ չէ) դիրքով՝ բացագանչել է.

(Ք'ա'զ'դըմ իրան-Թուրանը,

Զա'ն'նա'թ' գ'օ'ր'դըմ ոօվրանը.—

Երջեցի իրան-Թուրանը,

Իրախտ տեստ ետանի ),

ուստի դրանից յետո գիւղը կոչւել է Սօվրա  
( յետո ), ապա դարձել է Սաւրա։ Սա գըտ-  
նւում է Դիլիմանից  $5\frac{2}{3}$  վերստ հեռաւորաւ-  
թեան վրա՝ համարեած դէպ արևմուտք։ Բը-  
նակիչների մեծ մասը թուրք է ( մոտ 300  
տուն )։ Հայերը, որ բռնում են գիւղի բարձր  
մասը, բազկացած են 168 տնից ( 3-ը կաթո-  
լիկ )՝ 815 բնակչով ( 7-ը կաթոլիկ ), որոնցից

պանդիստութեան մէջ է 354 հոգի... Գիւղի տղամարդը հազւագիւտ է, եղածներն էլ մեծ մասամբ գաղթականներից են՝ լինում կամ ծերերեր (գաղթական տարրը բնիկներից աւելի քիչ թւով է պանդուխտներ տալիս ընդհանրապէս)... Գլխաւոր պանդիստավալըն Ռօստով է (Թօնի վրա):

Դպրոցական գործն այստեղ կաղում է շը նորհիւ այն հանգամանքի, որ գիւղացիները չտեսնւած-չլսւած աստիճանի շահասէր են. դպրոցին ոչ միայն ոչմի նպաստ չեն տալիս, այլև յաճախ, երբ դրսից եկած օգնութեամբ գոյութիւն է ունենում դպրոցը, նրանք բողոքում են, մանուկներին համարեած ուժով են դպրոց ուղարկել տալիս ուսուցիչներն ու դըրսեցի մարդիկ, գլխաւորապէս «Թաշնակցական կուսակցութեան» պատկանող անձնաւորութիւնները (որոնց ըստ մեծի մասին պարտական է Սալմաստն իր կըթական, եթէ չասենք ուրիշ, գործով... Վերջերս մի փոքր անտարբերութիւն է երեւում, բայց սալմաստեցին ում չի անտարբեր դարձնիլ...): Սաւրայի դպրոցն ալստարի բաղկացած էր չորս բաժանմունքից, ունէր 2 ուսուցիչ, 1 ուսուցչուհի և 51 աշակերտ-աշակերտուհի (կարող էր 80-ից աւելի լինել, տարւա սկզ-

բում 67 հոգի էին, ապա հետզետէ նւազեցին...): Կառավարւում էր դրսից (Թօստօվից) եկած նպաստով: Նէնքը հին և միանգամայն անպէտք է՝ բաղկացած երկու խուցերից: Ունի գրադարանի պէս մի բան՝ բաղկացած 300 կտոր դրքերից: Բնակիչների մօտ կէսը գրագէտ է: Կաթոլիկ մի վանք կա, որի վանահայրը հայ-կաթոլիկ մի քահանու է. վանքը պահում է գլուոցի պէս մի բան, որ այստարի ունէր 14 աշակերտ 1 ուսուցչով (լուսաւորչական):

Գիւղը «խալիսա» է, բայց աղալին տալիս են բերքի <sup>1/10</sup>-ը:

Գիւղի միջով է Հոսում Գերիկի-Զուր կոչող վճիտ մեծ առուն, որ ամառները ցամաքում է Հին-Քաղաքի հողերում, և նրան փոխարինում է Զօլալից հանած ջրանցքը:

Գիւղի տներում երեք ուխտատեղի կա, որոնցից մէկն են շատ լաճախում չերմախտ ունեցողները: Այդ «սուրբ»-երից մէկը երեացել է տան պառաւին ու սպառնացել, որ ամենքին կկոտորի, եթէ իրան լաւ պատիւ ըլտան, ուստի տանտէրն ստիպւած է ամեն շաբաթ երեկո և կիրակի օրերը մոմն անշէջ վառ պահել: Սուրբն արգելել է այդ տանը շուն պահել, թէ չէ վերջինս կկատաղի:

## ՀԻՆ-ՔԱՂԱՔ

Թուրքերն անւանում են Ք'օ՛հ'նա՛-շլ՛հա՛ր',  
հայերը՝ «Հին-Քաղաք» (որ թուրքերէնի բա-  
ռացի թարգմանութիւնն է) կամ ուղղակի  
«Քաղաք»։ Հնումն ալդ աւանը (որ քաղաք  
կոչւելու անիրաւ պրետենզիա ունի և առաջ  
եղել է գաւառի պաշտօնավայրը, որպէս ալժմ  
Դիլիմանը) կոչւելիս է եղել Սալմաստ, որի  
անունն անցել է ամբողջ գաւառին. իսկ ա-  
ւելի հնումն, ասում են, անւանելիս են  
եղել (Ել՛հա՛ր'-Սա՛րահի-առաւօտեան, վա-  
ղուցւա, հին քաղաք) որ նոյն միտքն ունի,  
ինչ ալժմեան կոչումը։ Սա գտնւում է Դիլի-  
մանից  $\frac{8^2}{3}$  վերստ հեռաւորութեան վրա.  
բաղկացած է մօտ 800 տուն թուրքերից, մօտ  
50 տուն հրեաներից և 127 տուն հայերից (2-ը  
բողոքական, 1-ը կաթոլիկ)։ Հայերի թիւը  
868 է, որից պանդիստութեան մէջ է  
գտնւում 192 հոգի։ Այրի կանանց թիւը (որ-  
պէս ընդհանրապէս ամբողջ Սալմաստում)  
շատ մեծ է—46, իսկ տղամարդ 6 ալրի։  
Սատեղ գտնւում է մաքսատունը (Տաճ-  
կաստանից ներմուծւող ապրանքների համար)  
և թիւրքական գեսպանատունը։ Հինգշաբթի և  
ուրբաթ օրերը «բաղար»(տօնավաճառ) է լինում։

Կրթական գործն այստեղ հետևեալ անմը-  
խիթար պատկերն է ներկայացնում. Հայերն  
ունեն միդասեան դպրոց 1 ուսուցչով, 59 աշա-  
կերտով և 2 աշակերտուհով, մինչդեռ կա-  
րսդ էին դպրոց լաճախել առնւազն 81 աշա-  
կերտ (7-14 տարեկան հաշւած) և 39 աշա-  
կերտուհի... Դպրոցի նիւթականը նախանձե-  
լի լինելուց սաստիկ հեռու է, շենքը մու-  
րացկանի բնակութեանն անգամ անյարմար.  
աշակերտները գետնին դցած տախտակների  
վրա են նստում, իսկ դարնանը դրսում և  
գրում են ծնկների վրա . . . Բողոքա-  
կան (Մկրտչական) միսախօնարութիւնն ունի  
մի դպրոց, ուր այստարի ուսուցանում էին  
2 ուսուցչուհի—մէկը հայքողոքական, միւ-  
սը շվեյցարուհի. ուսանում էին 4 աշակերտ և  
8 աշակերտուհի<sup>1</sup>):

Այստեղ 1900 թւից գոյսւթիւն ունի «Գ.  
Զանշեան» անունով մի գրադարան 600 հա-  
տոր հայերէն և օտարլեզուեան գրքերով.  
ստանում է միքանի պարբերական հրատա-  
րակութիւններ, բայց օգտողների թիւն ան-  
նշան է: Նվեյցարական մի ընկերութիւն եր-  
կու տարուց իվեր պահում է մի որբանոց  
<sup>1)</sup> Յունիսի մկրտին այդ միսախօնարութիւնը փո-  
խադրւեց Հայքի թվանու

դպրոց, որ ունի մի շվեյցարուհի խնամակալ,  
10 պատսպարւած մանուկներ (ոչ բոլորը որը),  
և 15-20 երեխա դրսից լաճախում է դպրոց,  
գլխաւորապէս աղջիկներ : 20 տարուց իվեր  
բողոքական կրօնական «Պօրտ» ընկերութիւնն  
այստեղ ունեցել է սեփական շինութիւն,  
քարոզիչ, դպրոց և ուսուցիչ, բայց մինչեւ  
այժմ ոչինչ չէ արել: Յիշելու է, որ հայ քա-  
հանան և իր ընկեցիկ որդին գրբացութեամբ  
են պարապւում :

Ա. Քօհօլավաճառների թիւն է 19:

Հողատիրութեան տեսակը «խալիսա-թիուլ»  
է, ալսինքն հողը սեփական է, բայց մի որոշ  
հարկ են տալիս՝ թուրքերի կրօնական մեծ  
տօներին կերակուրների վրա գործածելու նը-  
պատակով: Տուրքը տալիս են ոչ բերքով, որ-  
պէս Սալմաստի միւս գիւղերում, այլ փողով,  
ընդամենը 350 թուման և 20 թուման ա-  
ղալին օրէնքի գօրութիւն ստացած կաշառք՝  
«թա՛րիֆ» (արաբերէն՝ թլարօֆ—նւէր) ան-  
ւան տակ...

Օգտւում են Դերիկի-Զուր առւից և մի  
ք'ա՛հ'ըէզից:

Ուխտատեղիներն են—աւանից 2 վերստ  
գէպի հարաւ մի բարձր բլրի վրա գտնւող ս.  
Յովհաննէս և  $1\frac{1}{2}$  վերստ հեռու ս. Վառվառ

մատուռները։ Հայ եկեղեցում զանգահարելու  
իրաւունք չկա, ժողովուրդն ինքը պէտք է  
գուշակի ժամերգութեան ժամանակը... Կա-  
թողիկներն ունեն մի եկեղեցի «Մար-Ետղուք»  
(ասորերէն՝ Հալք-Յակովը—սուրբ-Յակովը) ա-  
նունով, ուր կա «զգաստարան» կոչւող մի խո-  
րան, որտեղ բերում են «գիւտհարներին» (խե-  
լագարներին) բժշկւելու։ Եկեղեցին պահում  
է մի հայ-կաթողիկ, սակայն ոչ քահանա կա,  
ոչ ժողովուրդ։ Թուրքերի «Իմամ-զադա՛» (ա-  
ռաջնորդազն, առաքելազն) կոչւող մէսջիդը  
(պաշտաման տեղ, եկեղեցի) ծառայում է իր-  
ուև «քա՛ս'տ'» (փակ, ապաստան) մտնելու (յան-  
ցաւորին անձեռնմխելի դառնալու և պատժից  
ազատելու) տեղ։

Աւանից <sup>2/3</sup> վերստ դէպի Հիւսիս-արևելք  
գտնւում է Բաֆֆիի «Կալծեր»-ում Նկարա-  
գրւած հռչակաւոր արաբական մինարէթը։

### Դ.Ա.Ա.Ա.Ա.Բ

Սա մի փոքր գիւղ է, զուտ հայաբնակ,  
Սալմաստի բոլոր գիւղերի մէջ ամենամաքուրն  
ու գեղեցիկը, ոչ դիրքով, այլ տներով, փողոց-  
ներով, ու բարեկեցութեամբ առաջինը։ Գտնը-  
ւում է Թիլիմանից <sup>49/10</sup> վերստ հեռու դէպ  
արևելա-արևելա-հիւսիս, Զօլալի ձախ ափին։

Տեղացիները գիւղի անունը վերլուծում են  
ալսպէս—«ղալըա՛» (բերդ) և «հա՛սար» (պա-  
րիսպ), բայց մենք կարծում ենք, որ այդ բա-  
ցատրութիւնը սխալ է, մանաւանդ որ ոչմի  
պարսպով պատաժ չէ, այլ ծագած ենք հա-  
մարում «ղալըա՛» և «սա՛ր» (պարսկ՝ գլուխ)՝  
բառերից։ Տների թիւն է 121, բնակիչ 684  
հոգի, որից պանդխտութեան մէջ են 75  
տղամարդ և 25 կին, ընդամենը 100 հոգի։  
Դիմաւոր պանդխտավայրը Թիֆլիզ է։

Գիւղը 25 տարուց իվեր ունի դպրոց,  
որ այժմ բաղկացած է 4 բաժանմունքից (երկ-  
սեռ), ուր դասաւանդում են 3 ուսուցիչ, 1  
ուսուցչուհի։ աշակերտ-աշակերտուհի մօտ  
100 հոգի։ Դպրոցին կից գտնւում է «Ար-  
ծրունի» գրադարանը մօտ 1300 կտոր գրքով,  
որ ստանում է և՛ միքանի պարբերական հը-  
րատարակութիւններ։ Բնակիչների մօտ կէսը  
գրագէտ է։ 15 տարուց իվեր ալստեղ գո-  
լութիւն ունի «Հայուհեաց Շաքի Բարե-  
գործական Ընկերութիւն»-ը, որ իր փոքրիկ  
ուժերի համեմատ վճարում է դպրոցի ու-  
սուցչուհու ոռմիկը և դպրոցին տալիս է  
մասնաւոր նպաստ։

Հողատիրութեան տեսակը «խալիսա» է։ Հո-  
ղը բերք է տալիս մէկին 4-12։ Գործ են ա-

ծում երկու փոքրիկ աղբիւրների և Հա՛յր՝ զաւառիւ ջուրը, որ անցնում է գիւղի հիջով:

Գիւղի մօտ կա 2 ուխտատեղի — «Յուրա՛լա՛ն-դա՛ր», որ տեղացիների ասելով՝ իրանց եկեղեցու քոլըն է, և «Մար-Գ'օվա՛ր՝ գիզ» (ասորերէն՝ Հայր — սուրբ — Գէորգ), որոնց բաճախում են ջերմախտաւորներն առանց ազգութեան և կրօնի խտրութեան:

### ՍԱՐԱՄԵՐԻԿ

«Սարամերիկ» անունը քիւրդերէն է, որ նշանակում է «ճահճի-գլուխ» («սա՛ր») — քիւրդերէն և պարսկերէն — գլուխ, «մերկ», — քիւրդերէն՝ ճահճուտ, արօտատեղի ևս). սա գտնըւում է Գիլիմանից  $8\frac{1}{4}$  վերստ Հեռաւքութեան վրա, հիւսիսային լեռների ստորոտում: Ազգաբնակչութիւնը բաղկացած է 30 տուն թուրքերից և 100 տուն հայերից. Հայերի թիւը 634 է, որից պանդխտութեան մէջ է 147 հոգի:

Գիւղի կրթական գործն աննախանձելի է. Դպրոց չկա, եթէ ինկատի չառնենք՝ այն խալիֆայարանն, ուր իլրթէ սովորում են մօտ 30 աշակերտ, որից միքանիսը շըջակա գիւղերիցն են: Գրագէտների թիւը հասնում է տղամարդկանց թւի մօտ  $\frac{1}{4}$  մասին: Քահան-

նան լայտնի գրքաց է։ Ալքօհօլավաճառութիւնը սաստիկ զարգացած է, մանաւանդալիի կանանց մէջ։

Հողատիրութեան տեսակն աղալրդ է. աղալին տալիս են բերքի  $\frac{1}{3}$ -ը։ Հողի բերքը մէկին 2—8 է։ Օգտւում են ճահճալին աղբիւրներից և գարնանը գործող Գերա՛լը հեղեղատից։

### Ս Ա Ռ Ն Ա.

«Սառնա» անունը գիւղի տէրտէրը ծագած է համարում «սառն ա» (սառն է) բառերից՝ օդի զովութեան պատճառով. բայց դժւար թէ ուղիղ լինի ալդ բացատրութիւնը, մանաւանդ որ սալմաստեցու բերանում է օժանդակ բայն ա-ի չէ փոխում, որպէս մեր շատ գաւառներում, այլ գառնում է ի։ Սա զուտ հալաբնակ է, որ Թուսաստան գաղթելուց (1828 թ.) առաջ բաւական մեծ գիւղ է եղել (երեք եկեղեցիները պարզ ապացուց են), ալժմ ունի միայն 104 տուն՝ 543 բնակչով, որոնցից պանդխտութեան մէջ (գլխաւորապէս Թիֆլիզ) են 187 հոգի։ Գտնուում է Զօլալի աջ կողմը, Թիֆլիմանից  $7\frac{1}{2}$  վերստ հեռու։

Ալստեղ կա միդասեան-երկսեռ դպրոց 1 ուսուցչով և 30 աշակերտ-աշակերտուհինե-

ըով։ Տղամարդկանց մօտ  $\frac{1}{4}$ -ը գրագէտ է։ Հողն աղալըդ է։ բերքի  $\frac{1}{3}$  մասը աղալինն է։ Գործածում են Զօլալից հանած ջրանցքի ջռւրը։

Ուխտատեղիներն են—գիւղի եկեղեցիներից մինը և ս. Յովհաննէս մատուռը, որը խոսրովացի ասորիներն անւանում են «Մար-Իւխաննա» (հալր—սուրբ—Յովհաննէս) և աշխատել ու աշխատում են խլել հայերից, մինչդեռ ալդտեղ ասորու հետք չկա և չէ եղել երբէք։ Ալդտեղ ուխտ են գնում գլխաւորապէս ջերմախտաւորները։

Որովհետեւ ալդ գիւղը գտնւում է քիւրդաբնակ լեռների ստորոտում, ուստի յաճախ է ենթարկւում քիւրդերի յարձակման, որպէս և՝ հարեւան գիւղերը—Մա՛հ'լա՛մ, Զեա՛զու՛կ և ալլն և հակառակ լեռների ստորոտների գիւղերը—Մարամերիկ, Վա՛ր՛դան, Ալան և Ըսլի-աւա։

Ա. Խ Տ. Խ Ա. Ն Ա.

«Ախտա՛խանա՛» բառը պարսկերէն նշանակում է «ներքինացրած ձիերի տեղ»։ ասում են, թէ մի ժամանակ ալդ գիւղն ունեցել է մի աղա, որին բնակիչները վճարելիս են եղել գարու և լարդի տուրք աղալի ձիերի համար,

ալդ պատճառով գիւղն ալդալէս է կոչւել.  
ուրիշներն էլ ասում են, թէ Բութա՛մինի  
խանի (տե՛ս՝ «Փայաջուկ») ձիերն ալդտեղ են ե-  
ղել պահւելիս. իսկ գիւղի քահանան «Ախտախա-  
նա» բառը համարում է իբրթէ պարսկերէն  
(<sup>o</sup>) «բա՛ֆտա՛ր' խանա՛» բառի ազաւաղումը, որ  
նշանակում է «իջևան» կամ «մաքսատուն»։ Աս  
գտնւում է Զօլալի տջ կողմը, Դիլիմանից 7<sup>1</sup>/<sub>2</sub>  
վերստ հեռու, մի ճահճուտում։ Ազգաբնակու-  
թիւնը բազկացած է մօտ 100 տուն թուրքից  
և 60 տուն հայից. Հայերի թիւը 305 է,  
որից պանդխօսութեան մէջ է 100 հոգի։

Այստեղ կա միդասեան-երկսեռ գպրոց 1  
ուսուցչով և մօտ 30 աշակերտ-աշակերտու-  
հիներով։

Գրագիտութիւնը մուտք է գործել միայն  
երեխաների մէջ, մեծահասակները քիչ բա-  
ցառութեամբ անգրագէտ են։

Հողը «խալիսա» է, իսկ տներն ազալը և  
մէկի փոխարէն քսանի չափ աղաների են պատ-  
կանում։

Օգտւում են Զօլալից հանած ջրանցքի և  
Փրչաւուշ բլրի ստորոտում գտնւող հանքալին  
աղբիւրների ջրերից։

Կառավարութիւնն որգելում է այս գիւ-  
ղում զանգակ խփել՝ աղօթողներին եկեղեցի

Հրաւիրելու համար, որպէսզի չպղծւի մռւսալ՝ մանի լսողութիւնը քրիստոնեալի զանգի ձայնից, ուստի տախտակ են գործ ածում ալդ նպատակով...

### Դ. Զ. Բ. Լ. Զ. Ա.

«Ղզըլջա» թուրքերէն նշանակում է «ոսկու-չափ», ոսկու-պէս, ոսկէ» իր իբրթէ լառութեան պատճառով, թէև միւս գիւղերից ոչ միայն լաւ չէ, այլ համեմատաբար վատ է, ցածրադիր և ճահճային տեղ է գտնվում, Զօլալի աջ ափին, Ս.խտախանալից ոչ հեռու ( $1\frac{1}{2}$  վերստ. Դիլիմանից 2 վերստ): Մինչև 1828 թւի գաղթականութիւնը զուտ հայաբնակ է եղել, իսկ այժմ մօտ 90 տուն թուրք կա և 47 տուն հայ. հայերի թիւը 262 է, որոնցից 22 հոգի պանդխտութեան մէջ:

Գիւղը դպրոց չունի, եթէ չհաշւենք մի տուն, ուր ժողովւած են 22 տրական սեռի մանուկներ, որոնց իբրթէ դաստւանդում է մի տաճկաստանցի ալ'քօհօլամոլ խալիֆա՝ տալեկան 40 թուման (մօտ 60 բուրլի) ոռնկով... Տղամարդկանց մօտ  $\frac{1}{5}$  մասը գրագէտ է, հաշւած և՛ մանուկներին:

Հողն աղալըդ է. բերքի ուղիղ կէսն աղայինն է:

Ալստեղ ևս զանդահարելն արգելւած է:

## ՎԱՐԴԱՆ

Բնիկների ասելով՝ գիւղը կոչւում է «Վարդան» այն պատճառով, որ շինել է Վարդան զօրավարը... Սա գտնւում է հիւսիսալին լեռների Փեշերին, Սարամերիկից  $1\frac{1}{2}$  վերստ դեպ արևմուտք, Դիլիմանից  $8\frac{1}{2}$  վերստ հեռու։ Ազգաբնակչութիւնը բաղկացած է մոտ 130 տուն թուրքերից և 27 տուն հայերից. Հայերի թիւը 194 է, որոնցից պանդխտութեան մէջ 38 հոգի։ Այս գիւղը հետզհետէ դատարկւում է հայերից՝ քիւրդերի յաճախակի յարձակումների պատճառով. Հէնց վերջերս (մօտ 3 տարւա ընթացքում) 24 տուն ցրւել է գաւառու կենտրոնական գիւղերը—Փալաջուկ, Հա՛ֆ'թվան, Սաւրա, Ք'ա՛լ'ա՛շան, ևալլն։

Վարդանում ոչ մի գրադէտ չկա բացի հինգ երեխաներից, որոնք սովորում են Սարամերիկի խալիֆալի մօտ։ Եկեղեցի կա, բայց քահանակ չունի, Սարամերիկինն է երբեմն ալցելում. այստեղ ևս զանգահարութիւնն արգելւած է։

Մանր-մունը «սրբեր»-ով հարուստ է այս գիւղը. արևմտեան կողմը բլրի վրա կա ս. Հախ-Նազար (ճշմարիտ-ուխտ) աւերակ մա-

տուռը, շուրջը հին գերեզմանատուն. արձանագրութիւնները եղծւած են. Այս սրբի մասին պատմում են, թէ թուրքերը նրա մարմինը շրջել են դէպի իրանց աղօթարանը՝ համարելով նրան մահմէդական, բայց միւս օրը գնացել՝ տեսել են, որ սուրբը նորից երեսը դարձրել է դէպի հայոց աղօթարանը, ուստի համոզւել են, որ ս. Հախ-Նազարը քրիստոնեա է, և ալես ձեռ չեն տւել. ասողներ կան, թէ շատ անգամ են տեսել այդ սրբին ճանապարհներով անցնելիս՝ վառած մոմը ձեռին բռնած։ Դրանից քիչ դէպի հիւսիս գըտնւում է «Գրդասար» անունով մի ուրիշ ուխտատելի, որի շուրջը կան աւերակների հետքեր, թոնիրներ (նրանցում գտնվող մոխրակուտերից գուցէ կարելի է ենթադրել, թէ կրակապաշտութեան շրջանից մնացորդներ են). ասում են, թէ երբեմն-երբեմն հին կահկարասիներ և տնալին իրեղէններ են երեւում ալգտեղ։ Գիւղի հիւսիս-արևելեան կողմը գտնվում է մի քարակոլտ, որ ուխտատեղի է. ալգտեղ մի հանքային աղբիւր կա, ուր լողանալով՝ բժշկութիւն են գտնում ջերմախտաւորները։

Այստարի գաճի մի հանք է գտնւած գիւղի մօտ։

Հողատիրութեան ձևն աղալըդ է, տղալին  
վճարում են բերքի  $\frac{1}{3}$  մասը. Հողը բերք է  
տալիս մէկին 3—9. օգոտում են հինգ քաշ՝ Հ-  
րէզների, Երկու աղբիւրների և Դերա՛լը հեղե-  
ղատի ջրերից:

### Խ Ա Ս Բ Ո Վ Ա.

Սա Դիլիմանից 4 վերստ հեռու ասորական  
մի բաւական մեծ գիւղ է, ուր հայտների թիւը  
36 է (3-ը կաթոլիկ)՝ 148 բնակչով, որոնցից  
21 հոգի օտարութեան մէջ է դտնւում.  
ասորիները մօտ 400 տուն են, քիւրդերը 10  
տուն։ Այստեղ կա ֆրանսիական մի կաթոլիկ  
միաբանութիւն (վարդապետներից մէկը ֆրան-  
սիացի, մէկը վրացի, միւսներն ասորիներ). և  
մի կուսանոց։ Տեղացիների ասելով՝ հնումն  
այս գիւղը գուտ հայաբնակ է եղել ասորի-  
ները 1828 թւի դադիվականութիւնից լեռո  
են եկել Զուլամերկից։ Դիւզի քահանալի խօս-  
քով՝ աւանդութիւնն ասում է, թէ ալդ գիւ-  
ղը շինել է հայոց Խոսրով թագավորը և կո-  
չել Խոսրովաբադ։ Հաւանական է, որ Խոս-  
րով և աւա (աւադ, աբադ — շէն) բառերից լինի  
յամենալին դէպս։

Հայերը դպրոց չունեն. ֆրանսիական միս-  
սիօնարութիւնն ունի դպրոց, ուր սովորում

են և՝ հայ մանուկները։ Սոսրի կաթոլիկ մի-  
աբանութիւնը (գլուխն արքեպիսկոպոս) նոյն-  
պէս մի դպրոց ունի անծրագիր, ուր դա-  
սաւանդում է բարձրագոյն կրթութիւն  
ունեցող մի քահանա։ Հայերի մէջ հասա-  
կաւոր գրագէտների թիւը 30 է։

Հայերի գլխաւոր զբաղմունքն օղեվաճառու-  
թիւնն է։

Հողը պատկանում է ֆրանսիական միսսիօ-  
նարութեան, որին վճարում են ըերքի <sup>1/8</sup> մասը։ Սակաւ հողը ըերք է տալիս 4—10,  
բայց գլխաւորապէս ծառալում է տիգեստա-  
նի համար։ Թաղէոս առաքեալի վանքն այս-  
տեղ մի այգի ունի, որ մօտ 100 տարւան  
նւէր է։

### Ը Ռ Ը Կ - Ա Կ Ա

«Ըորկ-տւա» քիւրգերէն նշանակում է  
«ջգրու շէն» (ջգրաշէն)։ Հաջի անունով մէ-  
կը մի ուրիշ աղալից ուժով խլել և նրա ջրգ-  
րու շէնացրել է այդ հողն, ուստի կոչւել է  
Ըորկ-տւա։ Դա մի փոքրիկ շէն է Սարտմե-  
րիկի մօտ ( $1\frac{1}{4}$  վերստ, Գիլիմանից 9 վերստ  
հեռու) և ունի 14 տուն հայ՝ 132 բնակչով,  
որից պանդիստութեան մէջ է 34 հոգի։  
Թուրք 35 տուն է։ Գիւղացիները շատ աղ-

քատ են հողի սակաւութեան և մանաւանդ  
քիւրդերի ասպատակութիւնների պատճառով:

Գիւղում երեք գրագէտ կա ընդամենը:

Հողատիրութեան ձևն աղալըդէ, նոյն պալ-  
մաններով, ինչ որ Աարամերիկը: Օգտուում  
են մի ք'ա՛հ'ըէզից և Դերա՛լ'ը հեղեղատի ջրից:

### Ք. Ա. Լ. Ա. Շ Ա. Ն

«Ք'ա՛լ'ա՛շ'շ'» քիւրդերէն «քաջ» ասել է. իբր-  
թէ գիւղացինների քաջութեան պատճառով է  
գիւղն ալդպէս կոչւել, թէև ալժմ աչքի չեն  
ընկնում իրանց քաջութեամբ: Ուրիշներն էլ  
ասում են, թէ գիւղի անունը ծագում է  
թուրքերէն «ք'ա՛լ'» քառից, որ նշանակում է  
«արու գոմէշ», իբրթէ այն պատճառով, որ  
Բութամինի աղալի (տե՛ս՝ «Փալաջուկ») գո-  
մէշներն այդտեղ են եղել պահւելիս: Այս  
գիւղը գտնուում է Զօլովի աջ ափից  $\frac{3}{4}$ , իսկ  
Դիլիմանից  $\frac{3^2}{3}$  վերստ հեռավորութեան  
վրա: Բնիկ հալերը 1828 թ. Ռուսաստան  
(Երևանի նահանգը) գաղթելով, գիւղը բոլո-  
րովին գտարկւել է և բռնւել թուրքերից.  
ալժմեան հալերը բոլորը գաղթական են.  
Հին բնիկներից մնացել է մի հնօրեա գերեզմա-  
նատուն, ուր գամբարանների արձանագրու-  
թիւնները կամ հիմնովին եղծւել են, կտմ

անընթեռնելի են դարձել։ Հայ տների թիւը  
28 է՝ 130 բնակչով, որից պանդիտութեան  
մէջ է 18 հոգի. թուրք մօտ 80 տուն է, ա-  
սորի 2 տուն։

Գիւղն ունէր ալստարի մի խալիֆայական  
դպրոց, ուր սովորում էին 25 աշակերտ-ա-  
շակերտուհի (դրանց թւում են և՛ Ք'օ՛չա'-  
միշից ու Պրիշկից եկած մանուկները)։ Բացի  
ալստարի սովորող երեխաներից երկու գրա-  
դէտ կա գիւղում։

Հողատիրութեան տեսակն ազալը է. բեր-  
քի  $\frac{1}{3}$  մասն ազալինն է. Հայերից միմիայն  
երեք տուն է զբաղւում Հողագործութեամբ։  
0գտուում են Զօլալից Հանած ջրանցքից։

Գիւղացիներն աղքատ են։ Գիւղի քահա-  
նան հովուում է նաև՝ Ուրմիի գաւառի Ղա-  
րաբաղ գիւղի ժողովրդին (8 տուն), որ մի  
օրւա ճանապարհ հեռու է այդտեղից։

### Դ Բ Ի Շ Կ'

«Պրիշկ» նշանակում է «բրուտ»։ բնակիչ-  
ների հէնց այժմեան զբաղմունքն էլ բրտու-  
թիւնն է։ Այս գիւղը գտնւում է Զօլալի աջ  
ափին, Պիլիմանից 3 վերստ հեռու։ 1828 թ.  
գաղթականութիւնից առաջ 300 տնից աւելի  
ունեցող զուտ հայաբնակ գիւղ է եղել Պը-

ըիշկ'ը, գաղթ ականութիւնից յետո ալդտեղ մնացել է ընդամենը երեք տուն հալ (որ այժմ 9 տուն է գարձած), իսկ Գանձակի նահանգից թուրքերը գաղթել են ալդտեղ։ Այժմ հալ տների թիւը 24 է՝ 125 բնակչով, որից պանդխտութեան մէջ է 16 հոգի։ Թուրք տների թիւը մօտ 60 է։

Գրագէտ 5 հոգի կա։

Հողատիրութեան ձևն աղալը է. աղալին տրում է բերքի  $\frac{1}{3}$  մասը։ Օգտւում են Զօլալի ջրից։

Այս գիւղումն ես արգելւած է զանգահարութիւնը, տախտակ են խփում։

### ԱՅ Ա. Ն

«Ա՛լան» պարսկերէն նշանակում լաւ լսող, լայտնի, ականջը բանի, տեղեակ, բայց տեղացիներն ասում են, թէ գիւղի անունը ծագում է «ա՛լրան» բառից, որ «թան» է նշանակում, իբրթէ շատ կովեր ունենալու պատճառով։ Այս գիւղը գտնւում է հիւսիսալին լեռների փեշերին, մի զով տեղ, Դիլիմանից  $\frac{7}{4}$  վերստ հեռաւորութեան վրա։ Հայերը 21 տուն են՝ 115 բնակչով, որից պանդքատութեան մէջ է 32 մարդ։ Թուրք տների թիւը մօտ 100 է։ Այս գիւղի հայերն էլ սկսել

են տարեցտարի նւազել քիւրդերի թալանում. ների պատճառով: Այստեղ հայերն առանձին թաղում չեն ապրում, այլ թուրքերի հետ խառն:

Հայերի մէջ ոչմի գրագէտ չկա...

Հողատիրութեան տեսակն աղալը է. բերքի <sup>1/3</sup> մասն աղալինն է. հայերից միմիալն երկու ընտանիք է պարապւում հողագործութեամբ և ոչմի ալգի չունեն: Օգտւում են ՚Իերա՛լը հեղեղատի և 2 ք'ա՛շ'ը էղի ջրերից, որ գիշերը գիւղի տակ լճացնելով՝ առաւօտեան գործ են ածում. Ոաւրա տանող ճանապարհի մօտ կա մի փոքրիկ ճահճալին լրճակ, որ «Զաքօի-Փ'ոլ» է կոչւում. Նրա ջրից համարեա չեն օգտւում, անշարժ է, իսկ ամառը չորանում է:

Այս գիւղում ևս զանգահարութիւնն արգելւած է, որպէս նոյնիսկ տախտակ խրփելը. հովւում է Խոսրովայի քահանան երբեմնակի այցելութիւններով:

### Ք' 0' Զ Ա. Մ Ի Շ

«Ք' օ' չա՛միշ» անունը ծագում է թուրքերէն «ք' օ' չ'» (գաղթ, չու) բառից. ալգպէս կոչւելու պատճառը գիւղացիները բացատրում են նրանով, որ Բութա՛մինի աղան (տես՝ «Փա-

լաջուկից) ամառները գաղթելիս (քօչելիս) է եղել ալգտեղ. սակալն ինքը Բութամինն աւելի լարմար է իբր ամարանոց, քան Ք'օ՛չամիշը, որ գտնւում է փոսում, Զօլալի ափին, ՚Իլիմանից 3<sup>1</sup>/<sub>4</sub> վերստ հեռու։ Գիւղի քնակիչները հնումը գուցէ գաղթած են եղել ուրիշ տեղից, և գիւղն ալգպէս է կոչւել։ Ալստեղի հայերը բոլորը գաղթականներ են, քնիկները 1828 թ. հեռացել են։ Ալժմ հայտների թիւը 33 է՝ 109 քնակչով, որից պահպատութեան մէջ է 19 հոգի։ Թուրքերը մօտ 70 տուն են, ասորիները մէկ տուն։

Գիւղի գրագէտները երկու երեխաններ են, որոնք սովորում են Ք'ա՛լ'ա՛շանում։

Հողն աղալըդ է. աղալին վճարւում է քերքի 1/3 մասը։ Ընդամենը հինգ արտ կա։ Օգտում են Զօլալի ջրից։

Գիւղի եկեղեցին ուխտատեղի է։ Հովւում է ՚Երիշկի քահանան։ Ալստեղ ևս զանգահարութիւնն արգելւած է, որպէս և՛ կոչնակխփելը։

Յ Է Յ Թ Ա Ն - Ա Կ Ա.

Գիւղի անունը ծագում է արաբերէն «շէլթան» (սատանա) և քիւրդերէն «աւադ» (աւադ, արադ—շէն) բառերից։ թէ ինչու է ալգպէս

կոչւում, գիւղացիները չգիտեն։ Նա գտնը-  
ւում է Զօլալի աջ ափին, Դիլիմանից  $3\frac{1}{2}$   
վերստ հեռու։ Հայ տների թիւը 19 է, բոլո-  
րը գաղթական, բնակիչների թիւն 87, որից  
պանդխտութեան մէջ է 9 հոգի։ Թուրքերը 62  
տուն են։

Մինչեւ ալժմ դպրոց չունէին, ալժմ մի բա-  
ւական լարմար շէնք են պատրաստում դըր-  
սից եկած նպաստով և մտադիր են շուտով  
ուսուցիչ ևս ունենալ։ Գրագէտներ չկան  
բացի երկու երեխալից, որոնք սովորում են  
գետի միւս ափին՝ Ղալասարում։

Գիւղն աղալըդ է. հալերը հող չունեն։

Այստեղ ևս զանգ խփելու իրաւուք չու-  
նեն. հովուում է Դրիշկի քահանան։

### Ո. Խ. Ա.

Տեղացիների ասելով «Ուլ'ա» անունը  
պարսկերէն «օլալ» (գրաստ) բառի աղաւաղու-  
մըն է, իբրթէ Բուլթամինի աղալի (տես՝  
«Փալաջուկ») գրաստներն են եղել ալդտեղ կա-  
պելիս։ Գիւղը չափազանց կեղտոտ է նոլն-  
իսկ գոմ լինելու համար... Գտնւում է Զօլալի  
ձախ ափին, Դիլիմանից  $6\frac{1}{2}$  վերստ հեռու  
գէպի հարաւ-հարաւ-արևմուտք։ 1828 թ. գաղ-  
թականութիւնից առաջ զուտ հայարնակ է

եղել (ապացուց հնօրեա հայ գերեզմանատունը), ապա եկել են ասորիներ և յետո թուրքեր: Այժմ հայ տների թիւն 9 է, որից երկուսն ասորիների հետ խառն (մի կին և մի տղամարդ ամուսնացած են ասորիների), հայ բըսնակիչների թիւը 38 է, որից պանդխառըթեան մէջ է 12 հոգի: Թուրքերը կազմում են մօտ 80 տուն, ասորիները 23 տուն (երկուսը հայերի հետ խառն:)

Հայերը դպրոց չունեն. Երեք ասորի և մի թուրք իրանց տներում գրել-կարդալ են սովորեցնում. Հայ մանուկները սովորում են ասորիների մօտ ասորերէն... Հայերէն գրագէտ 2 մարդ կա: Հողն տղալը է. բերքի  $\frac{1}{3}$  մասն աղալինն է: Հողը բերք է տալիս մէկին 2—10: Օգտւում են Զօլալից հանած ջրանցքներից:

Երկու ուխտատեղի կա—ս. Գէորգ և Մարշմօն (սուրբ-Սիմէօն), ուր գլխաւորաբար լաճախում են ջեմախտաւորները:

### ԶԵԿԱՌՈՒԿ

Այս փոքրիկ գիւղը գտնւում է Գիլիմանից  $9\frac{1}{2}$  վեստ հեռու, հարաւալին բլուրների համարեած ծալրին, մի գեղեցիկ, զով տեղ, որի կլիման կարելի է ամենաառողջաբարը

Համարել ամբողջ Հայաբնակ Սալմաստում։  
«Ճեա՛ջո՛ւկ» անունը քիւրդերէն «զեա՛»  
(արծաթ) բառից և «ջո՛ւկ» (ջիլ, ջիք, ջրդ, ջլլ)՝  
մասնկից է բաղկացած։ Երևի իր գեղեցկա-  
նիստ դիրքի պատճառով է ալդպէս կոչւել.  
Ժէև տեղացիները բացատրում են նրանով,  
որ ալդ գիւղը մի ժամանակ իրը թէ Սալմաս-  
տի առևտրական կենտրոնն է եղել, արծաթ  
փողը շատ է եղել, բայց դժւար թէ սալմաս-  
տեցիներն առևտրական կենտրոն դարձնէ-  
ին լեռների, բլուրների ծերպերն, այն էլ սահ-  
մանի վրա։ Բնակիչներն են—քիւրդ՝ 20  
տուն, թուրք՝ 15 տուն, ասորի՝ 4 տուն և  
Հայ 6 տուն։ Հայերի թիւը 33 է, որից եր-  
կուսը պանդխտութեան մէջ է։

Գրագէտ միայն երկու մարդ կա, որոնցից  
մէկը երեխա, որ սովորում է Մա՛հ' լ'ամում։  
Հողն աղալը է. բերքի  $\frac{1}{3}$  մասն աղալինն  
է։ Նատ հողեր մնում են չցանւած քիւրդերի  
ահից։ Գիւղացի քիւրդերը հողագործութեամբ  
չեն զբաղւում, գերադասում են Հայերի մօտ  
ծառա լինելը։ Օգտուում են մի ք'ա՛հ' ըէզի և  
մի անուշահամ աղբիւրի վարար ջրերից։

Գիւղի մօտ կա մի մատուռ «Փրիշատ»  
(Փիրշահագ—սուրբ-վկա) անունով, որ գիւղն  
իր երբեմնակի ալցելութեամբ հովող մ'ա՛հ'-

Համար մատուռի մօտ կա մի հանքային աղբիւր, ուր լոզանում են բորստներն ու ջերմախտաւորները:

Այստեղ ևս արգելւած է զանգահարութիւնը:

ԳՈՒԻԼԻԶԱՆ

«Գուլիզան» պարսկերէն նշանակում է վարդ-կին, ծաղիկ-կին: Այս գիւղը գտնւում է Զօլալի աջ ափեց ոչ հեռու ( $\frac{2}{3}$  վերստ, Դիլիմանից  $\frac{8}{2}$  վերստ:) Տների թիւը 69 է, որից թուրք՝ 36 տուն, ասորի՝ 27 տուն, քիւրդ 3 տուն և հայ՝ 3 տուն, որից մէկն ասորիների հետ խառն ու բողոքական: Հայ բնակիչների թիւը 24 է, որից երկուոր պանդխութեան մէջ է: 1828 թ. գաղթականութիւնից առաջ Գուլիզանը զուտ հայաբնակ է եղել: Գերեզմանատունը շատ հին է:

Հայերի մօտ կէսը գրագէտ է:

Հողն աղալը է.. բերքի  $\frac{1}{3}$  մասը աղալինն է: Օդտւում են Զօլալից հանած ջրանցքից Գիւղի եկեղեցին—ո. Սարգիս—ուխտատեղի է:

Այստեղ ևս զանգահարութիւնն արգելւած է:

## Ա. Վ. Ա. - Ս Մ Ա Յ Ի Լ

Գիւղն իր կոչումն ստացել է իր հիմնագը-  
րե - Աղա-Ամալիլի անունից։ Գտնուում է Զօ-  
լալի աջ կողմը, Փրչաւուշ բլրից ոչ հեռու,  
Դիլիմանից  $\frac{4^2}{3}$  վերստ տարածութեան վրա։  
Այստեղի հայ ընակիչները վերջերս ցրւել են  
(մօտ 60 տուն), և մնացել է միայն մէկ  
տուն ընիկ, ալժմ հայ ընտռնիքների թիւը 5  
է՝ 22 ընակչով, որից երկուսը պանդխտու-  
թեան մէջ է։ Թուրքերը մօտ 100 տուն  
են։

Մի հայ գրադէտ կա։

Հողատիրութեան տեսակն ազալըդ է. բեր-  
քի կէսն աղալինն է, բայց սերմացւի կէսն  
աղան է տալիս. ուրիշ ոչմի տուրք չունեն,  
նոյնիսկ պետական, միայնթէ պարտաւոր են  
աղալից անպայման գնել 4 թումանի խոտ,  
որովհետեւ աղան մարգագետիններ ունի, և տա-  
րեկան հինգ հաւ տալ աղալին. իսկ եթէ չը-  
ցանկանան ոչ բերքի կէսը տալ աղալին, ոչ  
հինգ հաւ տալ և ոչ էլ նրանից 4 թումանի  
խոտ առնել, այն ժամանակ աղան սերմացւի  
կէսը չէ տալիս և իւրաքանչիւր ցանւած  
բեռան տեղի համար առնում է 15 զռան  
փող։ Օգտւում են Զօլալից հանած ջրանցքի



# ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԾ

Սալմաստը 1828 թւից առաջ աւելի հայացատ է եղել. այդ թւին ժողովուրդը (2000 ընտանիք) խոլեցիների, ուրմիացիների և մարտղացիների հետ գաղթելով գլխաւորապէս Երևանի նահանգը, երկիրը գատարկւել է, և այժմ այդ գաւառում թուրքն է կազմում ճնշող մեծամասնութիւնը (մօտ 120000 թուրք): Տաստարի առաջ սահմանակից տաճկական Աղբակ գաւառից սկսւեց մի գաղթականութիւն գեղալի Սալմաստ, որ գաղարեց միայն 4—5 տարի առաջ. այդ գաղթականութեան կանգ առնելովն սկւեց (աւելի ճիշտը՝ շարունակւեց աւելի մեծ ծաւալով) մի ուրիշ գաղթականութիւն—Սալմաստից Սալմաստ. լեռնային մասերում (գլխաւորապէս Ճարալում) քիւրդերը նեղացրին հայերին, և վերջիններս ըստիպւած եղան թողնել տուն-տեղ, թափւել Սալմաստի գաշտավայրը—կենտրոնը: Մեր կազմած (1905 թւի ապրիլին և մայիսին) վիճակագրութեան մէջ լիշտած գաղթականների թւում են գտնուում և՛ լեռնային մասերից հաւաքւած սալմաստեցիները:

Հարկ է նկատել, որ ինչպէս միշտ, այն-

պէս էլ ալժմ շարունակւում են տեղափոխութիւններ մի գիւղից միւսն, ուստի այսինչ կամ այնինչ գիւղի բնակիչների (մանաւանդ գաղթականների) թիւը լաճախ է փոփոխութեան ենթարկւում. շատ «աղալը» գիւղերում գիւղացին անշարժ կալք չունենալով, հողի հետ կապւած չլինելով, կամ գիւղի աղալին չհաւանելով, կամ այլ հանգամանքից ստիպւած՝ մէկ-երկու տարուց, նոյնիսկ մէկ-երկու ամսից յետո թողնում՝ հեռանում է մի ուրիշ գիւղ. կամ դաղթականը «խալիօա» գիւղում հողից զուրկ մնալով՝ անցնում է որևէ «աղալը» գիւղ:

Պանդխտողների թիւը մեր ցուցակագրածից էլ աւելի մեծ պէտք է ընդունել ընդհանրապէս, որովհետեւ մեր վիճակագրութիւնը մի այնպիսի ժամանակ կազմւեց, երբ պանդուխտների մի մասը տուն է լինում վերագարձած։ Կարելի է ասել, որ ազգաբընակչութեան ընդհանրապէս  $\frac{1}{3}$  մասը պանդխտում է Ռուսաստան և դրանով է ձեռքբերում իր պարէնը։

# ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

Սալմաստեցի հայ տղամարդն ընդհանրապէս բարեձեւ է, միջահասակ, աւելի նիշարաւուն, չոր-չոր, դէմքով թուխ. գեր ու երկարահասակ տղամարդիկ պատահում են միայն Հա՛ֆ'թվանում։ Ֆիզիքական ուժով աչքի չեն ընկնում։ Կանալք վտիտ են, ընդհանրապէս վատոլժ՝ շնորհիւ ալն հանգամանքի, որ չափագանց վաղ են ամուսնանում (9—13 տարեկան)։ Կանանց ծերութիւնը վաղահաս է լինում։ Միջահասակ կին քիչ կգըտնէք, ընդհանրապէս փոքրահասակ են՝ նոյնպէս շնորհիւ ալն հանգամանքի, որ դեռ չըհասունացած՝ ամուսնանում են։ Ֆէնօմէնալ' տիպեր չեն պատահում հասակի կողմից, եթէ կանանց հասակը ֆէնօմէնալ' չհամարենք։ Երբեմն պատահում են մատների արատով ծնւածներ, կոլրեր, կաղեր. ուրիշ ալլանդակներ աչքի չեն զարնուում։ Սալմաստեցու դէմքը հայկական է, բայց մի ինչ-որ սրութիւն և հայեացքի ուրոյնութիւն ունի, որով նըրան ամեն տեղ կարելի է զանազանել ուրիշ տեղացի հայից։ Մազերը մուգ-շագանակա-

գոյն են, երբեմն սե, քիչ դէպքերում գանգուը. շէկ մազը հազւագիւտ է. քիթն արծւի, աչքերը շագանակագոյն, իսկ սեը, կապուտն ու մոխրագոյնը հազւագիւտ են: Տըղամարդկանց ձայնը բարիտօն է, իսկ կանանցը կօնտրալ' տօ է ընդհանրապէս: Խօսելլը ոչ արագ է, ոչ էլ դանդաղ. նախադասութեան վերջը երկարացնում են գլխաւորաբար կանաք և երեխաները: Նստում են ծալտպատիկ, մեծերին լարգելու համար չոքում են ծնկների վրա, որ Պարսկաստանում ընդունած սովորութիւն է:



Այս կայսերական բանակը նշանակած է առաջնական դիմումահանունից: Այս ամեն է առջևոր միան առաջնական դիմումահանունից: Այս ամեն է առաջնական դիմումահանունից:

# ՀԱՅԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՆՑ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Հենց առաջին հայեացքից բնակարանները  
վկալում են երկրի անապահովութիւնն ու  
փակ, հարէմական կեանքը: Փողոցներից տը-  
ներ չէք տեսնիլ, այլ ամենմի թաղում մի  
քառանկիւնի պարիսպ ընկած երկարուձիգ,  
միքանի դռներով. թէև շատ բնակարանների  
պատեր փողոցի վրա են կառուցւած, բայց  
չէք կարծիլ, թէ դրանք տան պատեր են.  
լուսամուտներ չունեն: Մտէք ալդ գարպաս-  
ներից և յաճախ կընկնէք նոր փողոց, անկա-  
նոն, ծուռումուռ, կեղտոտ, աղքի գարշահո-  
տութեամբ. իսկ ալդ փողոցի երկու կողմե-  
րով դռներ են շարւած, որոնք տանում են  
կամ գէպի բնակարանների բակերը, կամ նո-  
րից գէպի նոր փողոց, որից էլի ուրիշ դռներ  
տանում են տները, կատարեալ լաբիւրին-  
թուներ:

Տների կանոնաւորութիւն ու միաձեռու-  
թիւն՝ իհարկէ՝ չկան: Կտուքները միմիանց  
կից են, այնպէս որ շատ տեղեր ամբողջ թա-  
ղ համարեալ մի կտուր է ունենում, որը և  
ծառայում է ստէպ իրեւ ճանապարհ—գլուխ-

ւորապէս քէշիգ՝ չիների (գիշերալին պահապանների) համար.—ըարի հարեանութեան գաղափարը զարդացած լինելով՝ թաղեցիներն այնքան էլ լարաբերութիւն չեն ունենում իրար հետ։ Երբեմն էլ մի կտուր միւսներից քիչ բարձր լինելով, երկու կողմից փայտէ սանդուղներ են դրւում՝ հարեան կտուրներով անցուդարձ անելու համար։

Տները շինւած են կաւահողից, առանց քարի ու կրի, և ծեփւած նոյն կաւով՝ միայն լարդով շաղախւած։ Վերջերս միքանի հարուստներ իրանց տները շինում են աղիւսից՝ ամուր քար շինելու պատճառով։

Պատերի բարձրութիւնը լինում է ոռոսական 3—5 արշին առանց հիմքի, որը մօտ 2 արշին խորութեամբ նստած է լինում գետնի մէջ։ Պատերի հաստութիւնը լինում է  $\frac{1}{4}$  արշինից մինչև 1 արշին։ Դռներն այնքան ցածր են լինում, որ ամենակարճահասակ մարդն անգամ ստիպւած է լինում մէջքը ծռել մտնելիս։

### ՏՈՒՆ

Տունը բաղկացած է լինում 1 կամ 2 սենեակներից, որոնք շինուում են քառանկիւնի, քայլուչ միշտ քառակուսի։ Պատերի երկարութիւն-

Նը լինում է 3—20 արշին։ Պատռհաններ ընդհանրապէս չկան, երբեմն լինում են փոքրիկ լուսանցքներ (եափնջա), որոնք նալում են դէպի բակը։ Դուռն ընհանրապէս դուրս է գալիս դէպի բակը, հազւագիւտ դէպքերում դէպի փողոց։ Տան ներսը պատերի մէջ շինում են մէկ կամ միքանի պատրհաններ<sup>1)</sup>(ակնատ)՝ ամանեղէն դարսելու համար. դրանք ունենում են երբեմն դռներ և այդ դէպքում կոչում են «գօլար»-ներ։ Նոյն նպատակի համար շինում են և՝ «զէհն» (դարակ), որը մի պատի դէմ բարձրացրած մի ուրիշ պատ է՝ 2—3 արշին բարձրութեամբ։ Պատերի մէկի դիմաց լինում է (ոչ միշտ) ամբարը, որ տեղացիները կոչում են «փեթակ'» (ցորնի համար) կամ «իւք'ալթը» (բեռան տակ—ալբի համար)։ Ամբարի վրա դարսում են տեղաշորերը («ծալք») և երբեմն դատարկ ամաններն ու հացի տաշտը։ Տան մի անկիւնում երբեմն շինում են մի ուրիշ տնակ, որ կոչում է «քոխտիք» (գողտիք, գաղտնի տեղ), ուր գնում են տան իրերն ու ամանեղէններ։

<sup>1)</sup> Ամբողջ Պարսկաստանում այդպիսի պատրհաններ կան աներում ըստ երեսյթին, որ ծառայում են շկաֆի տեղ։ Իսկ Համալիքանում և Սպահանում տան չորս պատերն անճոռնիացնում են այդ ձեռով։

ըլք։ Տան մէջ սենետիկի կենտրոնում շինուում է թոնիրը (թունդիր կամ տաճար) հոյց թխելու, կերակուր եփելու և ձմեռը տաքանալու համար. վերջին դէպքում շորով ծածկում են թոնրի բերանը և ոտները շօրի տակից կախում թոնրի մէջ. թոնիրը կլոր (գլանաձեւ) է լինում՝ 2—3 արշին խորութեամբ։ Թոնիրի լատակից (անկիւնից) մի անցք են փորում (ակ) և դուրս են հանում թոնրից 2—3 արշին հեռու դէպի դուռը, որտեղով օդի հոսանքն է անցնում։ ալդ «ակ»-ի թոնրում գտնւող ծալը կոչւում է «մ'ք'ու-ք'ա՛»։  
Հաց թխելու պարագաներն են. տաշտ, մաղ («փոկէ» կամ «ծա՛րէ»—կաշւէ կամ մազէ), «խացի (հացի) տախտակ», «կռնակ» (գլանաձեւ փայտ՝ հացի գունդը բանալու համար), «մա՛րզդա՛» (ճիպոտներից հիւսած ձւածեւ տափակ մի գործիք, որը պատում են փափուկ խոտով ու կարում հաստ շորի մէջ և գործածում «լօշը»—բաց արած գունդը—վրան գցելու և նրանով թոնրի պատին կացնելու համար։ Կարաքաղ ալդ գործիքը կոչւում է «տեփի», «Ն.-Զուլա՝ «գափ»), «խացիսան» (հացահան, Ղարաբաղ՝ «ծհան»), «տաշտաքեր» կամ «խացկան» (Երկաթէ փոքը տափակ կլորաձեւ գործիք, որով կտրում են տաշտի խը-

մորը գնդեր շինելու համար և յետո քերում  
խմորի մնացորդը տաշտից):

Հայց թիւելը: Ալիւը մաղում են մաղով  
տաշտի մէջ, մնացորդը (թեփը) տալիս են  
հաւերին. աղը ցանում են ալրի վրա, տա-  
քացրած ջրին խառնում մի քիչ պաղ ջուր,  
խաշը մանրում և ածում ալդ ջրի մէջ, խառ-  
նում, հունցում, յետո ծածկում և պահում,  
մինչև որ թթւի. ապա գնդում են (կ'ունդ՝  
են անելըի), և շարում են գնդերը «որֆալի»  
(սփռոցի, որ կաշւից է լինում) վրա, մինչև  
ար բարձրանում է, ապա գնդերը գնում են  
«խացի տախտակի» վրա, «կոնտակով կոնակում»  
(տափակացնում), յետո հացթուխը վերցնում,  
գցում է մի դաստակից միւսի վրա միքանի  
անդամ, մինչև որ երկարանում է, ապա գը-  
նում է «մա՛ր՝ զդ՝ ա»-ի վրա և կացնում թոնրի  
պատին, «լօշը» թիւելուց հանում է ձեռքով,  
իսկ եթէ չէ պոկւում — «խացխանով»: Ընդ-  
հանրապէս գործածական է լօշը. հացի աւել-  
ի քիչ գործածող տեսակներն են — թա՛փ-  
թը՝ փտ՝ (պոօզ), կլօն (քօքօն), կաժ (մէջը  
ծակած հաց, որ թոնրի յատակին է թիւում),  
զօղալ (երկար գլանաձև), կ'ա՛տը՝ (գաթա—  
միջուկը կոչւում է խորիս), սլաղա՛ր'ճ՝ (քա-  
ղարջ, նոյն գաթան է՝ առանց խորիսի), կու-

տառպ (կոտապ, միջուկը լոբուց, գետնախնձորից, պղպեղով համեմած), զա՛խչի կլօչ (ջրաղացը աղարջ), ալնի (անալի) կլօչ, կօպտլ (կիսալուսնաձև):

Տան մի անկիւնում շարում են հետեւեալ ամանեղէնները. — ծծում (կաւէ խնոցի), տիկ (որ գործածում է խնոցու տեղ), դապան (կաթսա), դապանչա (փոքր կաթսա), ոմքեժիկ (կանթաւոր կաթսա), դալլը՛-դապան (միս տապակելու — զաւուրմա անելու կաթսա), ծա՛ւա՛րի դապան (ձաւար եփելու կաթսա), երկանք (երկանք, ազօրիք), պտուկ (կաւից), ըա՛լէն (մածնի կամ կով ու ոչխար կթելու աման), դադըլա՛ (կանաչի թթու դնելու անօթ), դալլը՛-դաբի (զաւուրմա պահելու կճուճ), սմավար (ինքնաեռ), չալդան (պղնձէ կաթսա, որի մէջ թէլ են եփում), չալնիգ' (թէլաման), ստըքան (բաժակ), քթէլ (գդալ), բօշդաբ (ափսէ), քասա (պնակ կամ գաւաթ), խէկունիկ (փոքր գաւաթ կերակրի կամ գինու համար), մա՛թրա՛թ', դանդաման (շաքարաման), չաղու, տալինկ'ա (լախճապակէ պնակ), կ'ոււժ', սափո՛ր, փա՛ր'թա՛ւիկ (փոքր սափոր), համալիլ (մեծ սափորի մի տեսակը), դուլիկ (կուլա), ջը՛ռա (մի տեսակ կճուճ, որ պանրի համար են գործածում), կարաս, թափա, ափթափա (ար-թափա — ջրի աման), լա՛ք'ա՛ն' (կոնք,

որ հաստ պղնձից է՝ կոշտուկովիտ շինւած,  
երեսը ծածկած մի ծակոտկէն կափարիչով,  
որտեղով ջուրն անցնում է լատակը. գործած-  
ում է լւացարանի տեղ,) լ'ուլ'ա՛հին (գինու  
գաւ), սուրահին (ջրի համար, կաւից), աղա-  
ման, ջրախպան (պղնձից կամ փալտից շինած  
աշտանակ, որի վրա են դնում ճրագը), փը-  
սուս (պղնձէ ճրագկալ, միքանի կտորներ  
իրար հագցրած), ճրագ (կաւից կամ թիթե-  
ղից), լամփ, ք'ուրսի (աթոռ, չպէտքէ խառ-  
նել կերակարանի հետ, որ «քուրսի» է կոչում),  
պատմոց, մա՛ր'ջը'մա՛ կամ սինի (սկուտեղ),  
շիշ (շամփուր), խա՛ր'ճրկաթ (երկաթէ ձող,  
որ դրւում է թոնրի բերանին և վրան  
են դնում կերակրի ամանը՝ կերակուր եփելու  
համար), խուփ, ոռւմկա, սանդուղ, սախէն  
(կաւէ աման, որի մէջ լողանում, գլուխ կամ շոր  
են լւանում), չոխտրիկ (փոքր սախէն), թա՛շտ  
(նոյնը պղնձից), գ'ուլդան (ծաղկաման), փէչ  
(վառարան, թիթեղից), մաշա, բէլչա (շեղչ-  
տու կամ փոքրիկ թիակ), թիակ, պա՛խ  
(բաշ), կողով, թա՛բլա՛ (կաշի, եզրերին փայ-  
տեր կարած. դրանով ազը են կըում), բա՛ֆ-  
րիկ (ձիւն սրբելու գործիք փալտից կամ կաշ-  
ւից), կացին, ուրաք, տուր (գուր), ք'լ'լունգ  
(քլունգ), սղոց, բուրդի (փալտ ծակելու գոր-

ծիք), կլվարօտ (նոյնն աւելի մեծ), սոլ(թոնը-  
րի խուփի), սաթլ (պղնձէ կաթնաման), հայ-  
լի, սանդրռ, խրխի (մեծ սղոց), խիզար (ամե-  
նամեծ սղոց), սանդ, փլաւքամիկ', կաթքամիկ'  
(թիթեղից), սլիպու (քլունգի նման գործիք,  
սրածալը), մա՛ր'զո՛ն (մանգաղ), կերենդի (գե-  
րանդի), մարս'նդի (մեծ մանգաղ), բօթիլ  
(շիշ), փա՛թա՛ (քացախի շիշ, լայնտփոր), բա-  
դին (պղնձէ աման), թաս (գաւաթ), տա-  
փուրիկ' (ցորեն մաքրելու գործիք, փալտից),  
կանանչիկ' (կաւէ, կանտչ ներկած) և այլն:

Մի պատի վրա, վերին մասում փալտեր են  
ցցում, վրան մի տախտակ գցում (թա՛ռ'մա՛)  
և գարսում ամանեղէնը:

Եթէ ամբար չկա, մի պատի տակ 2—3  
արշին երկարութեամբ և մի արշին բարձրու-  
թեամբ հողէ պատ են շինում, վրան փալտ-  
դարսում և ալդտեղ ժողովում անկողինը  
(ծալք):

Տան յատակում փորում են մառան (զէր-  
զա՛մի)՝ մրգերի, թթու դրած բանջարեղէնի  
(թուրշի) և երբեմն ամանեղէնի կամ վարու-  
ցանքի գործիքների համար:

Թոնըրի վրա են դնում «քուրսի»-ն (փալտէ  
մեծ ու ցած սեղան), որի վրա գցում են  
հաստ շորեր (վերմակ, կապերտ), ոտները

մեկնում թոնրի մէջ և մինչեւ իրանի կէսը  
երբեմն մինչեւ կոկորդը ծածկում քուրսու  
վրա գցած շորերով, ալդպիսով ոտներն ու  
իրանը սաստիկ տաքանում են երբեմն, իսկ  
գլուխը սառչում է։ Իսկ նորաձեւ սենեակնե-  
րում, ուր թոնիր չկա, քուրսին գնում են և  
տակը մի կրակարան (մանղալ) մտցնում կրա-  
կով լի, ոտները չորս կողմից մեկնում։

Տան առաստաղը (առիք') շինում են հե-  
տևեալ կերպ։ տնկած սիւների (սուն) վրա  
գցում են մի գերան սենեակի երկարու-  
թեամբ մէջտեղով, գերանին ուղղահայեց  
երկու կողմերից գցում են կոճեր (տա՛ր'ց),  
որոնց մի ծալը գերանի վրա էլինում, միւ-  
սը՝ պատի. զրանց վրա գցում են «փա՛ր'գու»-  
ներ (լոփա տախտակ), ապա խսիր, եղէգն  
կամ ծղօտ, վրան հող ածում և ամրացնում  
կոխոտելով։ Առաստաղի մէջտեղից, գերանին  
մօտ թոնրի գէմուդէմ բանում են երդիք.  
Երբեմն միքանի փոքրիկ երդիք էլ առաս-  
տաղի զանազան կողմերումն են թողնում  
լոյսի և ծուխը շուտ դուրս գալու համար։  
Կտրին (տանիս) գտնուում է արտաքնոցը։

Ս Պ Ա Հ (Ս Պ Ա Խ)

Սըրահը (ոչ տմեն տան է լինում) կազմում

է տան կտրի շարունակութիւնը, առջևի կողմից բաց Սրահում լինում է մէկ կամ երկու թոնիր՝ գլխաւորապէս ամառներն օգտւելու համար։ Թոնիրներից մէկը փոքր է լինում, մօտ մի արշին խորութեամբ, ուր բացառապէս կերակուր են եփում։ Այդտեղ էլ են լինում «ակնատ»-ներ և «զէհն»-եր՝ իրերը դարսելու համար։ Սրահի առաջը երբեմն տախտակով ցանկապատում են (դռա'բա)։

### ԳՈՄ

Ոչխարը զետեղւած գոմը հէնց գոմ է կոչւում, իսկ այն գոմն, ուր տաւարը կամ ձիերն են գտնւում, կոչւում է «փայտ»։ Այս վերջիններում մի պատի երկարութեամբ շինւած է լինում մսուրը՝ սիւներով միքանի մասի բաժանւած, իսկ նրա հակառակ պատի տակ գտնւում է մի քարէ տւաղան, որի մէջ ձմեռը ջուր են լցնում անտառւնների խմելու համար։ Մորի վրա կտպւած են լինում թոկեր, որոնց մի օղակւ ծալը (օխտակ) գցում են անասունների վիզը։

ՄԻԱՆԱ (ՆԱՌԱՅԱՑՈՒՆ)

Միքանի աներում շինում են տանը կից

փոքրիկ սենեակ, ուր ծուաներն են մնում:

**ՄԱՐԱԳ**

Եինւում է տան կից կամ քիչ դէպքերում  
գիւղից դուրս: Այնտեղ են պահում անա-  
սունների կերը: Երբեմն գնում են այնտեղ  
վարուցանքի դործիքները:



# ԿԵՐԱԿՈՒԾ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Կերակուր. — ք' ֆտա, զօ' րիվա', դօլմա, քա-  
բաթ (խորոված), լուլա՝ քարար (ծեծած մսի  
խորոված), քաստուրմա (աղում պահած մսի  
խորոված), ծւաղեղ (ձւածեղ), մաշ (լորի, լո-  
րիով կերակուր), լա՛փա՛ (սիսեռ, սիսեռով կե-  
րակուր) կաթով շիլա, պա՛ն'ջա՛ր' (բանջարեղե-  
նով կերակուր), ճաշ (ալրից ու ցորնից),  
տպուր (թանից և ձաւարից). թթու-ապուր  
(սալորից), ք' աշ'կ'ա՛ (կորկոտ), հա՛րիսա՛, կոր-  
կոտ-ապուր, ծուա՛րէ-ապուր (ձաւարից, ըն-  
կուզով կամ մսով), փլաւ, ք' ա՛շո՛վ'ը (բընձից),  
բընձան (ամբողջ ոչխարը կախում են թոնրի  
մէջ և թոնրի ըերանը փակում, այդպիսով  
խորովւում է), դ' ալլա (տապակած միս, դա-  
ռուրմա), շուլիտա (ճակնդեղի թփից), կար-  
տոլ (գետնախնձոր), բօրանի (դդում կամ ճա-  
կնդեղ), ճւճուլը (իւղով ու ձւով), թավա-քա-  
բարի (ծեծած տապակած միս), խա՛շ, ուղեղ,  
մածուն, կաթ, պանիր, կարագ, սէր, աղուզ,  
ժաժիկ (մածնից), լորիկ (պանրից), հալվա,  
խաւիծ, մըթուխա (խաւիծի պէս), քնջուն  
(խաւիծ ձւով), խորիս (հալվալի պէս), արդը-

խաւ (խորիսի պէս, միայն աւելի ջրալի), հասութքա՛ (իւղից, ալրից և դօշաբից), գօշաբ, մեղք, մալրամիկ (կորկոտ կանաչեղէնով), խառնաս-խատիկ (խառնած-հատիկ—լորիից, սիսեռից, ցորնից, ընկուզից, սոխից ևալն), կարկատ (աղանձ, ղանձտատ, բոված ցորնից՝ սերմերի հետ խառն), զանազան կանաչեղէններ թարմ ու չորացրած, պախոի (պասւա) դոլմա, իւղ, ձեթ, ընդ' ո'զի-փլաւ, սուտ-ք'լփտա (պասւա), ձուկ, միս, ոշտա՛ (խմորից), կարտոլ-ապուր, բա՛ղ-լա՛ (բակլա, բակլալից կերակուր), պօլիկ' (ոլոռնից կերակուր), բա՛լա՛-ջիկ' (չորացրած դդումից), գ'օ'բլագ' (սունկ), ևալն:

ԽՄԵՂԻԲ.—Հալ, ղ. ա՛հվա՛ (կօֆէ, քչերն են խմում), կաթ, թան, գինի, օղի, ղ. անդաւ (պարսկերէն՝ ղ. ա՛նդ'—շաքար, աբ—ջուր):



# ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

ԿԱՆԱՆՑ

Սալմաստի կանալք ունեն իրանց ուրոյն տարազը, չնայած պանդիստութեան շնորհիւ Ուռսաստանից բերած «նորաձևութիւններին» (բառի բուն նշանակութեամբ, որովհետև ոչտեղական տարազով հագնւողներն օտարութեան մէջ ոչթէ իւրացնում են իրանց գլուխած տեղի տարազն, այլ այնտեղի տարազը կամ խառնում են իրանցի հետ, կամ յաճախ ալդ օտար տարազի ազդեցութեան տակ ըստեղծում են մի բոլորովին նոր զգեստաւորութիւն, որը ոչ ալդ օտար զգեստին է նման, ոչ էլ իրանցին):

Տեղական զգեստն իր ճաշակաւորութեամբ աչքի չէ ընկնում, բացի նորահարսներինը. միքիչ հասակ առածները մինչև անգամ չափանց անճաշակ են հագնւում և երբեմն այնքան շատ զգեստներ իրար վրալից, որ հաստափոր տակառի տպաւորութիւն են թողնում:

Շապիկը տղամարդու շապկից երկար չէ, այնպէս որ մինչև ծնկներն էլ չէ հասնում. կա-

բում են ամերիկալից, միտկալից, չթից և կտաւից, իսկ հարուստները փաթուսկալից (սատին). կուրծքը մինչև պորտը բաց է, կոճկւում է կոկորդի տակ. թեւերը երկար են ու կոճկւում են դաստակի վրա, այնպէս որ միջտ երեսում են իրանց ամբողջ կեղտութեամբ և պատառուտւած դրութեամբ. մինչև բոլորովին մաշւելը համարեած թէ չեն փոխում, զատ սակաւ են լւանում, լւանալիս մնում են անշապիկ, որովհետեւ փոխնորդ չեն ունենում (հարուստները բացառութիւն են կազմում), մինչեւ մէկը չմաշւի, միւսը չեն կարիլ:

Վարժիք (թմբան կամ շալվար).—կարում են նոյն կտորներից—սպիտակ կամ կարմիր—ինչ որ շապիկը. վերին մասով բամբակէ թելերից ոլորած պարան (խօնջան) են անցկացրնում և կապում առջեից։ Գործածում է շապիկի պէս մինչև կատարելապէս անպէտքանալը։ Զափազանց լայն է։

Արխալուդ. — Հագնում են շապիկի վրալից. հասնում է մինչև ծնկները. կարում են կարմիր կամ խալտարղէտ չիթերից ընդհանրապէս (հարուստները կարմիր ատլասից). թեւերը մինչև դաստակները, շապիկի թեւերից քիչ կարճ։ տղամարդու արխալուղից ոչնչով չէ

զանազանութեմ, երբեմն կին ու մարդ փոփոխակի հագնում են իրարարխալուղներ, եթէ չափսները սէկ է լինում։ Իւրկա.— յժից է կտրւում, կարմիր տառառվ, մէջը բամբակէ լցրած։ Զմեռը միքանի հատ իրար վրա են հագնում չմրսելու համար։

ԳԵՐԵԱ. — վզից միակտոր հասնում է ծընկներից վար. ամենաերկար հագուստն է, բայց իր կտրճութեան պատճառավ չէ ծածկում վարտիքն, այնպէս որ այս վերջինը միշտ աչքի է զարնուում մանաւանդ իր կեղտոտութեամբ։ Զմեռը միքանի գերեա են հագնում չմրսելու համար։

Ք'ուլ'ա'ջա'. — դէրեալի վրալից են հագնում, որ ծառալում է մուշտակի տեղ. կարում են թաւշից, մահուդից (սև), Քիրմանի շալից, մտլասից և ֆասոնիալից. կուրտկալի պէս է, հասակաւորներինն աւելի երկար է լինում։ Թևերի ծալրերը և օձիքից սկսած մինչև փէշի ծայրը զարդարում են սսկեթելով (գ'ուլաբաթըն, դայթան, դառ). միքանի տարի առաջ զարդարում էին կուրծքն արծաթէ կոճակներով, իսկ թևերի ծալրերը գլանաձև բարակ արծաթէ ճիպոտիկներով (սուլըմա')։ Հարուստ հասակաւոր կիները ք'ուլ'ա'ջա'լի եզրե-

ըսվ ոսկեթելի կամ արծաթ դրամների տեղ  
կարում են աղւեսի մորթ։ Երևի նորաձեռու-  
թիւն է։

Վրայի շապիկ. — ք'ուլ'ա'ջա'ն ընդհանրա-  
պէս ամենավերին զգեստն է, բայց սալմաս-  
տեցի ամօթխած կինը, մանտաւնդ արդէն քիչ  
հասակաւորը, որպէսզի իրան աւելի ուժ տե-  
ղի անճռունիացնէ (...), այդ գեղեցիկ ք'ուլ'ա'-  
ջա'լի վրալից հագնում է մի պարկ կտալոյտ  
չժից կամ կարմիր կտաւից կարած, որ կոչ-  
ւում է վրայի շապիկ. սա ծոռալում է մասամբ  
և գոգնոցի տեղ։

Գօ'ս'լիգ' (գոգնոց). — Հագնում են համա-  
րեա միայն հասակաւորներն, իսկ ջահէները  
շատ քիչ, այն էլ աշխատելիս, հաստկաւոր-  
ները հագնում են կապոյտ չժից՝ սկսած վը-  
զից մինչև ծնկները, որ շատ աճունի տեսք  
է տալիս. կապում են մէջքներին։ Իսկ երի-  
տասարդները հագնում են փաթռւսկալից և  
ոչ թէ վզից սկսած, այլ գօտկատեղից։

Զա'ր'սա'ւ. — միքանի տարի առաջ կա՞սաէք  
փողոց գուրս գալիս բանեցնում էին ճերմակ  
չա'ր'սա'ւ՝ ծածկւելով գլխից մինչև ոտք. այժմ  
համարեա թէ չկտ, երբեմն գործածում է  
ճանապարհորդութեան ժամանակ։

Ուր'բա'ն'դ'. — սա շորի մի կտոր է՝ տռաջից

գործւած խոշոր ծակոտիներով, որով կապում են գլուխն ու դէմքը՝ վերջինս մարդկալին աչքից ծածկելու նպատակով. գործւածն ընկնում է դէմքի դիմացը, որպէսզի կինը տեսնէ և շունչ քաշէ. երբեմն գործածում են ջահէլները ճանապարհորդութեան ժամանակ, որպէս բոլոր թուրք կանալք տնից դուրս գալիս:

Զախնուր.—դա մի տեսակ վարտիք է գուլպաների հետ միասին, որ հագնում են ձի նստելիս. թուրք կանալք գործածում են համարեած միջտ տնից դուրս գալիս:

Աղջիկների զգեստը հասնում է ընդհանրապէս շապկից մինչև դէրեան, երբեմն հագնում են և՛ քուլ'ա'ջա՛:

### ԳԼՈՒԽՆԵՐԸ ԳԱՐԱԿԱՆՔ ԵՒ ԶԱՐԳԵՐ

Գլուխները տանրում են երկու շարթէնը կամ ամսէնը մի անգամ, գլխի մէջտեղը մի գիծ են թողնում. թողնում են զիլ'ֆեր—մազի փնջերն իջեցնում են մինչև ականջները, ոլորում<sup>1)</sup>, ասլա ետ տանում և ծալրերը գըլ-

<sup>1)</sup> Այդ ոլորւածն' բը շորի տակից դուրս են բերում, որպէսզի աչքներին երևան, որ նշան է, թէ եղբայրը կամ ընդհանրապէս «ա'զիղը» միշտ աչքի առաջ կը լինի. — «ազիղը» համաշա'չա՛ աշկի մէջն ըլեն»։ Երբ մէկը մեռնուամէ, այլնս զիլ'ֆեր չեն թողնում՝ իրեն սպի նշան, էլ «ա'զիղ» չկա, որ յիշեն։

խի ետևի մասում փաթաթում դա'զ'մային կարած շորին։ Ղա'զ'մա'ն մի ձւածե ծռած թիթեղ է, փաթաթած և կարած շոլի կամ չթի մէջ, ծալրերը ետևի մասում թելերով կապած։ քունքերի գիմաց երկու կողմից կարում են մի ուրիշ շորի երկու ծալրերը և դնում գլխին՝ զա'զ'մա'լի ծալրերը դէպի ետև դարձրած։ ահա այդ շորի վրա է, որ երկու անգամ փաթաթում են մազերը և ապա հիւսեր անում (աղջիկներին 15—25 հատ, կանանց 8—10 հատ)։ Բամբակը դնում են մետաքսէ շորի մէջ, դրանից մի կլոր բան կարում զա'զ'մա'լի ձեռով, բայց նրանից փոքր դա կոչւում է պառուի։ պառուքի վրա երկու կողմից ասեղով կամ գնդասեղով ամրացնում են մետաքսէ մի կտոր՝ չթէ աստառով, որ կոչւում է բա'փա'։ այնպէս որ թա'փա'ն պառուքի համար դառնում է մի տեսակ կտոր, ծածկոց, պառուքն իր հետ կարած թա'փա'լի հետ դնում են զա'զ'մա'լի մէջտեղը, գագաթին։ լետո չամբա'րի (գլխի թաշկինակ) մի տուտը գցում են զա'զ'մա'լի ետևի մասի վրայով և բերում, ծնոտի տակով անցկացնում, դնում գագաթին, թա'փա'լի վրա։ Ապա ճակատին են դնում նրիկը—տեսմալի (ջ'հա'զ') վրա երկու կողմից կարած չորսական ուկու

մի փունջ, ներքեսի երեքը փռքը ուկիներ (գլուխաւորապէս ոռւսական 5 ըռւթիանոցներ), վերևինը մեծ (ոռւսական 10 կամ 15 ըռւթիանոց, երբեմն աւստրիական կամ տաճկական ոսկի), լետո ճժիկի ծալրերը տանում են, գլխի ետևի մասում սանջախով (գնդասեղով) ամրացնում։ Ապա ճակտաին են դնում զուլ'ը (ոսկէ կամ արծաթէ գնդակիկներ՝ կտրած սե թաւշի վրա) և ծալրերն ամրացնում գնդասեղներով գլխի ետևի մասում։ Դրանից լետո զցում են չարդաքը (թաշկինակ) և գընդասեղներով ծալրերն ամրացնում ծնոտի տակ։ Գրա տակից բարձրացնում են չամ'բա՛րի ազատ մնացած ծալրերը, գլխով պատ են բերում և անցկացնում ծնոտի տակով ու վրայով, ալնալէս որ ծածկում են բերանը, հարկ եղած գէսլքում և քիթը (օտարի ներկալութեամբ կամ փողոցում) և չամ'բա՛րի ալդ տուտն ամրացնում են նորից գլխի ետևի մասում գնդասեղով։ Յետո զցում են ուր'փա՛նիգ'ը, երկու արշինաչափ ճերմակ, վարդագուն կամ կանաչ շղարշ—քօղ (զգեստի և զարդերի մէջ ամենագեղեցիկը), որի ծալրերով կտրած են լինում չ'հա՛գ', իսկ ներքեսի եզրը ծոպաւոր է լինում (ու գոյնի ծոպեր՝ ոսկեթելի հետ խառն)։ շղարշի երկու ծալրերն երար են

ամրացնում, ամրացնում են նաև՝ մէջտեղից  
ու վերին մասից, այնպէս որ մնում է երեք  
բացւածք, և գցում գլխներին։ Դլխառըա-  
պէս ջահիլներն են գործածում այս ջորը, իսկ  
հասակաւորները սրա տեղ շալ են գցում և գը-  
լութները փաթոթում։

Ականջներից կախում են (ոչ սմենքն՝ իհար-  
կէ), ոսկէ կամ արծաթէ գինդեր և գլխի շորերի  
տակից հանելով գուրս բերում, որ երևան։

Սրանից մի 30—40 տարի առաջ կարում  
էին եամաղ, գոյնզգոյն գործածներով (գոր-  
գաձեւ), նախշած մետաքսէ մի եռանկիւնաձև  
կտոր, որով բերաններն էին ծակում։

Նոյն ժամանակներում ծակում էին քթե-  
րըն աջ կողմից և ոսկէ կամ արծաթէ օղեր  
անցկացնում, այդ սովորութիւնն այժմ մնա-  
ցել է թուրք և քիւրդ կանոնց մի մասի մէջ։

Դաստակների վրա գործ են ածում քլ'ա'-  
զուկ' (քաղկապան) ոսկէ, արծաթէ, երկաթէ  
(վերջինս վախենալուց զերծ է պահպան) կամ  
մար'ջանից։

Վզներից մինչեւ պորտը կտխում են վզնոց  
մար'ջանից՝ մէջէ մէջ մի-մի ոսկի կամ արծաթ  
դրած, այժմ միան վիզն են պատռում, և եր-  
բեմն ոսկու կամ արծաթի շարանով։

Քուլ'ա'զա'լի տակից ոմանք կտպում են

արծաթի կամ սոկեցըած արծաթի գօտին

Մատներին (բայի միջի մատից) դնում են  
մասանիներ ոսկէ, արծաթի կամ պողպատէ:  
Եթէ միջի մատին մատանի դնեն, եղբայրը  
կմեռնի:

Աղջիկների զլիսի զարդը կամ թաշկինակ է,  
կամ զառով (սոկեթելով) ասղնեգործած  
զլխարի (բ'ր'դա'կ'), մի անճոռնի արախչին:  
Աղջիկները ծամերի ծալրերին կապում են  
արծաթի դագիադիներ (արծաթի տափակա-  
ցըած կտորներից): Ծամերի մէջտեղը վզի  
մօտ ամրացնում են օրօն. դա մի կապուտ  
փոքրիկ քար է, որ երբեմն էլ դնում են ար-  
ծաթի մէջ, եօթը ծակ ծակում. մէջտեղով  
թել անցկացնում և թելլ կապում հիւսերին.  
օրօն գործ ածելն այն նպատակն ունի, որ  
առշկ (աշք) չառնի»:

Փոքր երեխաների (տղա, թէ աղջիկ, միւնոյնն  
է) կոների շուրջը կապում են ուղտի բրդից  
գործած թելլի վրա շարած ուլունքներ, որոնք  
նունպէս կոչւում են օրօն. ալդ օրօնին կա-  
պում են արծաթի երեք թել, ծալրերին մար'-  
ջա՞ն կարում. դա կոչւում է նուր:

Գլխարկի վրա առջևի կողմը կարում են սո-  
կէ կամ արծաթի խաչ, կամ ուղղակի արծաթ  
փող, կամ ուլունք:

Միամօր զաւակների ականջին ոսկէ օղեր  
(կիւնդ) են անցկացնում։

Սղջիկների դէրեալի կոճակները երբեմն  
արծաթից են լինում։

### Ո Տ Ա Մ Ա Խ Ն Ե Ր

Կանալք ձմեռը գուլալտ են հագնում, իսկ  
ամառը ստաբորիկ են լինում. գուլալտն գոր-  
ծում են իրանք շատ կարճ ճիտքերով. գուլալտի  
վրալով ձմեռը հագնում են սաղը-սօլիր (կտ-  
պոյտ քօշեր), որ այժմ վերանալու վրա է, որի  
տեղ հագնում են կունդրա (հասարակ չուստ)։

### Տ Ա Մ Ա Ր Գ Կ Ա Խ Ն Յ Ձ Զ Կ Ե Ս Ց Ն Ե Ր

Տղամարդկանց զգեստներն այստեղ մի այն-  
պիսի խառնուրդ են կազմում, որ ուրիշ տեղ  
դժւար է գտնել. այստեղ կալտառհէք և՛ եւ-  
րոպտկան շլեապ, և՛ թուրքական փափախ (ոչ-  
խորենի), և՛ պարսկական կաթսայտձև գդակ,  
և՛ քոլտ-նամադի (թաղիքէ գլխարկ), և՛ շուբր,  
և՛ պարսկական չուխտ, և՛ սա'ր'դա'րի,  
և՛ կօշիկ, և՛ տրեխ, և՛ քօշ, և՛ արխալուդ,  
և՛ սլիջտկ ուժիլետ, առանձին-առանձին, կամ  
միքանի տեսակը մի մարդու հագին խառնւած։  
Տաճկաստանից (Սլբակից) գաղթածներն առ աջ  
քիւրդական ձեռվ են եղել հագնւելիս, այժմ  
նրանք էլ փոխւած են, երբեմն պատահում են

միայն քիւրդական խալտոքղէտ շալվարներ:

Զուռտ տեղական տարազը համարւում է այս,

Պարսկական գդակ, — համարեած ձւաձեւ,

3—4 վերշոկ բարձրութեամբ:

Նապիկ. — ինչ որ կանանցն է:

Վարժիք. — սև կամ կապոյտ կտորից (զա՛-  
դա՛ք'). Քչերն են հագնում ճերմակ:

Նալիւր. — կապոյտ չաղրալից. ունենում է  
ճերմակ տստառ. ձմեռը ոմանք բամբակ են  
դնում մէջը:

Խին (արխալուզ). — կապոյտ զա՛դա՛քից. կոճ-  
կում է վերից մինչև գօտկատեղը. կոճակնե-  
րի շուրջն օձիքից մինչև դօտկատեղը ('բուզմա')  
կապոյտ դալթանով շրջակարած:

Գլայիթ(գօտի). — երկու մատ լանութեամբ  
ու կարմիր կաշիներից. ծերերը գործա-  
ծում են բա՛րա՛լ' (շորէ գօտի). վերջերու գոր-  
ծածական է դարձել և՛ արծաթէ գօտին:

Գեյմա (պարսկական սա՛ր'դա՛րի). — կապոյտ  
մոհուդից. հասարակ դասը դրա տեղ հագնում  
է ըրդից գործած կոպիտ շալից քիւրդական բ'ա-  
զական կամ՝ ինչպէս տեղացիներն են ասում՝  
բ'ա՛խա՛զը'. սրա գործածութիւնը վերանում  
է. հագնում են գլխաւորապէս ծառաները կամ  
հրացանակիրները. առանց թեփի կամ կիսաթե-  
զգեստ է, որ հասնում է գօտկից քիչ ցած:

# ԿԵՆՑԱԳ ԵՒ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Սալմաստեցիներն ապրում են պանդխտութեան մէջ ձեռք բերւած միջոցներով. ուրիշ աչքի ընկնող զբազմունք չունեն. նոյնիսկ երկրագործութիւնը համեմատաբար երկրորդական տեղ է բռնում. զբազւում են մասամբ և՝ այդեգործութեամբ. շատ ընտանիքներ ունենում են մէկ կամ միքանի կով, բայց անամապահութիւնն առանձնապէս զարգացած չէ հայերի մէջ։ Որսորդութիւն չկա, որովհետեւ օրսի առատութիւն էլ չկա. երբեմն սիրող որսորդներն սպանում են ճնճղուկ, վայրի աղաւնի, բաղ, սարեակ, «գաշտի-խաւ» և ագռաւ, որի միան ուտում են ալստեղ։ Ծիծեռնակն ու արագիլն սպանելը մեղք է համարւում, որպէս նաև աղաւնին ու «ժժիղուշը», բայց ոչ ամենքն են խնայում դրանց։ Ծիծեռնակի մասին ասում են, թէ երբ ճնճղղուկը գնացել, հանգցրել էր աստծու ճրագը, ծիծեռնակը վրա էր հասել ու վառել նորից, ուստի սուրբ է, նրան ոչ միայն սպանել, այլ նոյնիսկ հայհուել չէ կարելի։ Ծիծեռնակին դիմելով՝ ասում են.

Ծիծեռնիկ', ծիծեռնիկ',

Աստրծու արթա՛ր' խաւիկ',

Վա՛զ քեզի քար կ'ըթա՛լի,

ծըկոթէն էրուն թա՛լի:

Իսկ ճնճղուկի մասին ասում են, թէ աստած  
հրամայել է ալսպէս. «Անիծւի էն տղէն, ո՞ր  
չի սպանի օցը՝, ճնջուղը՝ ինա՞ն՝ մուկը»։ Արա-  
գիլը նոյնպէս սուրբ է, որովհետև «Հաջ» (Մէկ-  
կ'ա) է գնում, ուստի սպանելը մեղք է։ Աղաւ-  
նին նոյի համբաւաբերն է, ահա թէ ինչո՞ւ չի  
կարելի սպանել։ Աղուալի մասին ասում են,  
թէ երբ նոյլը տապանից նրան դուրս ու-  
ղարկեց լուր բերելու, նա էլ գնաց ու չվե-  
րադարձաւ, նոյլը նրան անիծեց՝ տոելով. «Ու-  
տածտ փորտ չեթա, բօղազտ ծակւի, թտիւի»,  
ուստի ագռաւի որկորը ծակ է—որկրամոլ է.  
ազգով թուրք է նա, որովհետև թուրքերէն  
է խօսում («զ'առ, զ'առ», որ նշանակում  
է՝ ձիւն, ձիւն...):

Երբեմն լորերին բռնում են ցանցով (թոռ),  
որ նոյն կտղմն ունի համարեա, ինչ ձուկ լըռ-  
նելու սովորական ուռկանը, միայն կտարէ  
զնդակների տեղ փալտեր են կտալում եղրերից։  
Ընտանի կենդանիներն են սովորական ձին,  
էշը, ջորին, եղը, կովը, գոմէշը, ոչխարը, ալ-  
ծը, շունը, կատուն (կատւին սպանելը մեղք  
է, որովհետև նա Քրիստոսի թաշկինակն է.  
Քրիստոս ճաշի է եղել նստած, մկները դուրս

են թափւել և յարձակւել սփոսցի վրա. Քրիս-  
տոս իր թաշկինակը կատու է դարձրել, որը  
կոտորել է անպատկառ մկներին ու կերակուր-  
ներն ազտտել). ուղտ միայն թուրքերն ու-  
նեն Կենդանիներին սոսկալի տանջանքների  
են Ենթարկում, մանաւանդ էշերին, որոնց՝  
բացի դագանակի հարւածներից՝ ալլեւ բիզով  
ծակոտում են, որպէսզի արագ գնան:

Տեղում սալմաստեցիներն զբաղւում են  
(քչերը) նաև՝ առևտրով (գլխաւորապէս Դիլի-  
ման աւանում), մանրավաճառութեամբ, մը-  
սագործութամբ (իւրաքանչիւր գիւղում մէկ-  
երկու հոգի), հիւսնութեամբ (ոչ ամեն գիւ-  
ղում, եղած տեղերն էլ մէկ-երկու հոգի), դարք-  
նութեամբ (ոչ ամեն գիւղում), մշակութեամբ, դեր-  
կութեամբ (քիչ), կօշկակարութեամբ (եր-  
կու ընտանիք) և ալլ մանը գործերով: Բայց ինչ  
որ աչքի է ընկնում, դա ա'լքօհօլ՝ ավաճառու-  
թիւնն է (գիւղում 5—50 մտրդ): Ներամապա-  
հութիւնը հազւագիւտ երեսովն է, որպէս և  
մեղւարուծութիւնը:

Լայն և հարթ ճանապարհներ ջինելու  
պատճառով փոխադրութեան միակ միջոցը գը-  
րաստներով է, երբեմն գործ է ածում սալ-  
լակ՝ հեծնելու համար, բայց այն էլ գլխաւո-  
րապէս ձմեռները: Ծանրութիւններ փախա-

դրելու համար գործածուում են ընդհանրապէս  
էշերը, իսկ հեծնելու համար ձիերը։ Մի ալսպի-  
սի անապահով և արևելեան երկրում քնական  
էր, որ դրսի աշխատանքին կանալք քիչ մասնակ-  
ցութիւն ունենալին, բայց նրանք դուրսն  
էլ են աշխատում, մանաւանդ արտը հնձելիս։  
Զօլա գետի վրա կա միմիայն մի քարէ կա-  
մուրջ Հա'բա'շ՝ գիւղի մօտ և մի փալտէ կամուրջ  
Ղալասարի մօտ, ուստի ձմեռը գետի երկու կող-  
մի գիւղերի լարաբերութիւնները դժւարա-  
նում են, մանաւանդ կոտրող սառուցների  
պատճառով։

Հողի սակաւութեան և անբերրիութեան պատ-  
ճառով երկրագործութիւնն՝ ինչպէս ասացինք՝  
հաց մատակարարող զբաղմունքը չէ այս գա-  
ւառում. սակայն և այնպէս ժողովուրդն օգ-  
տուում է հողից, որքան հնարաւոր է, Ցանում  
են գլխաւորապէս ցորեն, առւոլտ և գարի (քիչ).  
առւոյտը համարւում է ամենաձեռնտուցանքը.  
Երկու-երեք տարի միւնոյն հողն առւոյտ է  
տալիս, մինչդեռ մի տարի հացահատիկ ցա-  
նած հողը միւս տարին մնում է անմշակ,  
որովհետեւ ուժից զրկուում է, բերք չէ տա-  
լիս։ Լաւ ջրւած տեղերում մի տարի ցորեն  
ցանելուց յետո կարելի է լինում հետեւեալ  
տարին առւոլտ ցանել երբեմն։

Երկրագործական գործիքներ. — Կ'ուլտահն' (գութան), վսկի (արօր), խոփի, մանջ (մաճ), լուծէ, սամի, սամաթեռ (սամոտէն), բօսա (կալում տնկած փայտ, որից կապում են եղբ, որպէսզի կալսելիս կալի շըջանից դուրս չգա), ջա՛ռ՝ ջա՛ռ՝ (կամն), մա՛ր' զո՛ն (մանգաղ), կերնդի, մարանդի, հեսան (քար, որի վրա սրում են մանգաղը և ալլն), մանգեռ (փոցիր), օթակ (թակ, որով մանըացնում են քոռուճները), ք'ա՛ռեցկ (քամելի, եղոլի), թիակ, ամո՛լ (խոփի մէջ մտնող փայտը) և տափան:

Հողը հերկում են եզներով և երբեմն դամէջներով։ Հողի պարարտացում համարեալ աեղի չէ ունենում։ Իենդանիների աղբը գործածում են իբրև վառելիք, իսկ իբրև պարարտացուցիչ միջոց շատ քիչ է գործածում։ Արտերը ջրամբի են, ուստի բաժանում են շարքերով և ջուրը բաց թողնում մէջը։

Ալգեգործութիւնը՝ մանաւանդ հալերի մէջ՝ շատ քիչ է զարգացած, որպէս և պարտիզպանութիւնը։ Տնկում են հետեւեալ պահատու ծառերը — խնձորենի, տանձենի, կեռասենի, ծիրանի, ընկուզենի, սալորենի, դարալու (դամբուլի), սերկելենի, գեղձենի, փշատի, նշենի (քիչ), նոնենի, թթենի, թզենի (քիչ), գիլանառի, բացի այդ և խաղող։ Ժողովրդի կարծիքով՝

լնկուզենին տան մօտ չի կարելի տնկել, որովհետեւ վրան սատանա կտ:

Փայտից և թաղիքից պատրաստած խրտւիլակներ են տնկում պարտէզներում ու արտերում, որպէսզի «աշկ չառնի» և թռչունները չվնասեն:

### ԶԱ. ՓԵՄԸ

Շանրութեան. — մսղալ, փոնզա (2 մսխալ), ոռւսական գրվանքա, դրամ՝ (1 գրկ. 42 մըսխալ), բաթման (5 դրամ), նուկի (16 դրամ): Կշռում են դափնանով և բ'ը շեռքով:

Երկարութեան. — սիա ( $\frac{1}{8}$  գ'ա'զ'), գ'ա'զ' (1 արշ.  $\frac{7^9}{17}$  վերջոկ ոռւսական), աղաջ (մօտ  $7\frac{1}{2}$  ոռւսական վերստ),


Հեղուկի. — չարեք' (մօտ  $\frac{1}{2}$  ոռւս. շիշ), նուկի (մօտ 1 շիշ), ման (2 նուկի), դրամ:

Բնիդեղէնների. — չանաղ (մօտ  $3\frac{3}{4}$  դրամ) ծանրութեան ցորնի չափ), թուրա' (4 չանաղ), կէս թուրա', սահիլամ (5 թուրա'), պեռ (բեռ, 10 թուրա', Խօլում 20 թուրա'):

Փողի. — պղնձէ՛ կէս-փուլ կտմ թամբա՛լ՛, (մօտ  $\frac{1}{8}$  կոպէկ), փուլ կտմ բիստի (2 կէս-փուլանոց), երկու փուլ: Չուղունէ (9), շոհի (3 փուլ, մօտ  $\frac{2}{3}$  կոպէկ), իւզալթըն (2 շահանոց), աբբասը (2 հատ 2 շահանոց — 4 շահի):

Արծաթէ՝  $2^1/2$  շահանոց, 5 շահանոց, փահ-նաբաղ (10 շահանոց), զռան (20 շահանոց կամ 1000 դինար), բէալ (1 զռանանոց և 5 շահանոց), դուհիա'զար (40 շահանոց, 2000 դինար), մանեթ (3 զռան 10 շահի), փան'ջ'հա'զարի (5 զռանանոց): Թղթէ (անգլիական բանկի պատրաստած և քիչ գործածւող՝ թուման' (10 զռանանոց), ասք'ը'նազ (2 թումանանոց), 3, 5, 10, 20, 25, 50, 100, 500, 1000 թուման'անոց: Ոսկէ՝ (քիչ) 5 զռանանոց (ծախւում է 12 դռանով), 1 թումանանոց (ծախւում է 25—32 զռանով), 3 թումանանոց (ծախւում է 5 թումանով), 5 թումանանոց (ծախւում է 12 թումանով), 10 թումանանոց (ծախւում է 32 թումանով):

Բոյսերի.—գա'ս'տա' (մի բուռ հասկ), խուրձ (8 դա'ս'տա'), տէզ (գէզ, 50—150 խուրձ):



— 38 —  
ՀԱՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ  
ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԵՐ

ԱՄՐԻՄՆՅԻԹԻՒՆ ԵՒ ՀԱՐԱԿԻՔ

Ամուսնացողների մէջ սիրո զգացմունքն առ միմեանս ոչ միայն զարգացած է, ալ գոլութիւն չունի, որովհետեւ ամուսնութիւնը կատարւում է շատ վաղ—տղան լինում է 14—18 տարեկան (երբեմն աւելի վաղ, բացառիկ դէպքերում միքիչ ուշ), իսկ աղջիկը 9—13 տարեկան (բացառիկ դէպքերում մինչև 15 տարեկան); Բնական կիրքն ամուսնանալու ժամանակի քիչ թէ շատ զարգացած է լինում միայն տղամարդկանց մէջ, իսկ աղջիկները սարսափով կամ չհասկանալով են նայում ամուսնութեանը վրա։ Զահիլ կնոջ գերն ընտանիքի մէջ համարեած կրտսորական է, նրա ձայնը չի անցնում, տղամարդկանց հետ ոչ միայն իրաւունք չունի խօսելու, ալև նստելու կամ ճաշելու։ Մի ժամանակ (20—30 տարի առաջ) մինչև եօթը տարի կանայք իրաւունք չունեին խօսելու նունիսկ իրանց ալբերի հետ, իսկ այժմ միայն եօթն օր չեն խօսում, բայց մօտ կէս տարի երեսները ծածկած են պահում նրանցից։ Կնոջ հետ խիստ վարւող ա-

մուսինը — մանաւանդ ծեծովը — համարւում  
է լու տղամարդ նոյնիսկ ծեծող կնոջ կողմից.  
«ախ (ահ) ի տալրի»՝ ասում են: Տան փռքրիկ  
(7—8 տարեկան) երեխայի հետ անգամ նո-  
րահարսներն իրաւունք չունեն խօսելու մի-  
քանի տարի կամ երեսները բանալու: Ամեն-  
քը հրամայում են նորահարսներին:

Կանալք կատարում են ամեն տեսակ աշ-  
խատանք — և՝ տնալին, և՝ դաշտալին. ոչ մի-  
այն իրանց արտերն են հնձում, այլև վարձ-  
ւում են ուրիշներինը հնձելու:

Կնոջ սըրութիւնը յարգւում է ալստեղ: Զնա-  
լած ահոելի չափեր ընդունած պանդխուռ-  
թեան՝ ալստեղ տարածւած չէ սեռական ան-  
բարոյականութիւնը. բացառութիւնները հազ-  
ւագիւտ են. շնացող կնոջը հասարակութիւնը  
երբեմն սոսկալի պատիժների է ենթարկում,  
եթէ պատահում է ալդպիսին. իշխ վրա է նստե-  
ցնում՝ երեսը դէպի պոչի կողմը դարձրած,  
մազերն ածիլում, երեսը մուր կամ մածուն  
քսում ու շրջեցնում գիւղի միջով ևալին ևալին:

Առևանգելու սովորութիւն չկա, բայց աղ-  
ջիկների (մանաւանդ հարուստների) պատճա-  
ռով կոիւ անելը հազւագիւտ երեոյթ չէ  
տղաների մէջ:

Հարսանիքի գլխաւոր բաժանումները հե-

տեսեալներն են, ախչիկ՝ խաւնել (աղջիկ) հաւ-  
ւանել, աղջիկում), տղատես, բէլ (բէհ,  
գրաւական, աւանս տալ), նշան, խաւնիս (հար-  
սանիք), ալսակճաշ:

Հարսանիքները գլխաւորապէս բարեկենդա-  
նին են տեղի ունենում: Հարսանիքը տեսում է  
երեք օրուգիշեր: Ծախս լինում է ընդհանր-  
ապէս 30—200 թուման՝ փեսալի կողմից և  
20—100 թուման՝ հարսի կողմից:

Փեսալի և քաւորի ազգականները, որոնք  
հարսին որևէ ընծաեն տալիս (չարդաթ, ուր-  
փա՞ն՝ գ, դօ՛շ՝ լիդ՝, փող ևալն), հարսի կողմից  
փոխադարձարար ստանում են նախշած շապիկ,  
թասակ, թաշկինակ, գուլալա ևալն մինչև  
հարսանիքը: Փեսան (եթէ քիչ-շատ կարողու-  
թիւն ունի) նշանդրէքի ժամանակ հարսնա-  
ցւին ընծայում է մի զոյգ ճթիկ (տես՝ «Ըզ-  
գեստ և զարդ»), ոսկէ զինդ, ոսկէ կամ  
արծաթէ գօտի, ոսկէ կամ արծաթէ գուլ՝  
(տես՝ «Զգեստ և զարդ»), ոսկէ վզնոց  
(3—25 ոսկի, գլխաւորապէս ոռւսական, ար-  
ծաթէ կամ ոսկէ շղթալի վրայ շարած), ոսկէ  
կամ արծաթէ (աղքատները ոլողալան) բլա՛-  
զուկ՝ (դօլբաղ, բոլէտ—բազկապան)՝ վրան  
երեմն ոսկիներ կամ ոսկէ (երբեսն արծաթէ,  
աղքատները ալողմլատէ) դնդեր կախած:

Հարսի օժիտը (բօխճա) բաղկացած է լինում  
հետեւեալ իրերից. Հագնելու շոր իր համար,  
փեսալի ազգականներին բաժանելու համար  
շորեր — շապիկ, երեսորբիչ, գուլպա և ալն.  
Հարսւստները բերում են տեղաշորեր իրանց  
համար, մի հատ ափսէ և մի կտուէ պտուկի  
խուփ (այս վերջինը գողացւում է հարսի հօր  
տնից և բերւում փեսալի տունը, որպէսզի  
հարսւստ „խարսի պերանը խուփ ըլլի“): Փե-  
սան և քաւորը հարսանիքից յետո կանչւում  
են միասին հարսի հօրանց տունը և «խա՛լ'ա՛թ'»  
տալիս — քաւորին մի զոլգ գուլպա, իսկ փե-  
սալին մի արխալուզ և մի երեսորբիչ:

Հարսանիքը կատարւում է հետեւեալ ձեռփ.

### Ա. Գ. ԶԵԿ ՈՒԶԵԼ

Ամուսնանալ ցանկացող տղան իր մի ազգա-  
կանի հետ դուրս է գալիս գիւղի փողոցները  
կամ մի ուրիշ գիւղ աղջիկ փնտրելու. իրանց  
ծանօթներից հարցնում և իմանում է, թէ  
այսինչ տեղը լաւ աղջիկ կա: Տղան դիմում է  
այնտեղ և իրան ծարաւ է ձեւացնում աղջկա-  
ներկալութեամբ. Եթէ աղջիկը տղային հաւա-  
նեց, ջուր է տալիս տղային, իսկ եթէ տղան  
հաւանում է աղջկան, իր հետ եկած ազգակա-  
նին գլխով նշան է տնում. ազգականը տղայի

մտադրութիւնը յալտնում է աղջկա մօրը. եթէ մայրը համաձայն է, բաւական չեմուչում անելուց յետո բէլ (բէհ, գրաւական) է վերցնում տղալից մի ոսկէ (աղքատներն արծաթէ) մատանի. Ապա հիւրասիրւում են փեսան ու իր ազգականը և արդէն միամտացած՝ վերադառնում տուն։ Միքանի օր յետո տղալի մայրը կամ ազգական մի կին գնում է հարսնացւին տեսնելու, որև հիւրասիրւում է թեթև կերպով. սակայն նրա աղջկանը հաւանելը կամ չհաւանելը նշանակութիւն չունի տղալի համար։

Եթեմն դեռ երեխաները չծնւած՝ ծնողները վճռում են, որ եթէ մէկը տղա ունեցաւ, միւսն աղջիկ, ամուսնացնեն նրանց. և եթէ ապագա զաւակներից մէկնումէկը պակասութիւն էլ է ունենում, ալդ բանը չէ արգելում ծնողներին իրանց վճիռն իկատար ածելու։ Եթեմն էլ օրօրոցի մէջ են նշանում։

### Ն Շ Ա Ն

Աղջկա ծնողները հրաւիրում են իրանց և փեսալի ազգականներին իրանց տուն։ Փեսան գնում է օղի, գինի, միս կամ մի ոչխար, ոչխարի եղջեւըները խնձորով գարդարում, գոյներով (կարմիր, կանաչ) ներկում ոչխարի բուրդը և յանձնում մարդկանց՝ հարսի տունը տա-

նելու։ Յաճախ ուղարկում է և՛ մըգեղէն սւանուշեղէն (շիրինի)։ այս վերջինը տանում են և՛ փեսալի ազգականները։ Ապա փեսան գալիս է աղջկա տունն իր երիտասարդ ազգականների հետ։ Փեսալի քիչ նստելուց լետո աղջկան զարդարած դաւրա են բերում, քահանան միքանի սովորական խօսքերից լետո հարցնում է աղջկան, թէ ցանկանում է արդալին ամուսնանալ. աղջկա համաձայնութիւնը գլխի նշանով է ստացւում։ Եթէ պատասխանը բացասական է լինում (հտզւագիւտ), դըրան էլ նշանակութիւն չեն տալիս, տէրտէրն սկսում է օրհնել նշանն—աղջկա հարսանիքի շորերն ու մատանին։ Օրհնելուց լետո քահանալին և երեսփոխին տալիս են մի-մի դուհիա՝ զար (քահանալին տալիս են նաև ոչխարիկաշին, իսկ ժամհարին գլուխը, ոտները, թռքերն ու փորոտիքը) և շնորհաւորում երկու կողմին։ Դրանից լետո սկսում են ուտել-խմել։

Հարսանիքն ընդհանրապէս կատարւում է նշանից միքանի օր լետո, բայց երբեմն էլ տարիներով նշանւած են մնում. այս դէպքում փեսալի մալրն ամեն մի նշանաւոր տօնի բատիպւած է լինում հարսնացւի տունը տանել «պաժին» (բաժին)՝ եփած հաւեր, մըգեղէն, անուշեղէն, ձու, գալթա, հալւտ, կարկատ

(բոված հունգեղէն) և ալին և մի կամ երկու զնան հարսնացւին է տալիս, որ «խաչխամբուր» տա կամ մոմ առնի, վառի եկեղեցում:

### ՀԱՐՍԱԿԻՑ

Պատկից մի օր առաջ փեսալի տանն սկսում են հարսանիքի պատրաստութիւնները տեսնել և մի ոչխար (երբեմն և' մի հորթ) ու հինա են ուղարկում հարսնացւի տունը զուռնալի առաջնորդութեամբ. բայց զուռնաշիները չեն հասնում հարսնացւի տունը, կէս ճանապարհից ետ են դառնում փեսալի մօտ: Ոչխարը մորթում են հարսնացւի տանը և սկսում կերակուր պատրաստել: Ալդ ժամանակ սկսում են թխել հացը. ալիւրը մազում են ջահիլ աղջիկները, որպէսզի իրանք էլ տմուսնանան: Երեկոյեան ջահիլ հարսներն ու աղջիկներն իրանց ձեռները հինալում են փեսալի ուղարկած հինայով և ապա սկսում քէֆը, որն սկսում է և' փեսալի տանը: Փեսան ու խաչեղբարը մի խումբ ջահիլների հետ «դհօ՛լ՝ - զուռնալով» շրջում են այն մարդկանց տները, որոնց ուղում են հրաւիրել հարսանիքի. ալնտեղ եղողներին ծաղկի մի տերեւ են տալիս, մի-մի բաժակ գինի մատուցանում, խմողները շնորհաւորում են,

պարում և զուռնաչուն «շաբաշ» տալիս փեսալի, խաչեղբօր և միւսների անունով։ Ալդակէս տնէտուն շրջելուց լետո զուռնալի նւագածութեան տակ մորթում են մսացուն, որից մի-երկու ժամ անց փեսալի տունն են ժողովւամ հրաւիրւածները և թէլ խմելուց ու քիչընթրելուց լետո սկսում են «գ'օ'ն'դ'» պարել. առ համարեած միօրինակ, ձանձրալի մի պարէ, որ տեսում է ամբողջ գիշերը մինչեւ լուս. շրջան են կազմում և պատւում զուռնալի և թմբուկի նրւագածութեան տակ. լոգնողը թողնում է իր տեղը, որ մի ուրիշն է բռնում։

Միւս օրն առաւօտեան փեսալի տանը հաց են ուտում, ապա զուռնալով դիմում աղջկա տունը, այնտեղէլ հաց ու չում, մինչեւ որ աղջկան զարդարում են. ալդ զարդարանքն անողինը փեսալից չորս դրան փող ստանում նւէր։ Յետո երբ ուզում են պսակելու տանել հարսին, վերջնիս եղբայրը (եթէ եղբայր չունի՝ հօրեղբօր որդին) դուռը կտրում է և թոյլ չէ տալիս դուրս գտլու, մինչեւ որ փեսան մի զռան փող չտա։ Ապա առաջ են ընկնում զուռնաչին ու թմբկահարը, նրանց հետեւում են փեսան, հարաը և խաչեղբայրը մի դժի վրա, ապա փեսալի (թաքաւո՞ր) երկու «աղար»-ները (մակարները), ապա մնացած հա-

սարակութիւնը, և դիմում են եկեղեցի։ Պը-  
սակելու ժամանակ եկեղեցու բակում պարում  
են, մինչև որ պսակը վերջանում է, եկե-  
ղեցուց դուրս են գալիս, և հարսն ու փեսան  
երևալուց՝ ջահիլներն սկսում են հրացաններ  
պարպել ու աւելի եռանդով պարել։ Այդտե-  
ղից հարսին բերում են տղայի տունը։ տան  
բակում հարսի ու փեսայի գլխին մրգեղին են  
ցանում, որ երեխաները ժողովում են։ Տուն  
մտնելու ժամանակ փեսայի մայրը դռան շեմ-  
քում մի կաւէ աման է կոտրում, որ նորա-  
պսակների «շարը տանի» այդ ամանը։ Տուն  
մտնելուց ջահիլները բռնում են փեսային և  
սկսում ծեծել, մինչև որ խաչեղբարը (քա-  
ւո՞ր) միջամտում և ընծաներ խոստանալով  
(որը համարեած երբէք չէ տալիս)՝ ազատում  
է փեսային։ Նորից սկսում են ուտել և  
գ'օ'ն'դ' խաղալ։

Հետեւալ օրը կողմնակի մտրդիկ չեն գա-  
լիս հարսնետուն, հարսն ու փեսան կէս ժա-  
մի չափ գ'օ'ն'դ' են խաղում, իսկ այդ պարի  
ժամանակ փեսայի մալրն ու մի ուրիշ ազգա-  
կան կին՝ վառած մոմերը ձեռքներին՝ փե-  
սայի ու հարսի հետ պարում են, նրանց  
ետեները դիրք բռնած։ Դրանով հարսանիքը  
վերջանում է։

Միքանի օր անցնելուց յետու աղջկա ծնող-ները հրաւիրում են իրանց մօտ փեսալին, խաչելըօրը, «ազաբ»-ներին և միքանի ջահիլ-ների, ինչուք սարքում և փեսալին նվիրում մի արխալուղ ու մի երեսսրբիչ, իսկ քաւորին մի զոլդ գուշպա:

Ալրու պսակն այս հանդէսները չէ ունե-նում, առանց աղմուկի պսակում ու տուն են քերում հարսին:

### ԾՆՈՒՆԴ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Յղի կանալք շրջապատում են որոշ հոգա-տարութեամբ, ծանր գործեր չեն կատարում, նրանց ցանկացած ուտելիքը-խմելիքը տալիս են: Յղիներն ընդհանրապէս միս չեն գործածում, այլ իւղեղէն կերակուր:

Երկունքի ժամանակ ներկա են լինում մի-այն կանալք. տատմալը ծննդկանի ձեռքը մի շամփուր է տալիս, սենեակով շրջեցնում և նստելու տեղը փթիր ցանելով՝ նստեցնում: Եթէ ծնւածը տղա է, առաջին լուր տանողը հօրից «մուշտուլուղ» է ստանում երկու դռան: Նորածնին աղում են և պորտը կտրում: Ծը-ննդկանի գլխատակին դնում են նարեկ, շամ-փուր կամ սուր, որ սատանաները մանկանը չփոխեն իրանց մանկան հետ: Երեխալի

կտրած պորտը գցում են այն մարդի տան  
բակը, որի հարստութիւնը կամ արհեստը  
ցանկալի է որ երեխան ունենա ապագայում։  
Ծննդկանին սոխ են տալիս ուժելու, որպէս  
զի բերանից վատ հոտ գա և սատանան չմտնէ  
նրա բերանը։ Ապա ծննդկանին տալիս են  
ուժելու միմիայն մեղք և իւղեղէն—ձը-  
ւածեղ, հասուգա՝ (դօշաբով և իւղով պատ-  
րաստած ալիւր) եալն. ջրի տեղ թէլ են տալիս  
խմելու։ Երեխան ծնւելուց մէկ-երկու ժամ լե-  
տո ժողովւում են ծննդկանի ազգականները ծը-  
ննդկանի տունը՝ իրանց հետ բերելով քաղ-  
ցը կերակուրներ և այնտեղ հիւրասիրուում։  
Երեխալին կնքելուց առաջ քաւորին մի գը-  
լուխ շաքար են ուղարկում տատմէրի ձեռ-  
քով՝ իբրև հրաւէրի նշան. քաւորն առնում  
է երկու գ'ա'զ' շալ՝ երեխալին փաթաթելու-  
և վերջը նրա համար շոր կարելու, չոր միրդ,  
մեղք և գալիս ծննդականի տունը. լետո երե-  
խալին փաթաթելով իր գնած շալով՝ տանում  
է եկեղեցի տատմէրի հետ միասին և կնքելուց  
լետո նորից ձեռների վրա դնում, բերում. ծը-  
ննդկանը համբուրում է քաւորի ոտը և երե-  
խալին առնում նրա ձեռից։ Ապա կանչում են  
ազգական տղամարդկանց, որոնք շնորհաւորե-  
լով ու ճաշելով (ալդ ժամանակ տէրտէրին ձը-

ւածեղ են տալիս՝ ցըւում են, Դրանից յետո  
կանչում են բարեկամ կանանց, որոնք իրանց  
հետ ըերում են ձու, մեղք ևալն. նրանք  
նորածնին համբուրելով՝ ճաշում են և մրգե-  
ղէն ուտում:

Մի երկու օր յետո մի շապիկ են կարում,  
մէջք միրգլցնում և ուղարկում քաւորին ընծա:

Երեք օր յետո երեխալին մեռոնից հանում  
են (լողացնում), և այդ լողացումը շարունակ-  
ում է քառասուն օր՝ օրական մի անգամ:  
Լողացնելիս՝ տատմալը բռնում է երեխալի  
վզից և թափահարելով ասում. «Ճիղլա վզիկ,  
թափտէ ճ'րիկ», որպէսզի երեխան շուտ մե-  
ծանա: Մինչև քառասունքը լրանալը ծնընդ-  
կանը տանից դուրս չէ դալիս:

Երեխալի օրօրոցի մօտ կամ գլխատակին դը-  
նում են շամփուր, որ սատանաները չմօտե-  
նան. դուրս տանելու ժամանակ երեխալի  
կրծքին հաց են դնում նոյն նպատակով:

Երեխալի առաջին ատամը երեալուց «ատ-  
մախատիկ» (ատամի հատիկ—ցորնից, սիսե-  
ռից և ալլ հունդերից պատրաստած կերա-  
կուր) են եփում, միքանի հատիկ տալիս  
երեխալին, մնացածն իրանք վալելում, որ-  
պէսզի երեխալի ատամները շուտով և ան-  
ցաւ դուրս դան:

Երեխալի գցած ատամները դռան շէմքում  
թաղում են և ասում. «Ա՛ռ քեզի շան ա-  
տամ, տու (տուր)ընձի կ'առու (գառի) ատամ»:  
Երեխալին ծծից կտրելու համար ծծերը  
պղպեղ կամ այլ դառը բան են քսում:

### ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

#### ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂ

Ծնողներն արտաքուստ առանձին սէր չեն  
ցոլց տալիս դէպ իրանց զաւակները. Հայրե-  
րը վախ են ազգում երեխաներին, մայրերն  
էլ լաճախ ծեծում են ու հայհոլում: Երե-  
խան մի փոքր հասակն առաւ թէ չէ, տան  
գործերի մի մասը նրա զզին են բարդում—  
ջուր բերել, տունն ու բակն աւլել, աղբար-  
ուել, գոմը սրբել, կովերին ու ընդհանրապէս  
անասուններին խնամել և օլլն և ալլն. այս  
բոլորն սկզբում կատարել են տալիս տուրու-  
դմբոցսվ, հայհոլանքներով, անէծքներով, մին-  
չե որ երեխան հաշտուում է իր դրութեան  
հետ: Ծնողներն իրանց զաւակներին համա-  
րում են իրանց ամենահաստատուն սեփականու-  
թիւնը, ինչպէս կուզեն՝ այնպէս էլ կվարւեն  
նրանց հետ. մանկան վիճակով օտար մարդուն  
շահագրգուելը միայն ծնողների զարմանքը  
կարող է շարժել:

Այս պարագալում պարզ է որ երեխայի դաստիարակութեան վրայ առանձին ուշագըր- րութիւն չէ դարձնեում. նոյնիսկ դպրոցների համար, որոնք գոյութիւն ունեն Սալմաստի միքանի գիւղերում օտարների նալաստով, գիւ- ղացիները շատ էլ ուրախ չեն. մանուկներին (10—12 տարեկան) ուշ աշնանն ուղարկում են (ոչ բոլորը, շատերն ստիպմասք) դպրոց, երբ այնքան էլ պէտք չեն նրանք, և գարու- նը բացւելուն պէս գործի կանգնեցնում, այն- պէս որ գարնանը աշակերտների մի մասը զրկուում է սովորելուց, միւս մասն էլ անկա- նոն է լաճախում իր դասերին. Դասագրքերի և ընդհանրապէս դասակատն պիտուքների հա- մար մեծ գժւարութեամբ ծախսած գրօշների պատճառով երեխան ենթարկում է ծնողների թուքումուրին. Մէկ-երկու տարի դպրոցն ան- կանոն լաճախելուց լետո ընդհանրապէս վերջա- նում է երեխայի դաստիարակութիւնը, և նրան ուղակում են Ռուսաստան փող աշխա- տելու...

Այսպիսի հանգամանքներում երեխան մե- ծանալով՝ չէ կարող իհարկէ առանձին սէր տածել դէպ իր դահիճ ծնողները, նոյնիսկ նր- անց ծերացած հասակում:

Սալմաստեցի երեխաները խաղերի համար

ժամանակ չունեն, ուստի խաղերի տեսակները  
զարգացած չեն նրանց մէջ, եղածներն էլ քիչ  
են խաղացուում, ինչպէս օրինակ «գովաշախ»—  
մէկը լենուում է պատին կամ ծառին, 2—4  
երեխա էլ մէջքները թեքած կանգնում են՝  
իրար լետեկից բռնած. միւս երեխաները վա-  
զելով՝ դալիս, նստում են նրանց մէջքներին,  
և մէկը հաշւելը նստողներից մէկնումէկն ընկաւ,  
խմբերի գերերը փոխուում են: «Բըռ» (կտրուկ)  
— երկուսը կանգնում են երեսներն իրար հակա-  
ռակ դարձրած, երկուսն էլ թեքւում են նո-  
րից իրար հակառակ և այդպիսավ կազմում մի  
շրջան. հակառակ խմբի երեխաները վազելով՝  
դալիս են և ձեռքներն առաջին թեքւածի մէջ-  
քի վրա գնելով՝ գլորւում են միւս թեքւա-  
ծի մէջքին և միւս կողմը կանգնում. եթէ  
մէկը չկարողացաւ անցնել, խմբերի գերերը  
փոխուում են: «Երգէն էշ»—ամենքն իրար վրա-  
լով ցատկում են այնքան ժամանակ, որքան  
որ ցանկանում են: «Բուջաղ» (անկիւն) — իւ-  
րաքանչիւրն ընտրում է մի անկիւն, մէկը  
մնում է զուրկ և կանգնում մէջտղեր. ան-  
կիւն ունեցողներն իրար հետ փոխանակում  
են իրանց տեղերը. այդ ժամանակ եթէ ան-  
կիւնից զրկւածը կարողանում է հասնել և

բոնել որևէ անկիւն, միւսն է զրկւում ևալն:

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՍԱՆՔ

Դժւար է տսել, թէ ալս գաւառում ընտանիքի մէջ ծնողներից ո՞րն է աւելի լարգանք վալելում, մալրը, թէ հալրը, որովհետեւ ընտանիքի անդամների մէջ տչքի ընկնող կապ չէ նկատւում, կարծես ամենքը խորթ են իրար. միայն ալս կարելի է ինկատի ունենալ, որ հալրն ընդհանրապէս տանը չգտնւելով, պանդիստութեան մէջ լինելով, մալրն է մնում տան մեծը, հետեւապէս նրան են ճանաչում ընտանիքի անդամներն իրեւ կարգադրող, կառավարող: Ծերերն առանձին լարգանքի չեն արժանանում այստեղ:

Մարդն իր կնոջը կոչում է «էլ, տօ, էն, էս, էտ»,» որպէս և կինն իր մարդուն, անունները չեն տալիս թէ իրար և թէ ուրիշների մօտ: Կինն իր ամուսնու մօրն անւանում է «կեսուր, մա'մա'», ամուսնու հօրը՝ «կեսրար, դա'դա'», ամուսնու եղբօրը՝ «տէք'ը'ր», ամուսնու քրոջը՝ «տալվ» ևալն: Երեխան հօրն անւանում է «դա'դա', տ'մի, բաբա»,» մօրը՝ «մա'մա', նա'նա', դա'դօ', խարս», տատին՝ «մամիկ'», քրոջը, հօրաքրոջն ու մօրաքրոջը՝ «դա'դօ'», հօրեղբօրը՝ «կակօ, ա'մի», մօրեղբօրը՝ «քեռի, դա-

լի», պապին՝ «պապիկ» ևալն:

Թէ կինը որքան ճնշւած է ալստեղ, այդ երեւմ է նրանից, որ իրաւունք չունի տղամարդկանց հետ նստելու, ուտելու, խմելու, իր ձայնը բարձրացնելու. նա նոյնիսկ «օրօր» չէ տսում երեխալին, որպէսզի ձայնը դուրս չգտնալոց սկեսուրի և հարսի միջև տչքի ընկնության նույնութիւններ չեն նկատեռն, ինչպէս մեր շատ գաւառներում։ Տեգրկանանց մէջ էլ կոփւներ չեն սկատահում, որովհետեւ ալստեղ սովորութիւն չունեն մեծ ընտանիքներով ասլրելու։ մէկն ամուսնացաւթէ չէ, բաժանեռն է իր ընտանիքից և առանձին տուն կազմում։

Չնալած տղամարդկանց երկար տարիներով օտարութեան մէջ մնալուն՝ սեռական անբորոյականութիւնը կանանց մէջ տարածւած չէ շնորհիւ այն հանգամանքի, որ կանանց համար դրսի կեանք չկա, նոյնիսկ հարեւանական լարաբերութիւնները զարգացած չեն ալստեղ։

Սաստիկ տարածւած է բամբասելու ախտը, մանաւանդ կանանց մէջ, դա սալմտստեցու ամենավատ արատն է, ալքօհօլավաճառութիւնիցն անգամ վատ։

Զահիներն իրար դուր գալու համար միջոցներ չեն ձեռնարկում։ Հագնեռն են շատ վատ, համարեալ ցնցոտիներ, մինչև որ ամուսնա-

նում են: Արգելւած է տղային և աղջկան իրար հետ խօսելը կամ կանգնելը:

ՄՏԱԿՈՐ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ՅԱՏԿՈՒԹԻՒՆԵՐ

Հասակաւորների մէջ խաղեր չկան և չեն էլ կարող լինել, որովհետև գիւղերում հասակաւոր տղամարդ շատ քիչ կարելի է գտնել, համարեած ամենքն օտարութեան մէջ են լինում: Պարեր նոյնպէս գոլութիւն չունեն բնիկների մէջ. այժմ Սալմաստում միայն երեք տեսակ պար կա, որ մտցրել են աղբակեցի գաղթականները. — «գ'օ'ն'դ'»՝ խմբական է, որ պարում են տղամարդիկ և կանալք խառը. «ծեռնախաղ»՝ կտնանց կենդապար է, չափազանց տրգեղ և անվայելուչ. «շա՛ռանի»՝ տղամարդկանց պար է, աւելի ճիշտը՝ փայտախաղ. երկու տրդամարդ աշխատում են փայտերով իրար գըլխից գլխարկները թոցնել:

Երգեցողութիւնը գոլութիւն չունի այս ժողովրդի համար. ոչ միայն հայերէն, ալլև թուրքերէն երգել չգիտէ սալմաստեցին, չափազանց պրօզայիկ ժողովուրդ է: Երաժշտութիւնը նոյնիսկ օտար է սալմաստեցուն, եթէ հաշւի չառնենք այնքան էլ չտարածւած «զուռնան ու դրիօ՛լը», որոնք գործ են ածւում հարսանիքների

ժամանակ միայն։ Վերջերս սկսել են  
մուտք գործել (մէկ-երկու տեղ միայն)  
բառն ու ք'ամա'ն'չա'ն'։

Հոգեկան հիւանդութիւնները, խելագարու-  
թիւնը մասնաւորապէս, բաւական աչքի ընկնող  
երևոյթ են։ Ապշութիւնն է աւելի տարածւած  
տեսակը։

Ինչպէս ասուցինք, ալստեղ զարգացած չեն  
հարևանութիւնը և դրսի կեանքը, ապրում  
են քաշւած, իւրաքանչիւրն իր համար և ի-  
րանով, եթէ կուիւներ ու անբաւականութիւն-  
ներ պատահում են երբեմն, ալդլինում է բամ-  
բասանքի պատճառով կամ այդու դուռը քան-  
դելու, ծառը կտրելու համար։

Սամաստեցիներն աչքի չեն ընկնում քաջու-  
թեամբ, մինչևիսկ վախկոտ են, բայց մեծա-  
խօս։ Գիտեն խոստումներ անել, կեղծաւորել,  
շողոքորթել (սովորութիւններ, որոնք թուր-  
քական ազգեցութեան հետեւանք են), բայց  
իրանց խոստումը կատարելու մէջ շատ անդամ  
են մեղանչում։ Նախանձոտ են չափազանց,  
դիւրագրգիռ են, բայց ոչ պատւասիրութեան  
պատճառով (որից զուրկ են), ալլահի համար։  
Վրէժինդիր են լինում դադտնի ճանապարհ-  
ներով, երբ կարելի է թագնւել, չճանաչւել։

Մաքրութեան մասին կարծէք դադափար չու-

նեն (նոյնալէս հետեւանք թուրքական ազդեցութեան). կեղտ և կեղտ, տներում, բակերում, գոմերում, փողոցներում: Բաղնիք չկա ամբողջ Սալմաստում. ալստարի միայն բաղնիսի պէս մի բան է շինւած Աալասարում, ուր յաճախում են գլխաւորապէս «դրսեցիները». չեն օգտւում նոյնիսկ գետից և Ուրմիի լըճից տմառը լողանոլու համար:

### ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Սալմաստը բաւական անառողջ տեղ է. ալստեղ յաճախ են պատահում աչքացու, վզի ուռուցք, մազաթափութիւն, հարբուխ (շօ'քա), խոխոց (խոռուզակ), թոքալին հիւանդութիւններ, ստամոքսոլին հիւանդութիւններ, կապուտ խոզ (հազ), գլխացաւ ևալն, իսկ ամենից շատ տարածւած է ժանտաջերմը (տո'դցո'ց). այս հիւանդութիւններն առաջանում են թէ կլիմալի ազդեցութիւնից, թէ կեղտոտ տպրելուց (մանաւանդ թուրքերի մէջ): Տների լոյսը պակաս է, փողոցները միշտ լի տնասունների աղբով, որ ողջ տարին փռում են չորացնելու համար, որպէսզի ալրելու աթար պատրաստեն: Խոնաւ տների լատակներն առանց բացառութեան հողից լինելով, տներում գոյանում են զանազան միջատներ: Թոնի-

ըլ, որի մէջ կախում են ոտները, և «քուը՝  
սուն» սաստիկ նպաստում են ոսկըացաւին, ո-  
րովհետեւ տանը քրտնելու աստիճանի տաքա-  
ցնելով միայն ոտներն, իսկ մէջքը պաղացնե-  
լով՝ դուրս են գալիս փողոց, ուր սառնամա-  
նիք է տիրում, և ալդպիսով մըսեցնում  
**ոտները :**

Ոչ մի հիւանդանոց չկա Սալմաստում. կա 2  
ասորի բժիշկ և միքանի ինքնակոչներ. այս  
վերջինները սունկի պէս ըուսնում են. ով սո-  
ված է, թողնում է իր դալլաքութիւնը և  
գալիս Սալմաստ իրեւ ատամնաբոլթ. կառա-  
վարութիւնը չէ խառնւում, և ալդպիսով «աղ-  
զալին սափրիչները» շահագործում են տգէտ  
ժողովրդին . . .

Սալմաստեցին հիւանդանալուց ալնքան էլ  
չէ դիմում բժշկի, այլ բժշկւում է գլխաւո-  
րապէս տնալին եղանակով, զանազան պառաւ-  
ների խորհուրդներով, կամ աւելի յաճախ ի-  
րան լանձնում է բութեան տնօրինութեանը:  
Հիւանդին առողջացնելու ամենալաւ միջոցը  
համարում են հիւանդի սրտի ուզած ուտելի-  
քը կամ խմելիքը (սրտի ուզելիք') տալը:

Ցաւի պատճառը համարւում են սատանա-  
ները. մէկի հիւանդանալու դէպքում տառւմ  
են. «Քա՞ն' մեր աղէլքերը զա՞ր' կած էն»

(մեզնից լաւերն են խփել, ալսինքն՝ սատանաները): Սատանային պատկերացնում են քահանալի պէս. նա հագած է տէրտէրի սե, երկար շորեր, երկար մողերն արձակած, գզգլղւած, ձեռին դագանակ կամ նիզակ. նա երբեմն երևում է կտաւի կամ շան կերպարանքով:

Հիւանդութիւնները չար մարդկանցից վխենալով՝ նրանց չեն մերձենում:

Բժշկւելու մէջ մեծ դեր են խաղում թիւիսիմները (թուղտ), որ սաստիկ տարածւած են. «թուղտ էն անելի» համարեած բոլոր քահանաները, նրանց որդիներն ու տիրացուները:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԵՂԵՐ

Յօ՛քա՛ (հարբուխ)

Երբ մէկը հարբուխ է ստանում, ասում են՝ «պիճ ի ծնւե» (ապօրինի զաւակ է ծնւել):

Հիւանդից չվարակւելու համար ասում են հիւանդին. «Ճա՛խչէն էմ իկ'ա՛լի, դա՛ւտ'լի միս էմ կերե, բըթի պարկը շ'լ'ա՛լս ի» (ջաղացից եմ գալիս, ուղտի միս եմ կերել, բըդի պարկը շալակիս է):

Հիւանդն իր ցաւն ուրիշին փոխադրելու համար ասում է հանդիպողին, «Աև ուլիկ' (ուլունք) կուզես»:

Առողջանալու համար աղօ ածում են շորի

մէջ, վրան խնչում, ամուր կապում և գցում  
փողոցը. վերցնողի հիւանդանում է, գցողն ա-  
ռողջանում:

Եօթը բակից կապուտ փալասներ են ժողո-  
վում գաղտնի և ալրում:

Եօթը բակից գաղտնի փոքր քարեր են վեր-  
ցնում և բերանները գցում:

Շալվարները գիշերը կապում են զլխներին  
ու քնում:

Տաք տեղաշորերի մէջ քրտնում են:  
Գլխացաւ:

Բժշկելու նպտակով զանջաֆիլը լուծում  
են ջրի մէջ և քսում ճակատին, ապա ճակատը  
կրակին դէմ անում և պահում ալնքան,  
որ ջուրը ցամաքում է:

Թիլխիմ են անում:

Գլուխն ամուր կապում են:

Գլուխը սեղմում են:

Բողկ ու գետնախնձոր են կապում ճակա-  
տին:

Մազերից ու ականջներից ամուր քաշում են,  
եթէ ձայն դուրս եկաւ, ուրեմն կառողջանա:

Աղը տաքացնում են, ածում շորի մէջ և  
դնում զլխին:

Քացախն ու օղին խառնում, ճակատին են  
քսում:

Թթու վարունկ են դնում ճակատին :  
Փոքացաւ

Առողջանալու համար պղպեղով օղի են խը-  
մում :

Հիւանդի ձախ թեն ամուր կապում են, և  
հիւանդն ալդ թե ի վրա պառկում է :

Հիւանդի երակները սեղմում են բժիշկ պա-  
ռաւները :

Ծունկը դէմ են տալիս հիւանդի մէջքին  
և ճռռացնում :

Իւղով փորը տրորում են :

Տաք տեղաշորում պառկեցնելով՝ քրտնա-  
ցնում են :

Առանձին մադիկ կան, որոնք երկնքից օժ-  
տւած են ալդ ցաւը հետեւեալ մէթօդով բժշկե-  
լու շնորհքով. մի ճիպոտ աղեղնաձև ծռռում են,  
ծալքերը թելով կապում, մի ճիպոտ էլ (իբրև  
նետ) դէմ տալիս թելին և սպառնական դիրք  
բռնած դէպի հիւանդը՝ լարում են նրա վրա  
նետն ու հարցնում թուրքերէն.

— Հարդան գ'ա՛լ'լ'լ'սա՛ն' (որտեղից եսդալիս) :

— Սանջը դաղննան (փորացաւի սարից),  
— պէտք է պատասխանէ հիւանդը :

— Հարա գէդ'լ'լ'սա՛ն' (ուր ես զնում) :

— Սանջը դաղընա (փորացաւի սարը) :

— Գէթ'մա՛, վրդըմ (մի գնար, խփեցի), — ըս-

պառնում է բժշկողն ու աւելացնելով՝ «վուր,  
քի երը՝ դըր» (Խփիր, որ տեղն է), բաց է  
թողնում ճիպոտը (նետը) հիւանդի վրա. փոր-  
ձը երեք անգամ կրկնելով՝ առողջացնում է  
հիւանդին :

### ԳԵՂԻՈՒՐԻ Ա

Կան մարդիկ, որոնք երկնքից օժտւած են  
այս հիւանդութիւնը բժշկելու ձիրքով։ Իրանք  
լուռումունչ երկու անգամ ապտակում են  
հիւանդին, և նա առողջանում է (հիւանդու-  
թիւնն առաջացած են համարում վախից)։

### ՉՈՐՅՎԻՆՐԻ Կ (ՓՈՐԿԱՊՈՒԹԻՒՆ)

«Գա՞նա՞գո՞ւր՞չա՞գ՞» են տալիս ուտելու  
Կաթ են խմացնում։

### ԱՌԱՎԻԵԼ (ՓՈՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

Կօֆէ կամ մուզ թէլ են տալիս։

Գիստորը մանրում են, կիսաեփ (իլիթմա)  
ձւի հետ խառնում և անօթի ժամանակ ու-  
տեցնում։

### ՓԽՍԵԼ (ՓՍԽԵԼ)

Փսխելու դէմ դեղ չկա։

Փսխել տալու համար «իշուկաթնուկ» բոլ-  
սի հիւթն են ուտում կամ տաք ջուր են  
խմում։

### ՇԱՄԲՈՒ ԿԱՄ ՇԱԽՎԱՐ (ՀԱԼԿՈՒՐ)

Ծոծրակից կամ թւեից արիւն են առնում։

Սեւ ապակին (սատանալի եղունկ) մանրում,  
ցանում են սև թռչքի վրա, խորովաւմ և ու-  
տեցնում:

Եորէն առնիել (լուսնի նորից)

Փոքը երեխաներին տալիս են խմելու ու-  
ռենու այրւած փալտից քերած մուր՝ ջրի մէջ  
լուծած:

Մեծերի լեզւին կապուտ շիբ են քսում:  
Խազ (հազ)

Ծառի խէժ են ուտում կոկորդը կակզա-  
ցնելու համար:

Թէլի հետ զանջաֆիլ են տալիս:

Քրտնացնում են:

Նաբաթ են տալիս տաք ջրի մէջ եռացրած  
և ռեհանի սերմի հետ եփած:

Դդումը եփում, կրծքին են դնում տաք-տաք:  
Հում կաթ են խմում:

Ա. Տ Մ Ա Ջ Ա Ւ (ատամնացաւ)

Աղ կամ շիբ են դնում ատամին:

Խունկը ծեծում, դնում են դէմքին (թշին):

Ծխախոտի ծուխը պահում են բերանում:

Ատամի վրա մեխակ են դնում:

Օղին պահում են բերանում:

Վառած ընկուզով կամ եռացող ձէթով դա-  
ղում են ցաւող ատամը:

Աւոսց (ուստացք)

Ձեթ են քսում ուստացքին:

Կտաւատը կաթի մէջ եփումեն, դնում ուստացքին, որպէսզի ծակւի; թարախը դուրս գտ:

Նոյն նպատակով շաքարով խմոր են դնում:

Նոյն նպատակով եփած սոխ են դնում:

Նոյն նպատակով դմակի կաշի (շուրջուն, աստառ) են դնում:

Ծակւելուց և թարախը դուրս գտուց լեռո «եղան լեզու» և «բլ'աղօթիկ'» բոլորն են դնում, որ վերքը մաքրեն և առողջացնեն:

Մատուցունչ (մատնաշունչ)

Ուսուցքի համար գործադրւող միջոցներին են դիմում:

Իւզ են քսում խմորին, տաքացնում և դընում վրան:

«Տեղտ» ծաղիկը ձւի դեղնուցի հետ խառնում, վրան են դնում:

Օծի ուսուցք

Գորտի փորը պատռում, ծծին են դնում, ծիծը ծակւում է, թարախը դուրս գտվի:

Զանազան սպեղանիներ են դնում, որպէս ուսուցքը և մատնաշունչը բժշկելիս:

Սրբերին են դիմում:

Գեղաերի ուսուցք

Մաժում (տրորում) են ձեռքով:

Նորի վեշտից քաշում են:

Կանգնում են դէպ աղօթարանը և մատը  
հիւանդի բերանը մտցնելով՝ ծնօտը վեր  
քաշում:

Վ. ի զուռոց (վզի ուռուցք)

Դմակ են գնում, ծակւում է, ապա սպե-  
ղանի են գնում:

Մաժում են:

Շխսուկ (գորտնուկ)

Իւղ, ճարպ կամ հում սեր են քսում:

Արքերի են դիմում:

Դիմում են նոր լուսնին և երեք անգամ  
առաւմ.

Նո՞րը, նո՞ր,

Ես խալիւո՞ր,

Տու թաքաւո՞ր.

Ես չա'փա'լ' շխտուկ կասի.

«Ես նո՞րէն խո՞րո՞տ էմ»:

Այս ասելով՝ լծքում են գորտնուկի վրա և  
աւելացնում.

Տու չո՞ր' ցուցես,

Չո՞ր տա՞ր' ցուցես:

Լուսինը բարկանում է գորտնուկի վրա,  
որ նա համարձակւել է իրան լուսնից գեղե-  
ցիկ համարել, և ոչնչացնում է նրան, որով  
հիւանդն առողջանում է:

Արիւնը կտրելու համար՝

Սարդի սստալն են դնում վրան:

Եռացող իւղ են ածում վրան:

Թաղիքն ալրում են կիսովին և դնում վրան:

Զէթով եփած սոխ են դնում:

Բըդէ շորն ալրում (խանգարութ'), վրան շաքար են ցանում և դնում վէրքին:

Ուր դուրս գալ կամ կուրել

Տաք ջրով մաժում, դցում են տեղն ու կտպում:

«Աւ ծամոն» (կալբաձիւթ) են դնում վրան:

Ուսկոյն ուղղում են, շըէշը ձւի դեղնուցի հետ շաղախում, քսում կտաւին և կոտրած տեղը նրանով կտպում՝ կողքերից տախտակներ դնելով:

Յրտաւար լինել

Ցրտատար եղած տեղին հինա են դնում:

Փալտէ գդալի վառւող պոչով ալրում են:

Այրւած

Կրակից կամ ջրից ալրւած տեղին աղ են ցանում:

Տաւարի ականջը կտրում են, արիւնը քըսում ալրւած տեղին:

Բշտիկները պատռում են և վրան դնում շըից ու ձւի սպիտակուցից պատրաստած շաղախը. դրանից մի-երկու օր յետո խաւիծ են

դնում:

Նուզոնւլ'ա՛ (ականջի թարախակալել)

Քիչ տաք իւղ կամ ուխտատեղիների կան-  
թեղներից վերցրած ձեթ են լցնում ականջը:

Շաքարի կապուտ թուղթը կլորացնում ու  
դնում են ականջում, որ մաքրի:

Որդնած ականջ

Ջրով կամ իւղով մաքրում են:

Խլուքիւն

Սրբերին են դիմում:

Տայցո՞ց - սո՞ցո՞ց (ջերմուտենդ)

Հիւանդին վախեցնում են (հիւանդութիւ-  
նը վախից առաջացած են համարում):

Մի կտոր բամբակ են տալիս տէրտէրին,  
որը պատարագի ժամանակ միջից կիսում է՝  
ինչ-ինչ ազօթքներ մըմոալով, նորից միացնում  
են կտորներն ու կտորներն ու կտորներն ու կտորներն:

«Գինադինա» են ընդունում:

Շաբաթ իրիկնադէմին տաք ջուր են վեր-  
ցնում և գնում գերեզմանատուն՝ առանց ոչ-  
ոքի հետ խօսելու ճանապարհին և ալնտեղ  
հիւանդին լողացնում ալդ ջրով՝ գլխաւորապէս  
հրէալի և սպանւածի գերեզմանների վրա:

Հիւանդի գլխին սառը ջուր են ածում ան-  
ակնկալ կերպով և ալդպիսով նրան վախե-  
ցնում:

Գ Ր Ա (Ք Պ Բ)

Գնում են Զեա'ջուկի գիւղի Փրկշատ ուխտատեղին, այնտեղի հանքալին աղբիւրի ցեխից քսում մարմինը և չըի մէջ լողանում։ «Փլոի խո'տը» ծեծում, քսում են մարմընին և լողացնում։

Կ ա ր մ ի ր ֆ ա մ ի

Կլիզմայով լուծել են տալիս, ապա ծեծում են «շան հաւո'ղը» և քսում ուռած կարմըրած տեղերին։

Կ ա ս ա ղ ա ծ ի դ է մ

Կծող կատաղած շան մազն ալրում, դնում են վէրքին։

Լորին կիսում, վէրքին են դնում։

Ի ի մ ու մ են սրբերին։

«Թուղթ» են անուն և կարում հիւանդիթեին։

Մաղով մոխիր են մաղում երդքից, եթէ մոխիրի հոսանքը դռան կողմը գնաց, ուրեմն հիւանդը կմեռնի, եթէ դէպի դռան հակտուակ պատը գնաց, ուրեմն կառողջանա։ Եթէ կատաղած հիւանդին սակի ցոյց տան, հիւանդը կմեռնի։

Օ ձ ի կ ծ ա ծ

«Օցի ուլիկ» (օձի ուլունք) են դնում կըծած տեղին։

Շան լակոտն սպանում են, փորոտիքը հանում և տաք տաք կապում կծած տեղին։  
Այդպէս կրկնում են միքանի անգամ։

Թունաւորումն

Կաթ և թան են խմացնում, մածուն են ուտեցնում, հիւանդը սիրոը թափում է և առողջանում։

Աչացաւ

Թրիաք, «մխի դեղ», նաբաթ և զովհար խառնում, գցում են աչքի մէջ։

Զւի դեղնուցը խառնում են նաբաթի հետ, տաքացնում և դնում աչքին։

Ոսկացաւ

Մաժում են իւղով։

Խոռուզակ (խռոռոց)

Սրբերին են գիմում, մատաղ են անում, գիմում են Տիրամօրը և խոստանում, որ եթէ հիւանդն առողջանա, եօթը գիւղ շրջելով ալիւր կմուրան և կտան «Տիրամօր խեղճերին»։  
Լողացնում, քրտնացնում են։

Սրիւն են առնում, գլխաւորապէս գլխից և մէջքից։

Կապուս խազ

Մանում են թոնիրը, քրտնում, տաք տեղ պառկում և զանջափիլով թէլ խմում։

Դիմում են սրբերին և մատաղ (զոհ) անում։

(Սա ամենավատ հիւանդութիւնն է համար-  
ւում և վարակիչ է):

## ՄԱՀԱՆ ԹԱՄԲ Ա. Պ. Ա. Խ. ՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Մահան ժամբ որոշւած է նախախնամու-  
թիւնից. երբ «ա'ջա'լը» (վախճանը) հասաւ,  
մարդ մեռնում է. իւրաքանչիւր մարդ եր-  
կնքում մի «փիտլա» (փոքրիկ հողէ տման,  
բաժակ) ունի, երբ այդ փիտլան լցւեց (թէ  
ինչո՞վ՝ չգիտեն), մարդ կմեռնի, ուստի երբ  
ուզում են ասել, թէ այս ինչը դեռ չէ մե-  
ռել, ասում են՝ «ա'ջա'լը չի էկէ, փիտլան չի  
լցւեց»:

Եթէ հաւը կանչեց, այդ տնից մէկը կմեռնի:

Եթէ երազում տան գերանը կոտրւեց, տան  
մեծը կմեռնի:

Եթէ «գրազը» խփի մարդու զլիսին, կմեռնի:

Բուն եթէ կտրից վալեց, այդ տնից մէկը  
կմեռնի:

Առաջին թխած հացը եթէ խկոյն ուտեն,  
ուտողի առաջին ամսւսինը կմեռնի:

Եթէ հաւն օրական երկու ձու ածեց, տը-  
նից մէկը կմեռնի:

Հիւանդը նրանով է իմանում, թէ մեռնե-  
լու է, որ աչքին զանազան բաներ են երե-  
ւում—սղոց, կացին, կատու, ու մարդ եալին:

Հոգին առնում է հրեշտակը, որի երեալուց հիւանդի լեզուն կապւում է: Ով չար է, նա դժւարութեամբ է հոգին տալիս, ուստի հրեշտակը նրան գանակոծում ու մարմինը կապտացնում է. իսկ ով բարի է, հրեշտակը նրան խաբում է՝ տալով մի խնձոր, կամ ծաղիկ, կամ մի փետուր: Տիմարութիւնը համարւում է արդաբութեան նշան, իմտստութիւնը՝ մեղք, չարագործութիւն...

Երբ հիւանդը հոգին աւանդելիս լետարգիայի մէջ է ընկնում, տնեցիները նրան մեռած են համարում, վրան թափւում, լալիս, ականջում կանչում, և հիւանդը միքանի ըստէ ուշքի է գալիս, ուստի մեռնում. դա կոչում է «խոքըտա՛ր'ց'» (Հոգեդարձ) — հոգին աստծու մօտ է զնացել և դարձել: Եթէ «խոքըտար'ց'» եղողը մինչեւ կէս ժամ չմեռաւ, ուրեմն երեք օր էլ կապրի: Մեռնողներից շատերն այդպիսի դէպքում պատճում են, թէ ինչպէս դրնացին աստծու մօտ, հրեշտակների հետ արքայութեան մէջ զբօննեցին եալին, իսկ դըժուխք երեք դնացած չեն լինում... «Խոքըտա՛ր'ց'» ժողովուրդը բացատրում է նրանով, որ հրեշտակը մեռածի ազգականների ողբն ու կոծը լսելով՝ խղճահարւում և մեռածի հոգին նորից է վերադարձնում: Հոգին դարձնելու

Համար արած լացն ու կոծը մեղք է համար-  
ւում, որովհետև երկրորդ անգամ հոգին առ-  
նելիս հրեշտակը չարչարում է մեռնողին,  
թէկուզ վերջինս արդար էլ լինի:

Մեռած թէ կենդանի լինելը ոտների ջեր-  
մութիւնից կամ պաղութիւնից են որոշում:

Մեռնելիս՝ ձեռներով փակում են բերանն  
ու աչքերը:

Մեռնելուց դիակը դնում են նաշի մէջ,  
տէրտէրը «Հոքոց» է ասում, ապա տանում  
են եկեղեցի, քիչ յետո հանում են եկեղեցու  
բակը, լողացնում տախտակի վրա տաք ջրով,  
պատանում և դնում եկեղեցում: Մեռելի շո-  
րերը լւացողին է հասնում:

Մեռելի ազգականներն ինքնաեռով կամ  
թէլամանով ջուր են տանում մեռելատունը,  
որպէսզի մեռելատիրոջ «սիրտն առնեն», ե-  
միսիթարում են խօսքերով: Այս գործողու-  
թիւնը կրկնւում է եօթն օր:

Մեռելին թաղում են ընդհանրապէս մի օր  
եկեղեցում պահելուց յետո: Թաղելու ժամա-  
նակ երբեմն կանչում են թուրք լալկան կին,  
որ սուզ է տսում, և միւսները նրան ձայ-  
նակցելով լալիս են: «Գանձ» երբեմն ասում  
են, երբեմն ոչ: Թաղելու ժամանակ կանալք  
գերեզմանատուն չեն դնում: Գերեզմանը փո-

բելու ժամանակ գերեզմանափորին «օղորմի ասւած» են ասում բարեելիս և «օղորմի ծընողացտ» պատասխանն ստանում։ Մեռելի հետ թաղում են և՝ իր շորերի մի մասը, Թաղելու ժամանակ միքանի շահի փող են դցում գերեզմանի մօտ, որպէսզի երբ հարեան մեռելները պրէտէնզիա լայտնեն նոր թաղւածին, թէ ինչ իրաւունքով է նա՞ իրանց հողը սեփականում, նոր թաղւածն ալդ գցած փողը տա նրանց և դրանով իր բաժին հողն առնէ։

Թաղելուց յետո ամենքը լւացւում են. լւանում են նաև թաղւածի մնացած շորերն ազգականների բերած սապնով։

Հետեւալ օրը գերեզմանի վրա դնում են ծաղիկ, տանձ, խնձոր կամ դդում։

Թաղումից յետո մեռելի մերձաւոր ազգականները «խռովում» են աստծուց և նրա տունը — եկեղեցի չեն գնում մէկ-երկու ամիս։

Թաղումից յետո տէրտէրը եօթն օր օրհնում է մեռելատունը, երբեմն այնտեղ ճաշշում կամ մի բաժակ գինով բաւականանում է։ Ալդ եօթն օրւա ընթացքում հրեշտակը մեռածի հոգին պահում է օդի մէջ, որ նախօրօք տարած է լինում աստծու մօտ, դրախտը և վերադարձրած։ Եօթներորդ օրը մեռելի լիշտակին պատարագ և ճաշ (օխտան խաց) է լի-

նում, և հրեշտակը մեռածի հոգին վերջնականապէս երկինք է տանում:

Քառասուն օր սուդ են պահում. շոր, գլուխ չեն լւանում, չեն գործում:

Դրանից լետո թաղւածին լիշում են մեռելոցներին, որոնք թեթևացնում են մեռելի մեղքերը:

Սնկնունք երեխալին, աղքատներին և սպանւածներին թաղելուց առաջ եկեղեցի չեն տանում, պատարագ չեն անում և մեռելոցներին չեն լիշում...

ՀՈԳՈՒԻ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ,

ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Հոգին մի «ղուշ» (թռչուն) է, աղաւնուպէս, որը եթէ թռաւ, էլ ետ չի գալ: Մեծերի հոգին մեծ է, փոքրահասակներինը փոքր. ծերերին ահւանում են «ճո՛չահոքի» (մեծ հոգի ունեցող):

Հոգին գտնուում է կրծքի ձախ կողմը. իբրև հոգի լնդունում են բաքախող սիրտը, որ իբր մասն է զալիս կրծքի ձախ կողմում, իսկ սիրտը ժողովրդի կարծիքով անշարժ է, կուրծքն է, որը ցաւելիս ասում են՝ «սիրտ ցաւալը» (սիրտ ցաւում է):

Հոգին դուրս գալիս հրեշտակը կանգնում

Է մարդու գլխին, թե երը քշտում, ձեռը տանում մարդու կոկորդով և երեք անտմ ասելով «խո՛ղածին, խո՛ղ տա՛ր՝ ց՛լ»՝ հոգին հանում:

Բոլոր մարդիկ հոգի ունեն, իսկ անասունները միայն «նա՛ֆա՛ս» (զունչ):

Հոգին աստծու մօտից գնում, նստում է մի խնկի ծառի վրա: Երբ «Կալրէլ» հրեշտակը փողը փչէ, քամիներ կը արձրանան, սարուձոր կհաւասարեցնեն, ջրհեղեղ կլինի, եղած մարդիկ կկոտորւեն, և կսեղծւեն նոր մարդիկ, որսնք այնքան փոքր կլինեն, որ տերեւների տակին կպահւեն, բայց չնախած փոքրութեան՝ մեզնից ուժեղ և խելօք կլինեն, մեռածների ոսկորները յարութիւն կառնեն, և այն ժամանակ հոգիներն ու մարմինները կը սկսեն միմեանց հետ վիճել և իրարից զանգատւել: Հոգին կասէ.

— Տու քեզի զա՞ն' թրիլ (զարդարել) էս, ընձի թողիր էս կրակերի (կրակների) մէչ:

Մարմինը կասէ.

— Տու կ'նա՛ցիլ (զնացել) էս արքաւութո՞ն, ընձի թողիր ես պաղը խո՛զի մէչ՝ ճո՞չ քարը վրա՞ս:

Թրանից յետո հոգին կդնա աստծու մօտ, իսկ մարմինը նորից գերեզման՝ այնտեղ փրթելու: Յետո աստւած հոգիների մեզքերը

կկշոփի, եթէ մի եղունկից ծանը եղոււ մեղքը,  
հոգին դժողք կզնա, իսկ եթէ եղունկից թե-  
թեւ—արքայութիւն և կնստի մի խնկի ծա-  
ռի վրա:

Աշխարհի վերջին մնում է երեք հարիւր  
տարի: Մի ձուկ պատում է աշխարհս, բայց  
պոչն ու գլուխն իրար չեն հասել գեռես, երբ  
հասնեն, աշխարհը կփշը ձուկը:

Աշխարհի վերջը հասնելուց երբ քամիները  
բարձրանան, բոլոր կենդանիները կմեռնեն,  
բացի գալից, որովհետեւ նա ոտները կիրի  
գետնի մէջ, որպէսզի քամին չտանէ իրան,  
սարերովը տա, ջարդի, թէև քամին ուժ կա-  
նէ, բայց գալին չի կարողանալ տեղից շար-  
ժել, այլ միայն կքերթի նրա մորթը:

Դրախտը մի մեծ, անծալը (էլի ծայր կու-  
նենա) ալգի է երկնքում, մէջն ամեն տեսակ  
լաւ պտուղներ, երգեցիկ թուզուններ, անու-  
շահամ աղբիւրներ: Արդարները չեն ուտում  
պտուղները, որովհետեւ ուտելու կարիքը չկտ  
դրախտում, այլ միայն զւարճանում են նրանց  
տեսքով:

Դժողքը մի մութ ալգի է նոյնպէս երկըն-  
քում, ուր միշտ անձրեւ է գալիս, սաստիկ  
ցեխ է, բայց անձրեները և ցեխը չեն կարողա-  
նում հանգնել մշտավառ կրակները: Ալդտեղ

մեղաւորները քնում են փշերի վրա. միշտ  
սոված ու ծարաւ են, բայց երբ հաց կամ  
ջուր են ուզում, «Պեղպեպու»-ն (սատանանե-  
րի մեծը) հրամայում է տալ հացի տեղ կրակ,  
ջրի տեղ հալած կլայեկ: Մեղաւորների մեծա-  
մասնութիւնը կպրի կարասների մէջ է լի-  
նում, որոնց տակն անշէջ հուր է վառւում:

Մեղաւորների տանջանքներից մէկն էլ «մա-  
զէ կարմունջ»-ն է, որով արդարներն ապահով  
կտնցնեն, իսկ մեղաւորները կգլորւեն և կընկ-  
նեն կամուրջի տակը կանգնած սատանանե-  
րի «ջիդա՛»-ների (տէգերի) վրա և ծակոտե-  
լով՝ կտանջւեն:



# ՀԱԿԱԾՔ

ԱՍՏԻԱԾՈՒԹԻՒՆ, ՍՐԲԵՐ  
ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԻԱԾՆԵՐ

Սատւած նստած է երկնքում ոսկէ աթոռի  
վրա և գիշեր-ցերեկ գըում է մարդկանց գոր-  
ծերը: Նա մարդի նման է, ծեր, ճերմակ  
«փառաքմիրուս» (մեծ, փառաւոր միրուքով.  
միքանիսն էլ տառւմ են, թէ տատւպի ջահիլ  
է): Քրիստոս նստած է աստծու մօտ: Քրիս-  
տոս երեք տեսակ է երեսում մարդկանց (յա-  
ճախ է երեսում) — մանուկ, այր և ծեր: Սուրբ-  
հոգին մարդկանց հոգիներից կազմւած մի հո-  
գի է: Հայրը, որդին և հոգին առանձին-ա-  
ռանձին աստւածներ են. հօր-աստծու իրա-  
ւունքները մեծ են Քրիստոսի իրաւունքնե-  
րից, իսկ Քրիստոսինք սուրբ-հոգուց: Աստւած  
թէև ամրող ժամանակ գրակւած է գրելով,  
բայց գրելու ժամանակ զանազան բաներ են  
անցնում նրա մտքով, որոնք իրանց-իրանց կա-  
տարւում են տշխարհի վրա. առանց աստծու  
ոչինչ չէ լինում, նա է տալիս ցաւ, ուրա-  
խութիւն, աջողութիւն, անաջողութիւն, ուստի  
նրա կամքի գեմ չպէտք է գնալ:

Աստծու մօտ նստած են և՝ Արքահամն ու  
Եղիան:

Կանայք ընդհանրապէս դիմում են աս-  
տւածածնին, ուստի դրանց մէջ շատ յարգւած  
է «Տիրամէր» ուխտատեղին, որ Վանի կողմե-  
րումն է: Դէմքի վրա մի տեսակ վատ վէրք  
է դուրս գալիս (սիֆիլիսի վէրքի պէս) և դէմքն  
ալանդակում, որը «տիրամօր եարա» է կոչ-  
ում և երբէք չէ առողջանում. ալդ վէրքն  
ունեցողին կոչում են «տիրամօր մարթ» կամ  
«տիրամօր կնիկ'», որոնք առանձին յարգանք  
են վայելում կանանց մէջ. ուստի եթէ մէ-  
կը հիւանդանում է որևէ հիւանդութեամբ,   
հիւանդի մայրը գիւղերը շրջում, ալիւր, փող,  
ասեղներ, թաշկինակներ է ժողովում «տիրամօր  
սէրին» և յանձնում «տիրամօր կնիկ'»-ին, որ-  
պէսզի հիւանդ որդին առողջանա: «Տիրամօր  
եարա» ունեցողներն «ազօթում» են հիւանդնե-  
րին և փող ստանում: Նրանք ալդքան յարգ-  
ւած լինելով հանդերձ՝ ոչոք չէ ցանկանում  
ունենալ «տիրամօր եարա», ուստի կանայք ի-  
րար անիծելիս՝ ասում են. «Տիրամօր եարան  
ընի (ընկնի) վ'րա՛տ»: Մի ալանդակւած աղ-  
ջիկ, որ կոչւում է «տիրամօր ախճիկ'», համա-  
րեա ամեն տարի գալիս է Սալմաստ Վանի  
կողմերից և ժողովարարութիւն անում. նա

շորի մէջ փաթաթած մի խաչ ունի, որ անւանում է «սուրբ նշան», և մեծ քանակութեամբ մետաքսէ թաշկինակներ է ժողովում՝ իր թէ «սուրբ նշանը» փաթաթելու համար... Այդ աղջիկն ընկնաւոր է. ընկնում է, ոտներով գետինը դոփում, խռխռացնում, բերանը փրփրացնում և սթափւելուց տիրամօր պատւէրները հաղորդում. կատարեալ պիւթեան քրմուհի...

Սստւածածինը երկու քոյր էլ ունէր—Եղիսաբէթ և Խաթուն. Եղիսաբէթը Յովհաննէս Մկրտչի մալըն էր: Միքանիսն էլ ասում են, թէ աստւածածինը քոյր-եղբայր չունէր: Սստւածածնի հօր անունը Մովսէս էր և ոչ Յովակիմ:

Սստւածածինը գնացել էր աղբեւրը ջուր բերելու, երբ «Մուքալէլ» հրեշտակը նրան մատուցեց «համասփիւռ» ծաղկի մի փունջ. աստւածածինը հոտոտեց ալդ ծաղիկը և նրա հոտից իմացաւ, որ Քրիստոս իրանից է ծնւելու:

Սալմաստեցի տղամարդկանց համար ամենամեծ սուրբը «Պարտումո՛ս» (Բարդուղիմէոս) տռաքեալն է, որ դժնւում է Սղբակում (Թիւրքիա) և եօթն անուն ունի (անունները չկարողացան թւել պատմողները). սակայն ժողովուրդը միւս սրբերի վրէժինդրութիւ-

նից վախելով՝ երկդիմօրէն աւելացնում է, թէ միւս սրբերն էլ մեծ են... «Պարտումո՞ս առաքեալին տիկ' էն խանե (կաշին քերթել են բոլորովին) խայերը (հայերը)»: «Տիրամէրը տղամարդկանց աչքում մի աստիճան ցածր է «Պարտումո՞ս» առաքեալից, բայց արև բանը լայտնում են կանանցից ծածուկ, ապա թէ ոչ կանալք կլարձակւեն ալդպէս ասող տղամարդի վրա:

«Տիրամէր»-ից լետո մեծութեան կարգով գալիս է Խոսրովայի ասորական «Նըդիշա» սուրբը, որին յաճախում են առանց կրօնի և ազգութեան խտրութեան հայերն, ասորիները, թուրքերն ու քիւրդերը. սրա հողն առողջացնում է «Ճխտուկ» (գորտնուկ) հիւանդութիւնը: Այս սուրբը գտնւում է մի մըգեղէնի այգում, որի պտուղներն ուտում են յաճախորդները, բայց դուրս տանել չեն կարող, որովհետեւ դուրս տանողը կչորանա...

Ապա գալիս է ս. Կարապետը (Սուշում), ուր կանալք չեն կարող գնալ, որովհետեւ ճանապարհին կամ կքարանան, կամ կմեռնեն այն պատճառով, որ ս. Կարապետը կանանց հետ վրէժունի, նրա գլուխը կտրել տւողը կին էր: Լարախաղացներին համարում են եօթը տարի պաս պահելուց լետո ս. Կարապետի շնորհըն

ստացած։ Զահիլ հարսները երբեմն ամրող  
եօթը տարի պահում են ս. Կարապետի պա-  
սը, որպէսզի սուրբն իրանցից որպէս այլ կա-  
նանցից վրէժխնդիր չլինի։

«Փրիշտ» (Մա՛հ' լ' ա՛մ գիւղի տէրտէրի  
ասելով «Ամենափրկիչ») սուրբը (Զեա՛ջուկ գիւ-  
ղի մօտ) բժշկում է բորոտներին և ականջի  
ցաւ ունեցողներին։

«Մար-Եաղութ» (Հալլ—սուրբ-Յակոբ) կամ  
աղջատւած «Մարդ-Եաղութն» տսորական սուր-  
բը (Հին-Քաղաքում) բժշկում է ընկնաւորնե-  
րին, խելագարներին և ջերմախտաւորներին։  
Իրանց հետ մի աքաղաղ են տանում ալդ սըր-  
բի «զգաստարան» կոչւող խորանը հիւանդի  
հետ, եթէ աքաղաղն ալդտեղ կանչեց, ուրեմն  
հիւանդը կառողջանա, եթէ ոչ, ուրեմն չի  
առողջանալ. ալդ աքաղաղը մորթում ու մաք-  
րաղարդում է սըրբի պահապանը... Այս սըրբ  
հրաշքների մասին զատ են պատմում։

(Միւս սըրբերի և ուտառեղիների մասին տես  
«Պաս և ուխտագնացութիւն» գլուխը):

Աստւածաշնչի ըովանդակութեան հետ հա-  
մարեած ծանօթ չեն, ունեցած տեղեկութիւն-  
ներն էլ աղաւաղւած են. բայց այս են ասում,  
թէ աստւածաշունչը մարդիկ չեն գրել, այլ ինքն  
աստւած, և զրել է հայերէն։ Աստւածաշունչ

ասելով հասկանում են միմիայն հին կտակարանը:

Ամենասիրւած գիրքն է աւետարանը, լեռո սաղմոսն ու նարեկը:

ՀՐԵՇՏՈԿՆԵՐ ԵՒ ՈԳԻՆԵՐ

Հրեշտակներն աստծու ծառաներն են (մըշա'կ). ամենամեծ ծառան «Կապրէլն» է, որ մարդկանց հոգիներն առնում է աստծու հրբամանով: Հրեշտակները սովորական մարդիկ են, նրանց պէս հագնւած, բայց աւելի ժլպտագէմ և բացի ձեռներից թևեր էլ ունեն: Հրեշտակները երևում են լաճախ միայն մանուկներին. ալդ լինում է այն ժամանակ, երբ երեխաներն ըստերեւոլթին առանց պատճառի ժպտում են, իսկ մեռնելու ժամանակ ամենքին են երևում: Իւրաքանչիւր մարդի ուսերին երկու հրեշտակ կա—աջ ուսին բարի հրեշտակն է, ձախին չարը (չար հրեշտակը և ստանան տարբեր բաներ են): Բարին մարդի բարի գործերն է արձանագրում, չարը չար, և մարդը մեռնելուց ներկայացնում են իրանց գրածներն աստծուն, որը համեմատում է իր գրածների հետ, որպէսզի եթէ իր գրածների մէջ բան բաց թողած լինի, հրեշտակների գրածներից աւելացնի, բայց եր-

բէք չի պատահում, որ աստւած բան բաց թողած լինի:

Աստւած առաջ ստեղծեց աշխարհը, մարդկանց և ապա կաւից միքանի հատ հրեշտակ ծեփեց, օրհնեց, փչեց բերաններին, որոնք թւեր առան, թռան և յետո բազմացան (իսկ թէ ինչ կերպ բազմացան, ալդ չգիտեն, ասում են, թէ աստծու ձեռից ամեն բան դալիս է, ինչ կուզի՝ կանի):

Սատանաները սովորական մարդիկ են, բայց խորամանկութեամբ ճարել են մի տեսակ սև գլխարկներ, որ դրել են գլխներին և չեն երեսում. եթէ գլխարկները վերցնեն, կերեան: Նրանց դէմքերն էլ սևացած են, ոտների մատներն ու կրունկներն հակառակ են դասաւորւած, ալնպէս որ երբ ցանկանում են առաջ դնալ, ետ են գնում, և ընդհակառակն: Բացի ալդ՝ նրանք եղջիւրներ էլ ունեն, և եղունկները երկար են: Սատանաներն ամուսնացած են, իւրաքանչիւրը մի-մի սատանակին ունի. տղամարդ-սատանան տղամարդկանց «կոխելու» համար է, կին սատանան կանանց: Կին սատանաները կոչւում են «դալա», իսկ գլխաւոր սատանա «Պեղպեպու»-ի (Բեհեղպերուղ) կնոջ անունը «Կապուստ» է: Կին-սատանաները միշտ աղջիկ են ծնում և երեք

տղա։ Պեղզեպուից լետո մեծը Սադայէլն է։  
Սատանաները երեք գունդ են—մէկը՝ եր-  
կնքից կախ, միւսն՝ աշխարհիս վրա, երրոր-  
դը՝ գետնի տակ։ Սատանաները կարողանում  
են զանազան կերպարանքներ ընդունել մարդ-  
կանց երեալիս։ Նրանք մարդկանց յաճախ հը-  
րաւիրում են իրանց հարսանիքին և վերա-  
դարձնելիս փող էլ են նւիրում, բայց գնում  
են նրա հոգին, որպէսզի ապագայում մեռնե-  
լուց լետո դժողք գնա։ Երբեմն էլ մարդին  
ծաղրելու նպատակով նրա գրպանն են գնում  
միքանի գլուխ սխտոր, որոնք յաճախ ոսկու  
են փոխարկում։ Իրանց հարսանիքն անելիս  
սատանաները նոր շորեր չեն կարել տալիս, այլ  
գողանում են կանանց շորերը, հագնում և  
նոյն գիշերը վերադարձնում։ Երկրային սա-  
տանաներն ապրում են աւերակներում և ընդ-  
հանրապէս մութ տեղերում։ Գիշերները նը-  
րանք թափառում են՝ զբաղւելով գողութեամբ,  
մութ տեղերում մարդկանց վրա քար գցելով,  
ընդհանրապէս ծաղրելով («թռանա էն պռնե-  
լի»)։ Երբ մի բան է կորչում, ասում են. «Սա-  
տանա, ինչ էս գ'տե, ես էլ էմ գ'տե, պե, կի-  
սենք, կէսն ընձի, կէսը քեզի»։ սատանան կար-  
ծելով՝ թէ մարդի գտածն աւելի շատ է, խաբ-  
ւում է և կորուստը ցոյց տալիս մարդին։

Կին սատանաները կանանց «կոխելու» համար հանում են իրանց վզնոցները, գցում ջուր տանող կնոջ սափորի վրա և կնոջ բեռը ծանրացնում:

Մարդիկ տեսան, որ սատանաները շատացել են, գնացին, աստծուն գանգատւեցին. աստւած էլ երեք մեծ «գունդ» (կաւէ խողովակ) շինեց և սատանաների ամենմի գնդին փակեց մի-մի գունդի մէջ, որոնց բերանները փակեց և գցեց ծովը. ձկնոր սները գնացին ձուկ որսալու, այդ գունդերն ընկան ուռկանների մէջ, ձկնորսները բաց արին, որ տեսնեն, թէ մէջն ինչ կա, սատանաները դուրս թափւեցին ու փախչելով նորից ցըւեցին երկրիս երեսին:

Կանալք դուրսը տաք չուր թափելիս սում են՝ «Քիրիստոս» պախապտն», որպէսզի սատանաների զաւակների ոտները չայրւեն, որովհետեւ վախենում են նրանց ծնողներից: Սատանաներն իրանց տգեղ զաւակներին երբեմն փոխում են մարդկանց ճերմակ զաւակների հետ:

Սատանաները մազի տեսք առած՝ մտնում են ծննդկան կանանց բերանով, թոքը հանում և գցում ջրի մէջ, որից ծննդկանը մեռնում է. որպէսզի սատանան այդ բանը չանէ,

ծննդկանին սոխ են տալիս ուտելու, և սատանան սոխի հոտից գարշելով՝ չի մօտենում:

Սատանաները սիրահարւած են լինում ծըննդկաններից, ուստի վերջիններիս գլխատակին շամփուր, նարեկ կամ աւետարան են դնում, մօտները պառաւ կին է քնում, որ սատանաները չմօտենան:

Սատանալից չկոխւելու համար շատերը մատներին պողպատէ մատանի են կրում, որից սատանան վախենում է:

Սատանաները կերակրւում են ջրաղացներից գողացած ալիւրով, որ խմոր են անում և հում-հում կլանում:

Սատանաները ձի հեծնել շատ են սիրում. Երբ ձին առանց մտրակւելու կամ խթանւելու վազում է, ասում են, թէ սատանան է քըշում, ուստի պողպատի մի կտոր կամ ասեղ են խրում ձիու բաշի մէջ, և ձին կանգնում է:

Ոչխարները և ընդհանրապէս կենդանիները վազվզում են ալսուալն կողմ, ասում են, թէ սատանան է խառնում նրանց:

Մարդիկ երբեմն բռնում են կենդանու կերպարանք առած սատանալին, բարձում և տուն բերում, բայց նրանք շուտով չքանում են, յաճախ իրանց բեռներով միտսին: Եթէ մարդիկ նախօրօք գուշակում են, որ իրանց

գտած կենդանին սատանա է, շղթալում են վիզր, կամ ասեղ են ցցում կրծքին, նա էլ մնում է և կատարում մարդկանց պատերները, միայն հակառակ ձեռվ, ուստի բան անել տալու համար պէտք է հակառակը հրամակել։ Ազատուում է այն ժամանակ միայն, եթէ մէկն անգիտօրէն հանում է նրա կրծքից ասեղը. նա իրան ազատող մարդին զանազան բաներ է խոստանում, որ և միշտ կատարում է. սատանան երբէք չէ գրժում իր խոստումը։

Յօրանջելիս բերանները խաչակնքում են՝ ասելով. «Քիրիստո'ս պախապան», որպէսզի սատանան փորները չմտնէ։

Եթէ մէկը գետնին խփում է, ասում են. «Սատանան քո պեռ կծանդրացուցի, մեխկ' ի»։

Մոլիք տեղը ջուր չեն խմում, որ զինի թէ սատանան ջրի մէջ մտած լինի կամ գըլիներին խփէ։

Երեխալի (երբեմն և մեծահասակի) եղունկները երբ կտրտում են, ածում են ծոցն ու ասում՝ թող սատանան տանէ, իր համար եղունկներ շինէ։

Դաշտերում ընկած հաստ ապակու կտորները համարում են սատանալի եղունկներ, որ սատանաները գցում են տարին մի անգամ.

ալդ ասլակին մանրում ու դեղ են պատրաս-  
տում նրանից: Բժշկութիւնը համարւում է  
սատանալի գործ:

Երբ մարգկանց մազերը դիզանում են, ասում  
են, թէ սատանաներն են քաշում:

Եթէ մի բանի վրա երկու մարդ վիճում  
ու չեն կարողանում հաւասար բաժանել, սա-  
տանան խլում է այդ բանն ու ինքը վայելում:

Սեղանի վրա սատանալի անուն չեն տալ,  
որպէսզի կերածը սատանալի բաժին չդառնա:

Սատանաներից մէկն է և՝ «Խլվլիկ»-ը, որի  
տօնը կատարում են նուասարդին՝ նրանից  
վախենալով. Նա երեխաներին (երբեմն և՝ հա-  
սակաւորներին) խարսում, տանում է և սարից  
ցած գլորում. ուստի երեխաներին վախե-  
ցնում են Խլվլիկի անունով:

«Խըծիգ»-ները (տիկնիկներ—խաղալիք) գի-  
շերը սատանաներ են դառնում, իսկ ցերեկ-  
ները նորից տիկնիկների են փոխարկւում:

Արձագանգը սատանալի ծաղըն է:

«Խինած-խինուկը» (սարդը) սատանաների  
համար ճրագ է տանում:

Զար ոգի է նաև՝ «կրո'ղ»-ը (գլող), որի անու-  
նով անիծում են իրար «կրո'ղ քեզի տանի»  
խօսքերով:

Սարերում և անտառներում ալլում են

դեերն ու «մարթակէլ»-երը (մարդագալեր): Մարդագալի մարմինը կենդանու պէս է, իսկ գլուխը մարդի գլխի պէս: Նա գողանում է երեխաներին. «Ժֆանգ'ը չի պացւի դա՛ր վ՛րա՛ն», խա՛ն' չալը ուր պո՛նէն չը՛լի», նրա վրա ձեռ չի վար բերւիլ, փակ դռները բացւում են նրա առաջ: Երբ աստւած բարկանում է մարդկանց վրա, մարդագալ է ուղարկում: Մի մարդ մտադրւել էր քոնել մարդագալին, ուստի երբ գիշերը եկել էր մարդագալը՝ շուրջը գարշահոտութիւն տարածելով, մարդը հարցըրել էր, թէ ինչու է նա երեխաներին տանում, մարդագալը պատասխանել էր, թէ «կտրին նայիր». մարդը նայել և երկու հրեշտակ էր տեսել կտրին, մարդագալն ասել էր. «Ես չեմ ուզում գալ, բայց ինձ այստեղ են քշում այդ հրեշտակներն աստծու հրամանով:

Դե-կանայք ունեն հսկայական ծծեր, որ գցում են աջը ձախ ուսին, ձախն աջ ուսին, հեծնում խնոցին (ուստի կոչւում են «ծծում խեծնող»—խնոցի հեծնող) և մտրակելով՝ արշաւում քէֆի, կամ գողանալու թագաւորների գեղեցիկ աղջիկներին՝ իրանց որդիներին կին դարձնելու համար:

Դեերն ապրում են և՝ ձիթանոցներում

(բա՛զրխանա, սը՛րանոց). Նրանք սաստիկ ուժեղ են:

Դևերի մասին ընդհանրապէս պատմում են այն, ինչ լատնի է «Հազարումի գիշեր»-ի հեքիաթներից:

«Կիրակի» օրը նոյնպէս ոգի է՝ ծեր մարդի կերպարանքով, ճերմակ միրուքով. եթէ ալդ օրը կամ օրամտին կար կարեն, կիրակիի ճերմակ դէմքն արիւնլւա կդառնա ասեղի ծակծկելուց. եթէ գլուխ լւանան, կիրակին «շիշը» (շամփուրը) կցցէ գլուխ լւացողի կուրծքը. եթէ ճրագը շուտ չվառեն կամ գիշերը հանգցնեն, կիրակին երազի մէջ մարդին մութ դժոխք կտանէ և կնախատէ:

Չորեքշաբաթմուտ և ուրբաթմուտ նոյնպէս ոգիներ են, ալդ օրերի պասերն աստւած է տնօրինել, ալդ երեկոներն էլ չի կտրելի բանել: Ալդ երկու օրերն օգնում են ծննդկաններին հեշտութեամբ անցկացնելու երկունքը, և ալդ օրերը ծնած երեխաները խելօք ու գեղեցիկ են լինում, նրանց անուններն էլ որոշում են իրանք ուրբաթն ու չորեքշաբաթին՝ երազում ծնողներին լալտնելով: Ալդ օրերը կանանցից խիստ լարդւում են:

Եթէ օձը եօթը տարի մարդ չի տեսնում, մարդի ձայն չի լսում, կերպարանափոխուում,

դառնում է վիշտապ. գլուխը մնում է օձի,  
բայց ոտներ և թեւեր են բուսնում. Հրեշ-  
տակներն ալդ ժամանակ նրան երկինք են տա-  
նում, որպէսզի ազբիւրների ջրերը չկտրէ:

Ա.ՇԽԱ.ՐՃԱԾՆՈՒԹԻՒՆ. ՀԱ.ԻԱ.ՏԱԼԻՔ  
ՏԱ.ՐԲԵՐԻ, ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ  
ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՍԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ՄԱ.ՍԻՆ

Տիեզերքի ստեղծագործութեան մասին ժո-  
ղովուրդը ոչինչ չգիտէ և մեղք էլ է համարում  
«աստծու պա՛ն»-երի խորքերը թափանցել:

Թէ երկիրն ինչի վրա է լենւած, նոյն րա-  
ներն են ասում, ինչ որ ընդհանրապէս տա-  
րածւած է հայ ժողովրդի մէջ, այն է՝ վիշտ-  
ապի մէջքի կամ ձկան վրա է կանգնած  
ևալն: Երկիրը տափակ է և ծալը ու-  
նի, որ շատ հեռու է մեզնից, ուստի երբէք  
չենք հասնիլ, եթէ մինչև կեանքներիս վեր-  
ջըն անգամ գնանք:

Երկինքն էլ երկրի պէս մի բան է, միայն  
հողի գոյնը կապուտ է. այնտեղ նոյնպէս կան  
տներ, ալդիներ, ջրեր, կենդանիներ ևալն,  
բայց ալնտեղի բնակչութիւնը կազմւում է  
աստծուց, Հրեշտակներից, մարդարէներից,  
հայրապետներից ևալն: Երկինքը լենւած է  
երկրին իր չորս եզրերով:

Արեգակը ջրաղացքարի չափ մի ճրագ է, աստծու ցերեկւա ճրագն է, իսկ լուսինը, որ արեխց մեծ է, աստծու զիշերւա ճրագն է: Արևը քոլըն է, լուսինը եղբայրը. նրանք մանեն գալիս աստծու հրամանով:

Այն վիշապը, որի վրա լենւած է երկիրը, կանգնած է մի ուրիշ երկրի վրա. երբ արեն ու լուսինը մալը են մտնում, գնուում են լուսաւորելու վիշապը վրան կանգնած երկիրն, ուր նոյնպէս կան մարդիկ, կենդանիներ ևալն:

Լուսնի խաւարումը բացատրում են նրանով, որ ինչ-որ տեղ մեծ քանակութեամբ մարդիկ են կոտորւել: Լուսինն առաջին անգամ տեսնելուց երեսներին խաչ են հանում: Պառաւ կանալք արշալուսին բարձրանում են կտուրները և արեւ ծագելիս՝ նրան երկրպագում ծնրադրութեամբ:

Աստղերը նոյնպէս ճրագներ են, որ պատկանում են մարդկանց. իւրաքանչիւր մարդ մի աստղ ունի երկնքում: Երբ մի ասուպ թուչում է, ասում են, թէ մի մարդ մեռաւ, նրա ճրագը հանգաւ. կամ մեռնելուց ասում են՝ «դա՛ր՝ տաղ՝ը խանգ՛աւ» կամ «դա՛ր՝ ճրագը խանգ՛աւ»: Երեխան ծնւելուց քիչ լետո նրա աստղն էլ է ստեղծուում: Յարդագողի ճանապարհի մասին ոչինչ չգիտեն:

Ծովերն ու մեծ գետերը լատակ չունեն,  
ուստի եթէ քար դցես մէջները, քարը գիշեր-  
յերեկ անվերջ կդնա:

Կանաչ-կարմիրը (ծիածանը) երկնքի գօտին  
է, որ գտնւում է աստծու մօտ, որը կապելով  
երկնքի մէջքին անձրեխց լետո՝ ուզում է մարդ-  
կանց ասել, թէ չվախենաք, անձրել ջրհեղեղ  
չեմ դարձնիլ: Ծիածանի տակով անցնող մար-  
դիկ փոխում են իրանց սեռը:

Կալծակն աստծու չախմախից (կալծտքա-  
րից) դուրս եկած կալծն է: Կալծակից առա-  
ջացած հրդեհը չեն հանգցնում, որովհետեւ  
դրանով աստծու բարկութիւնը շարժած կլի-  
նեն. ալգալիսի հրդեհն առաջանում է աստ-  
ծու կամքով: Կալծակնահար եղած ժայռը  
կամ ծտոր սուրբ է, որովհետեւ աստծու նա-  
հատակն է:

Մարգարեները մտրակով խփում են ամպե-  
րին, որպէսզի նրանց քշեն ծովը՝ ջուր տա-  
լու. ալդ հարւածներից առաջ է գալիս որո-  
տը: Ամպերը զնում, ջուր են խմում ծովե-  
րից և վերադառնալով իրանց տեղերը՝ միզում  
են երկրի վրա, որ կոչւում է անձրեւ:

Եթէ աստւած մարդի վրա բարկանա, մեծ-  
մեծ կարկուտ կուղարկէ, որ մարդկանց դրա-  
նով սպանէ. ալդ կարկտի միջուկը քար է լի-

նում, որպէսզի հարւածը սաստիկ լինի, և քարի վրա գրւած է լինում մի անձանօթ, անընթեռնելի գրերով, թէ ինչ մեղքերի համար է աստւած պատժում մարդկանց<sup>1)</sup>:

Սաստիկ որոտի ժամանակ երեսները խաչակնքում են, որպէսզի լիշեցնեն աստծուն, թէ ախր իրանք քրիստոնեաներ են, աստւած պարտաւոր է խնայել իրանց:

Երկրաշարժն առաջանում է նրանից, որ երկրի լենարան վիշապը կտմ ձուկը շարժւում են: Երկրաշարժ եղած դէպքում տսում են. «Սունն ու կերան քեզ պա՛րեխօս»:

Երբ երկնքի վրա վերջալուսին ամպերը կարմրում են, ասում են, թէ մի տեղ շատ մարդիկ են կոտորւել անմեղ տեղը, և նրանց արիւնը երկինք է ցալտել:

Քամիների մասին ոչինչ չգիտեն: Քամիներից մէկը կոչւում է «սամէլ», որ փչում է երեկոները. այդ քամին տաք է և մահաշունչ է համարւում: Երբ հրեշտակները վիշապ են ըարձրացնում, «պուլ'ուլ' պա՛ն» (կլոր բան

<sup>1)</sup>) Սալմաստեցին իրաւունք ունի այդպէս մտածելու. այստարի (1905 թ.) մայիսին մի այնպիսի կարկուտ եկաւ, որի հատիկները քառորդ գրւանքածանրութիւն ունէին. ասում են, թէ այդպիսի բան յաճախ է լինում:

—սատանալի քամի, թաթառ) քամին էլ տակից փչում է, որպէսզի հըեշտակին օգնէ շատ բարձրացնելու վիշտապին. քամու վայրում գըտնւող մարդին վիշտապը յափշտակում է, իր հետ տանում և բարձրից գցելով՝ ջախջախում:

Արձագանգը սատանալի ծաղըն է:

Երկնալին մարմիններին հայհոյելը մեղք է:

Որպէսզի անձրեւը շարունակէ գալ, ափները քանում ու անձրեի տակ տարածում են՝ իբրև ողորմութիւն ուզելու նշան:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ,  
ԿԱԽԱՐԴՆԵՐ ԵՒ ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

Ծիածանի տակով անցնող մարդը սեռը կը-  
փոխէ:

Ով իր արմունկը համբուրի, թոշուն կը-  
դառնա:

Եթէ մողէսի պոչը մի քար խփելով կարո-  
զանաս կտրել, ապա ալդ պոչը շարժւելու  
ժամանակ՝ ինքդ էլ վեր-վեր թոշելով՝ կարո-  
զանաս շորերդ հանել և հազնել, ապա պոչը  
վերցնես և ծոցդ դնես դեռ շարժւելիս, էլ  
քեզ մարդ չի տեսնիլ, աներեսովթ կդառնաս:

Սատանան բռնելուց եթէ նրա գլխարկը  
կարողանաս խլել և գլխիդ դնել, աներեսովթ  
կդառնաս:

Եթէ օձը հօթ տարի մարդ չի տեսնում, մարդի ձայն չի լսում, կերպարանափոխուում, դառնում է վիշապ. գլուխը մնում է օձի, բայց ոտներ և թևեր են բուժնում. Հրեշտակներն ալդ ժամանակ նրան երկինք են տանում, որպէսզի աղբիւրների ջրերը չկտրէ:

Հայի հաց չկերտծ թուրք մեռելը շուն է դառնում գիշերները և թափառում ճանապարհներին, առաւօտեան նորից դիակի է փոխարկուում. որպէսզի ալլես շուն չդառնա, պէտք է որ նորից հայ տէրտէր թաղէ:

Պառաւ կանալք երբեմն «մարթակէլ» են դառնում:

Կան տղամարդ կախարդներ, որոնք կոչւում են «սէՀրի»-ներ. նրանք կարողանում են իրանց ուղած կենդանու կամ իրի կերպարանքըն առնել:

Կան կին կախարդներ, որոնք կոչւում են «ղ՝ ա՝ րա՝ ջ՝». նրանք մարդկանց հետ խօսքի բռնւելով՝ կապում են նրանց աչքերը և իրանք այդպիսով աներեսով դառնալով՝ կողոպտում նրանց:

Հետեւեալ կախարդութիւններն են բանեցնում իմանալու համար, թէ կվերադառնապանգուխտը, կգտնւի կորուստը, բախտաւոր կլինին ևալլն.

Թ. ի զ պ ա' ց ե լ

Թևերը քշտում են մինչեւ արմունկներից վեր, աջ ձեռ քով երկու փոքր թիզ են չափում ձախ կռան վրա՝ սկսած ձախ ձեռքի մատներից դէպի վեր և ասլա վերից մինչեւ մատները երկու մեծ թիզ չափում, որի հետեանքն այն է լինում, որ երկրորդ թիզը մատներից անցնում է. ալդ ժամանակ ասում են, թէ բանը կաջողւի, հետեանքը դրական կլինի. կամ՝ ըստ թիզ չափողի ցանկութեան՝ հակառակն է լինում. բայց թիզ չափողը պատճառատքանում է ալդ երեսվթը նրանով, որ իրը թէ ձեռքը կուչ է գալիս կամ բացւում է:

Շ ո' ր թ ա' լ ե լ

Մի շոր չորս կտոր են անում, ամեն-մի կը-  
տորի մէջտեղը մի չոփ (փայտի կտոր, պարս-  
կերէն՝ չուբ—փայտ) գնում, շորի երկու ծայ-  
րերն իրար բերում, այնպէս որ փայտիկը մը-  
նում է մէջը. ապա փայտիկը դրած տեղից  
սկսում են ոլորել մինչեւ ծայրերը և ալդ  
գլանակները ձեռքին բռնած՝ նրանցով մի  
խաչ են հանում գետնի վրա, լետո գլանակ-  
ները երեք անգամ գետնին դնում ու բար-  
ձրացնում, ապա բանալուց ցոյց տալիս, որ  
փայտիկները շորի միջից դուրս են եկել:

Դա մի շատ հասարակ խաբեբայութիւն է.

փալտիկը շորից դուրս գտնելու պատճառն  
այն է լինում, որ բանալու ժամանակ ո՛չթէ  
երկու ծալրերն են յետ գալիս, որպէս ծալե-  
լու ժամանակ, այլ մի ծալրն, ուստի բացւում  
է շորի մէջտեղն, ուր փալտիկն է դրած լի-  
նում, և շորի մի ծալրը նորից ծալւում է  
միւս ծալրի վրա, միայն հակառակ կողմից:

Քար քա'լ ել

Հինգ մանրիկ քար են վերցնում, նրանցով  
գետնին խաչ հանում և գցում. եթէ քարե-  
րը գետնի վրա խաչածե դիրք ստացան, ուրեմն  
պատասխանը դրական է, եթէ ոչ, ուրեմն  
բացտսական:

Թասով Քալ պա'ց ել

Թասը լցնում են ջրով և մատով խփում  
թասին, որից դուրս եկող ձայնին այս կամ  
այն կամայական բացատրութիւնն են տալիս:

Հացով Քալ պա'ցել

Մի կտոր հաց են բռնում ձեռքին և եր-  
կար նաևելուց՝ այս կամ այն բացատրութիւնը  
տալիս:

Շորով Քալ պա'ցել

Կախարդը վերցնում է մի քառակուսի շոր,  
չորս ծալրերից չորս մարդի բռնել տալիս,  
ինչոր բան մըթմըթում քթի տակ (փորձը կա-

տարող քահանան մեզ չասաց իր մըթմըթոցի  
բռվանդակութիւնը), և նրան թւում է, որ իբր-  
թէ սատանաներն սկսում են երգել. այդ եր-  
գը գըի է առնում կախարդը և «թուղտ» (թի-  
մսիմ) շինում, որը կարում են վախեցածի  
գլխարկի մէջ կամ վզից կախում։ Այս քանն ընդ-  
հանրապէս քահանաների մասնագիտութիւնն  
է. յայտնի են մանաւանդ Սարամերիկի և Հին-  
Քաղաքի քահանաներն ու վերջինիս ընկնաւոր  
որդին, որոնք իրանց գրբացութիւնը կատա-  
րում են գլխաւորապէս «Սողոմոնի» անունով  
ձեռագրի միջոցով։

### Ճ Ա Ը Բ Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

Վէզը գցում են, եթէ «ալչու» կանգնեց,  
ուրեմն պատասխանը դրական է։ Աջողակ մար-  
դին ասում են՝ «քո ճանն ալչու ի»։

### Ս Ն Ո Տ Ի Ա Պ Ա Շ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

Հացը գետնին գցելը, կոխոտելը, հալհոյե-  
լը մեղք է համարւում, որովհետեւ նրա մէջ  
աստծու ձեռն է թաթախւել։

Երեխալին չեն թողնում հաց բերելու, որ-  
պէսզի չթափւի և տան բա՛րա՛ք'աթը կտրւի։

Հաց վերցնելիս չպէտքէ սուլել, թէ չէ սա-  
տանաները կժողովւեն հացի վրա և պար կը-  
բռնեն։

Աղքատին ամբողջ հաց չեն տալ, որպէսզի  
տան բա՛րա՛ք՝ աթը չկտրւի:

Գիշերը հացի սփռոցը դուրսը թափ չեն  
տալ նոյն նպատակով:

Թթխմորն արեւին ցոյց չեն տալ նոյն նպա-  
տակով:

Նոր հացը թխում են՝ գեռ հինը չփերջա-  
ցած՝ նոյն նպատակով:

Մաղած ալրի վրա խաչ են քաշում, որ սա-  
տանան մէջը չխառնւի:

Ալրի մէջ նշխարք են պահում:

Ամբարը բոլորովին չեն դատարկում, գեռ  
հին ալրից մնացած է լինում, երբ նորն  
ածում են, որպէսզի տան բա՛րա՛ք՝ աթը  
չկտրւի:

Կանաչ բոլսը կրակը չեն դցում, որպէսզի  
երաշտ չլինի:

Մեծ պասի միջինքին մեծ հաց (կլօճ) են  
թխում միջուկով՝ մէջը դրած մի փող, կտրում  
ու բաժանում. ում բաժնի մէջ դուրս եկաւ  
փողը, նա կհարստանա:

Եթէ մի տան մէջ մէկն սպանւել է, այն  
տնից թթխմոր չեն տանում:

Ոտով փալտ չեն դցում թոնիրը, որպէսզի  
փալտի հետ սատանալի երեխան չընկնի թո-  
նիրն ու ալրւի, և յետո սատանան իր որդու-

տեղ զցողի որդուն կամ հէնց զցողին տանի:

Թոնըի մէջ կտխած ոտներն իրար չեն տալ,  
ապա թէ ոչ պարտքը կշատանա:

Թխած հացը թոնըի մէջ չեն կախում, թէ  
չէ կախողը մեռնելուց «խոքըտա՛ր'ց» կլինի:

Երաշտ ժամանակ որպէսզի անձրեւ դա, մի  
երկար շերեփ շորով փաթաթում, խրտւի-  
լակ են շինում, ձեռքին ջրով լի մի տման են  
բռնում և երգում թուրքերէն.

Չա՛մ'չ'ի (գ')-խաթուն նա՛ր' ը՛ստիլը՛ր' (շե-  
րեփ-տիկնիկն ինչ է ուզում),

Ալլահտան եազրը ը՛ստիլը՛ր' (աստծուց  
անձրեւ է ուզում),

Չա՛մչա՛նը՝ դօլը ը՛ստիլը՛ր' (շերեփը լիքն  
է ուզում):

Ապա տմանի չուրը դատարկում են շերեփի  
գլխին:

Եկող կարկուտը կտրելու համար մի տքա  
(պարսկական երկար վերնազգեստ — վերարկու)  
են գցում վրաները և տռանց մէկի հետ  
խօսելու՝ գնում են արտի մի ծալըից միւսը մի-  
քանի անգամ գնում-գալիս՝ ինչ-որ ազօթք  
մրմուալով: Պառաւներն էլ շամփուրներ և եր-  
կաթէ ձողեր են գցում շէմքը: Կարկուտը  
դանակով կիսում են:

Եթէ շունը տաք-տաք կուտ (կուտանա)

ուտի, կկատաղի:

Եթէ շունը խոտ ուտի, էժանութիւն կլինի,  
իսկ եթէ կատուն խոտ ուտի, թանգութիւն  
կլինի:

Թոնքի մէջև կրակի վրա ջուր ածելը մեղքէ:

Իւղի օշնակի մէջ «օրհնած» իւղ են դցում,  
որ միջի իւղը չսպառւի:

Երեկոյեան տունը չեն աւլում, որ բա՛-  
րա՛ք՝ աթը դուրս չգա:

Եթէ օձին ասես՝ «օղուրը խէր ըլի, աս-  
ւած խետտ», օձը չի կծիլ:

Եթէ օձի թուքը մարդ կուլ տա, բոլոր  
կենդանիների ու բոյսերի լեզուն կհասկանա:

Եթէ օձի թագուհու ուլունքը մարդ ու-  
նենա, օձի կծածը չի ազդիլ:

Օձի շապիկն աղջիկները կարում են իրանց  
գլխարկի մէջ, որպէսզի ծամերը երկարեն:

Օձին եթէ սպանես, մինչև երեկոյեան աստ-  
ղերը դուրս չգան, չի սատկիլ:

Եթէ «սա՛նա՛քիս»-ի (կղնաքիսի) կաշուց փո-  
ղաման կարեն, միջի պղինձ փողը ուկու կփո-  
խարկւի:

Եթէ ջորին ծնի, աշխարհի վերջը կդա:

Եթէ մողէսի մօտ մարդ բերանը բաց կանգ-  
նի, մողէսը մարդի ատամները կհամրի, և  
մարդ կմեռնի:

Եթէ կատուն հիւանդի վրա նստի, հիւանդը կմեռնի:

Եթէ կատուն տանտիկնոջից առաջ է ծընում, «քառսունքը» (երեխալի քառասունքին երեացող մի հիւանդութիւն) կընկնի տանտիկնոջ ապագա զաւակի վրա. իսկ եթէ տանտիկինը կատւից առաջ ծնեց, քառասունքը կընկնի կատւի ապագա ձագի վրա:

Եթէ կատուն իր ձագին ըերի ծննդկանի մօտ, իր ձագի ցաւը կտա ծննդկանի զաւակին. ուստի նորածնին նախապէս տանում են կատւի ընի մօտ, որպէսզի երեխան իր ցաւը կատւի զաւակներին տա:

Կատւին սպանելը մեղք է, որովհետև նա Քրիստոսի թաշկինակն է: Մի անգամ Քրիստոս ճաշի էր նստած, լանկարծ մի խումբ մկներ դուրս թռան և լարձակւեցին սեղանի վրա՝ սպառնալով Քրիստոսին սոված թողնել. Քրիստոս գցեց իր թաշկինակը մկների մէջ, որը կատու դարձաւ և մկներին խեղդոտելով՝ սեղանն ազատեց:

Եթէ կատուն երեսը լւանա, հիւր կդա:

Կատւի լւացւելու ժամանակ նրան կասեն՝ «թա'թ' թա'լ' անգնի իտեւը». եթէ կատուն թաթը գցեց ականջի ետեւը, ուրեմն պանդուխաը կվերադառնա:

են կովին տերեներն ուտելու:

Եթէ շունը ոռնա, նշանակում է հրեշտակ  
է տեսնում, ուստի տնեցիներից մէկը կմեռ-  
նի:

Եթէ շունը երդիքից նայէ, տանը վտանգ է  
սպառնում:

Որպէսզի շունը չկծէ, ասում են.

Քիրիստո՞ս էկաւ ախշարք,

Շուն կար, ո'տ կար, կլո՛իս չկար:

Գալլը մինչեւ որ շան միս չուտի, չի ծնիլ:  
Եթէ արևով անձրեւ է գալիս, գալլը ծը-  
նում է:

Եթէ գալլը քաղցածանա, կոռնա, և աս-  
տւած «մանանեխ» (մանանա) կուզարկէ նը-  
րան ուտելու:

Որպէսզի գալլը չկծի, իրանց լետեից պա-  
րան են քաշում, կամ երկու քար իրար են  
խփում:

Եթէ տղայի գլխին աղջկա գլխարկ գնեն,  
գտլն ալդ տղայից չի վախիլ:

Բուն եթէ կտրին երդէ, ալդ տնից մարդ  
կմեռնի:

Եթէ բուն վայէ, գողեր կդան:

Ով կաչաղակի գլուխն ուտի, կխենթանա:

Կաչաղակը եթէ կտրի վրա կչկչաց, ասում  
են.

Ա, ա՛ջըլտ', սլա՛րի՛, պա՛րի՛,

Թունգուէկըտ ուսկի կա՛րի,

Հա՛յ սլա՛րի էս, քելի, մէ տը՛ր՝ էլեա՛րի,

Հա՛յ չար էս, ուտտ կոտրւի, էլ մի եա՛րի:

Կաչաղակը գնում է. եթէ նորից վերադարձաւ,

ուրեմն սլանդուխտը կգա, կամ նամակ կու-

զարկի:

Եթէ արևմտին աքաղաղը կանչի, հիւր կգա:

Եթէ հաւի ձալնը կորւի, մեռած մարդի

դիակը կրերեն:

Որպէսզի հաւը թուխս չնստի, գլոգացնում

են, կամ իր փետուրներից մէկը քիթն են

անցկացնում:

Ագա՛ր՝ (մարտ) ամսի առաջին չորեքշաբթի

և մեծ սլասը բռնած գիշերը չըերք կանալք

գնում են ջրաղաց, եօթն անգամ նաւի վրայով

ցատկում, որպէսզի զաւակ ծնեն, ապա

ջրաղացից ցորեն բերում, տալիս հաւերին, որ

թուխս նստեն:

Եթէ հաւն աքաղաղի սկս կանչէ, այն տը-

նից մարդ կմեռնի, ալդ դէպքում հաւի աչ-

քերը կկապեն և երդիքից կցցեն, եթէ հաւը

դէպի դուռը գնաց, կպահեն, իսկ եթէ դէ-

պի թոնիրը գնաց, կմորթեն: Եթէ տանը հի-

ւանդ կա, կանչող հաւը տալիս են ֆալչիին,

սա էլ մորթում է, միսն ինքն ուժում, իսկ

արնի մի մասը տալիս է հիւանդին խմելու, միւս մասով էլ «թուղթ» է անում նրա համար, որ առաղջանա:

Կնքահայր կամ կնքամայր չեղածները հաւշեն ժորթում:

Եթէ թուխո գնելու ժամանակ հաւի ձւերի ամրութիւնն ատամներով փորձես, բոլոր ձագերն աքաղաղներ կլինեն:

Հաւը թուխս գնելիս տղամարդիկ իրանց գլխարկներն առնում են քերաններն, իսկ կանայք իրանց շորի փեշերը գցում են գլխներին, որպէսզի ձագերը «ք'ա՛քո՛ւլ՛»-ով կամ «պպուշ»-ով լինեն, և ասում են. «Հմեն ճուճու, մէ զ'ուղ'ու» (ամենը ջուջու — հաւ —, մէկը ղուզու — աքաղաղ), կամ «ըմեն ճուճու, մէ շա՛ր'բա՛թ» (ամենը հաւ, մէկն էլ թուխսկանին խմելու համար):

Եթէ արդէն մէկերկու ճուտ հանած թուխսկանին կուտ տաս, մնացած ճտերը չի հանիլ: Եթէ ճուտը չի գնում հաւի լետևից, նշանակում է ձուն գողացւած է եղել:

Եթէ ագռաւը կռռա, ձիւն կգա, որովհետեւ «ղառ» (թուրքերէն՝ ձիւն) է կանչում:

Ծիծեռնակն աստծուն ճրագ է տարել, ուստի սուրբ է, չպէտք է սպանել կամ հայոցել: Ծիծեռնակին տեսնելիս՝ ասում են.

Ծիծեռնիկ', ծիծեռնիկ',

Աստծու ա՛ր'թ'ա՛ր' խաւիկ',

Վա՛վ քեզի քար կթա՛լի,

Ճկոթէն էրուն թա՛լի:

Ծիտն աստծու ճրագը հանգնողն է, ուստի աստւած ասել է. «Անիծւի էն տղան, որ չի սպանի օցը, ճնջուղը ինա՞ն՝ մուկը»:

(Թուչունների մի մասը թուրք է, միւս մասը հայ, թուրք են՝ ագռաւը, որովհետև թուրքերէն է դռում, — «ղառ» թուրքերէն նշանակում է ձիւն—բուն, ծիտը, կաչաղակը և այլն. հայ են՝ աղաւնին, սարեակը, սոխակը, յոալոպը և այլն:)

Առաւօտեան տեղ գնալիս եթէ տխուր մարդի հանդիպեն, ետ կդառնան:

Կոյրին տեսնելիս՝ գործը չի տջողւիլ, կաղին տեսնելիս՝ կաջողւի:

Երեկոները գլուխ չեն սանրիլ:

Նարաթ երեկոյեան մաստակ չեն ծամիլ:

Որպէսզի հիւանդը չմեռնի, պայտ կամ կենդանու գանգ են թաղում շէմքում:

Նարաթ գիշերը գոմում աղը չեն թողնիլ, թէ չէ գիշերը կզառանցեն:

Տեղաշորերի ծածկոցը երեկոները բանում են, որ մէջը սատանա չմտնի:

Աղջիկները մսի ջիլ («ծամերկինուկ») են ու:

տում, որպէսզի ծամերը երկարեն:

Խուզած կամ թափւած մազերը գետնին չեն թափում, որ գլուխները չցաւի, այլ դընում են պատի ճեղքում:

Եղունկը կարելուց դեն չեն գցում, կապում են թաշկինակի մի ծալրում և պահում, որ մեռնելիս իրանց հետ թաղեն, որովհետեւ հանդերձեալ կեանքում կպահանջեն:

Ատամն ընկնելուց թաղում են դռան ճըխանի տակ և ասում.

ԱՌ քեզի շան ատամ,

Տնւ ընձի կ'առու ատամ:

Եթէ ոտնամաններից մէկն ընկաւ միւսի վրա, ուրեմն տիրոջը բամբասում են:

Եթէ ականջը կանչում է, մէկն իրան լիշում է, ուստի անուններ են տալիս, որի անւան վրա կանչելը դադարեց, նշանակում է՝ նտ է լիշում:

Թոկով ոտները կապելիս ասում են, թէ մի տեղ ալդ ժամանակ մարդ են բանտարկում:

Եթէ գարշապարը քոր գա, կամ աչքը խազա, կտմ հացի պատառը կամ խմորի գունդը ձեռքից ընկնի, կամ երեխան ոտների մէջ նտի, հիւր կգա:

Եթէ երեխան «նորէն իւառնելրի» (քերանի հիւանդութիւն, որ վերագրւում է լուս-

նի նորելուն), երեխային տանում են լուսնի ծագելու ժամանակ երգիքի մօտ, գերանից մի կտոր կտրում, լուսնին ցոյց տալիս, և երեխան առողջանում է. կամ ծաղկազարդի «օրհնած» ճիւղն ալրում, մոխիրն ածում են երեխայի ըերանը:

Երեխան հիւանդանալուց ասում են՝ «աշկ ի առե» կամ «նիաթւե» (կապոյտ աչքերը չար են լինում), ուստի խմորից գունդ են շինում, գնում երեխայի դէմքին և ասում.

Զար աշկը չար փուշ,

Զար գիլ'լա'ն' չար փուշ:

Յետո ալդ խմորը գցում են վառւած թռնիրը. Եթէ խմորը տրաքւեց, նշանակում է՝ չար աչքը տրաքւեց, երեխան կառողջանա:

Եթէ ձեռի ափը քոր գա, փող կգա, ուստի ափը համբռելով՝ ճակատներին կդնեն:

Եթէ թերի մկանը խաղա, հիւր կգա. ոտի մկանը խաղա, մարդ կմեռնի:

Գորտնուկից (շխտուկ) ազատւելու համար նոր լուսնին են դառնում և ասում.

Նո՞րը, նո՞ր,

Ես խալիւս՞ր,

Տու թաքաւո՞ր.

Ես չա'փա'լ' շխտուկ կասի.

«Ես նո՞րէն խորոտ էմ»:

Ապա գորտնուկի վրա թքելով՝ աւելացնում  
են.

Տու չո'րսուցես,

Չո'ր տա'ր'ցուցես:

Լուսինը բարկանում է գորտնուկի վրա, որ  
յանդգնել է իրան աւելի գեղեցիկ համարել,  
և չորացնում է նրան:

Լուսինը նոր դուրս եկած ժամանակ նա-  
յում են, ապա դառնում, իրանց մօտ կանդ-  
նած մարդին նայում. Եթէ իրանց հետ լարի  
բան պատահեց, ուրեմն ալդ մարդը բարի է,  
եթէ չար բան պատահեց, ուրեմն ալդ մարդը  
չար է:

Եթէ մի կին տղա չէ ունենում, ձեռը  
քսում է մի նորածին ազակի դէմքի, ապա իր  
դէմքին, որպէսզի ինքն էլ արու զաւակ ծնի:

Իմանալու համար, թէ պանդուխտը շնոր-  
կվերադառնա, երեխալին գլուխը քորել են  
տալիս. Եթէ ճակատի կողմը քորեց, շուտ  
կգա, ծոծրակի կողմը քորեց, ուշ կգա:

Որպէսզի ատելի մարդը չվերադառնա օտա-  
րութիւնից, նրա գնալու ժամանակ լետեից  
մի սե պտուկ են կոտրում:

Օտարութիւն գնացողի լետեից ջուր են սը-  
րսկում, որ շուտ վերադառնա:

Փոքը երեխալին չեն գնում տեղաշորի վրա,

իրանց գլխից բարձր չեն պահում, գլխաբաց  
դուրս չեն տանում, որպէսզի սատանան չը-  
խփէ:

Մեծ պասի երկուշաբթի օրն ով դուրս գտ  
տնից, պէտք է հետը մի փալտի կտոր բերի,  
որպէսզի գարունը շուտով գտ:

Համբարձման գիշերը լողանում են, ապա  
գնում սարերից «ուրց» (խուրց, խոռնը) ու  
գինձ բերում, որպէսզի ձմեռուա «ցաւուչոռ»-ից  
ապատւեն:

Երբ երկինքը երկար ժամանակ ամպած է  
լինում, դիմում են արևին այսպէս.

Արև', արև', ել', եա'րի,

Պա'յատ, բաբատ էկիր ի,

Ուկի թա'նա'ն' պերիր ի,

Ծառի տակը խորիր ի,

Կո'ր ք'ա'լ'ն էկե, կոխիր ի,

Սև հու էկե, կճճիր ի,

Տիրոխնին էկե, լացիր ի,

Տէրտէրն էկե, օխնիր ի,

Ժամխարն էկե, խանիր ի:

Ապա դառնալով աստծուն՝ ասում են.

Կտո'ղամ, կտո'ղտո'ղամ,

Ուսւած, արև' տու, տալնամ:

Եթէ ճրագն ինքնիրան հանգաւ, նշանա-  
կում է ալնտեղ սատանա է մտել:

Աչքը խաղալուց կամ աջողութիւն կպատահի, կամ անաջողութիւն, կան մարդիկ, որոնց աջ աչքն է բարի, իսկ ձախը չար, և կան, որ ընդհակառակն է:

Մի տեղ գնալուց երեսներին խաչ են հանում, որ բանն աջողւի:

Փռշտալիս նոյնալիս են վարւում նոյն նպատակով:

Մի անգամ փռշտալուց գործը չի աջողւիլ, ուստի կասեն՝ «սա՞րը՝ արա» (սպասիր) և գործը չեն շարունակիլ. երկու անգամ փռշտալուց կաջողւի, երեք անգամ փռշտալուց բոլորովին չի աջողւիլ, ուստի գործը կթողնեն՝ ասելով թուրքերէն. «Ուզ օլդը՝, փուչ օլդը՝» (երեք դարձաւ, դատարկ եղաւ):

Եթէ երկու մարդ միևնուն բանն են մտածում, ով շուտ է արտակայտում, նա աւելի շատ կապրի:

Նորահարսի ու փեսայի գլխին միրգ են ցանում, որ առատութեան մէջ ապրեն:

Ծննդկանի գլխատակին դնում են նարեկ, շամփուր կամ սուր, որպէսզի սատանաներն իրանց երեխային չփոխեն նորածնի հետ:

Երեխայի կտրած պորտը գցում են այն մարդի բակը, որի հարստութիւնը կամ արհեստը ցանկալի է որ երեխան ունենա ապագայում:

Ծննդկանին սոխ են տալիս ուտելու, որպէսզի բերանիցը հոտ գա, և սատանան չմըտնէ փոքը:

Երեխալին գուրս տանելու ժամանակ կըրծքին հաց են դնում, որպէսզի սատանան չխփէ:

Առաջին թիսած հացն ուտողի առաջին ամուսինը կմեռնի:

Եթէ հաւն օրական երկու ձու ածեց, ալդ տնից մէկը կմեռնի:

Կանայք գուրսը տաք ջուր թափելիս ասում են՝ «Քիրիստո՛ս պախապան», որպէսզի սատանալի գաւակի ոտները չալրեն, ապա թէ ոչ սատանան վրէժինդիր կլինի:

Մատներին պողպատէ մատանիներ են կըրում, որպէսզի սատանան չմօտենա իրանց:

Յօրանջելիս բերանները խաչակնքում են՝ ասելով. «Քիրիստո՛ս պախապան», որպէսզի սատանան փորը չմտնէ:

Գետնին խփել չի կտրելի, ապա թէ ոչ սատանան բեռը կծանրացնէ:

Մութ տեղը ջուր չեն խմում, որպէսզի սատանալին էլ հետը կուլ չտան, կամ սատանան գլխին չխփէ:

Եղունկը կտրելուց գցում են ծոցն ու ասում, թէ թող սատանան տանէ, իր համար եղունկներ շինէ:

Սեղանի վրա սատանալի անուն չեն տալ,  
որպէսզի կերածը սատանալի բաժին չդառնա:

Կիրակնամտին և կիրակի օրը կար չեն կարել, որից կիրակին ճերմակ դէմքը կարիւնու-  
ւի. գլուխ չեն լւանալ, որովհետեւ կիրակին  
շամփուրը կցցէ գլուխ լւացողի կուրծքը. ճը-  
րագը շուտ կվառեն և ամբողջ գիշերը չեն  
հանգցնիլ, որովհետեւ հակառակ դէպքում կի-  
րակին երազում մարդի դժոխք կտանէ և կը-  
նախատէ (այս օրէնքն այնքան էլ ճիշտ չէ  
գործադրւում):

Զորեքշաբաթմուտ և ուրբաթմուտ բանել  
չէ կարելի:

Ով ծիածանի տակով անցնէ, սեռը կփոխէ:  
Կալծակից առաջացած հրդեհը չեն հանգցնիլ,  
որպէսզի աստծու բարկութիւնը չշարժեն:

Սաստիկ որոտի ժամանակ երեսներին խաչ  
են հանում, որպէսզի լիշեցնեն աստծուն, թէ  
իրանք քրիտոնեաներ են, սւստի աստւած իզուր  
է ուզում իրանց պատժել:

Երկրաշրթից չվնասւելու համար ասում են  
«Սունն ու կերան քեզ պա՛րեխօս»:

Երբ վերջալուսին ամպերը կարմրում են,  
ասում են, թէ մի տեղ կոտորած է եղել, և  
կոտորւածների արիւնն է կարմրացնում ամ-  
պերը:

Երբ լեռն արձագանգ է տալիս, ասում են,  
թէ սատանան է ծաղրում, ուստի երեխանե-  
րին արգելում է լեռների մէջ դիտմամբ ար-  
ձագանգ առաջացնելու մտքով բարձր ձախել:

Երկնային մարմիններին հայհոյելլը մեղք է,  
որովհետեւ նրանք աստծու ճրագներն են:

Որպէսզի անձրել շարունակէ գալ, ափ-  
ները բանում ու անձրեի տակ տարածում  
են:

Ով իր արմունկը համբուրի, թռչուն կդառ-  
նա:

Եթէ մողէսի պոչը մի քար խփելով կարո-  
ղանաս կտրել, պոչը շարժւելու ժամանակ  
կարողանաս ցատկտելով շորերդ հանել ու հագ-  
նել, ապա պոչը վերցնել շարժւելիս և ծոցդ  
դնել, աներեւոյթ կդառնաս:

Եթէ սատանայի գլխարկ ճարես ու գլխիդ  
դնես, կաներեւութանաս:

Կուտ (կուտանա) ուտողը «դա'լ'վա'թւոր»  
կլինի:

Ինչ աղջիկ որ հարսնքահացի ալիւրը մա-  
զի, ինքն էլ կամուսնանա:

Հայի հաց չկերած թռւրք մեռելը շուն  
դառնալով գիշերները՝ դուրս է գալիս գերեզ-  
մանից և թափառում. եթէ հայ տէտէր թա-  
ղէ, այլևս շուն չի դառնալ:

Ա. Սարգսի զիշերը ելազում ով ինչ փողոցում ջուր խմեց, այն փողոցում է ապրում նրա ապագա ամուսինը:

Ա. Սարգսի պասը լրանալուց ով շաբաթ օրը ըլուծի պասը, այդ օրն էլ պահի, նա փորացաւով չի հիւանդանալ երեքը:

Տեառնընդառաջին նորապսակները եօթն անդամ ցատկում են խարոյկի վրայով, որ բախտաւոր լինեն:

Տեառնընդառաջի խարոյկի վրա խանձում են երեխալի մազերը, որպէսզի գլուխը չցաւէ:

Տեառնընդառաջի խարոյկի մոխիրն ածում են հաւաքունը, որ հաւերը շատ ձու ածեն, կամ թափում են կարի չորս անկիւնները, որպէսզի հարստանան:

Տեառնընդառաջի խարոյկի վրա շորի փեշն ալրում են, որպէսզի «չոռուցաւը» հետն ալրւի:

Ծաղկազարդի «օրհնած» ուռենու չորացած ճղները դնում են տաքացող կաթի տակ և վառում, որպէսզի կաթը բա՛րա՛ք'ա՛թով լինի:

Ութի-ուրբաթամտին «կարկատ» (բոված հունդեղէն) չի կարելի չըթել, չըթողը Քրիստոսի ոսկորներն է չըթում, ուրեմն հրեա է. ճրագ չի կարելի վառել, դա կլինի Քրիստոսին թըշնամութիւն, և վառողը կդառնա հրեա:

Ով կարողանա համբարձման ամբողջ գիշերըն արթուն կանգնել կտրին և աչքերն անթարթ յառել երկնքին, նա կտեսնի «Լէլլի և Մա՛ր՛ջա՛ն՛» աստղերը թռչելիս և ինչ որ նըրանցից խնդրի, կստանա:

(Տես նաև «Հիւանդութիւն և բժշկութիւն» գլուխը):

### ԲԱԽՏ, ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՒ ԵՐՍ.9

Մարդիկ լինում են բախտաւոր և անբախտ: Բախտը մի էակ է, բայց թէ ինչի նման, այդ հարցին չէ պատասխանում ժողովուրդը: Ղսմա՛թն առանձին բան է, բախտն առանձին: Բախտն ամեն մարդ չի ունենում, այլ միայն բախտաւորները, որ կամ մշտական է, կամ որոշ ժամանակով. իսկ ղսմա՛թը պատահական է, որ բախտաւորներն էլ կարող են ունենալ, անբախտներն էլ:

Մեծ պասի միջինքին մի մեծ միջուկով հաց (միջինքի կլօճ) են թխում՝ մէջը դնելով մի փող. այդ հացը կտրում են ու բաժանում. ում բաժնի մէջ երեաց փողը, նա բախտաւոր է, տան «դա՛վա՛թը» նրանն է. իսկ եթէ կտրելու ժամանակ դանակը փողի վրալով անցաւ, ուրեմն կտրողինն է բախտը:

Գանգի կարերը համարում են ճակատա-

գիր, անջնջելի, միշտ կատարւող. ճակատագիրը գրւում է այն ժամանակ միայն, եթե երեխան միքանի ամսական է դարձած լինում:

Սակայն ճակատագրին հաւատալով հանդերձ՝ վնաս կրած դէպքում ոչոք չէ հաշտւում այն մտքի հետ, թէ այդ այդպէս էլ պէտք է լինէր, ճակատագիրն անխռւսափելի է...

Երազն աստծու կամ սրբի գործ է. նըրանով մարդկանց կամ բարի խորհուրդներ, հրամաններ ու նախազգուշացումներ են տալիս, կամ գուշակում են նըրանց ապագան: Աստանաներն էլ են երազ տալիս, միայն չարերազներ, մարդկանց մոլորեցնելու, մեղսագործելու մտքով:

Կիրակի օրւա երազը եթէ նոյն օրը չկատարւեց, ուրեմն երեք շաբթից յետո կկատարւի:

Ա. Սարգսի նախատօնակին ջահիլները փոխինդ են ուտում, որպէսզի ծարաւեն և երազում ջուր խմեն. ինչ փողոցում որ ջուր խմեցին, այն փողոցից կլինի ապագա ամուսինը:

Երազների միջոցով մարդիկ սրբերից ստանում են նոև զանազան շնորհներ—թիզ չափել, «թուղթ» անել, լարի վրա խաղալ և ալլն:

Երազների մէջ սրբերը երբեմն բժշկում են  
հիւանդներին:

Երազները բացատրելու համար դիմում են  
էֆէմէրգիին, որ սաստիկ տարածւած է, գլու-  
նւում է նոյնիսկ անգրագէտ տներում, ո-  
րոնք ուրիշներին են տանում կարգալու:

Տեսած երազն առաւօտեան անմիջապէս  
պատմում են տնեցիներին, հարևաններին  
իբրև թարմ նորութիւն, դա մի տեսակ լրա-  
գրութիւն է: Կան մարդիկ, որոնք համարեա  
ամեն գիշեր երազ են տեսնում. ընդհանրա-  
պէս սալմաստեցին շատ երազատես է:

Տեսիլքին նոյնպէս հաւատում են. սրբերն  
օրը ցերեկով յաճախ են երևում մարդկանց:

### ՊԱՍ ԵՒ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սալմաստի ժողովուրդն իր կրօնական ջեր-  
մեռանդութեամբ ոչ միայն աչքի չէ ընկնում,  
այլև զարմացնելու աստիճանի ազատամիտ է  
կրօնական հարցերում, մանաւանդ Սաւրայում  
(խաչագողութեան հետեւանք). ամենմի քայ-  
լափոխում կպատահէք բառի բուն նշանակու-  
թեամբ աթէիստների. սակայն և այնպէս պաս  
պահելը և ուխտագնացութիւնն անհրաժեշ-  
տութիւն է այստեղ, մանաւանդ կանանց  
համար. պաս են պահում, ուխտ են գնում և

միւնոյն ժամանակ ժպտալով ու ձեռը թափ տալով ասում. «Ե՞հ, ըմեն սութ ի»... Այս բոլորով հանդերձ ով պաս չէ պահում, նա «Ընդլիզ» կամ «տաճիկ» ի», հայ չէ:

Ոչ միայն եկեղեցական պարտագիր պասերըն, այլև ոմանք կամաւոր պասեր են պահում, ինչպէս օրինակ՝ «աստւածածնա աթոռք»—մի շաբաթ, ո. Կարապետի պաս—եօթը շաբաթ կամ եօթը տարի. այլև ծոմ են պահում՝ մեծ պասին մինչև կէսօր, ոմանք (հետեւելով թուրքերի «օրբջ» պահելուն) մինչև երեկո, ո. Սարգսի պասն ամբողջ վեց օր անլոյծ (քչերը), ծննդեան պասին մինչև կէսօր, ո. Դէորդի պասին մինչև կէսօր. պաս պահողներից ոմանք ո. Կարապետի պասին ամեն բան ուտում են, բացի մսից և պանրից, աստւածածնի պասին ամեն բան ուտում են, բացի խաղողից և ընկուզից, ոմանք էլ միմիայն ընդհանրապէս միրգ չեն ուտում:

Հիւանդութիւնները բժշկելու առաջին միջոցներն են ուխտն ու ուխտագնացութիւնը. Հիւանդը կամ ծնողները սրբից խնդրում են առողջութիւն՝ խոստանալով գիւղէգիւղ շըրջելով ժողովարարութիւն անել, հաւաքած ալի փողը լանձնել սրբին, կամ խունկ, մոմ, մետաքսէ թաշկինակ են խոստանում սրբին,

կամ ասեղ են ուղարկում բաժանելու տիրամօր աղքատներին։ Հիւանդ երեխալի մայրն ուխտում է եօթը տարի երեխալի մազերը չխուզել, եօթը տարին լրանալուց յետո խուզել և նրա կշռով ոսկի կամ արծաթ նւիրել սրբին, եթէ սուրբը հիւանդին առողջացնէ։ Բաւականացափ ուխտատեղիներ կան Սալմաստում, բայց տեղացիները դրանցով չեն բաւականանում, դիմում են և ուրիշ տեղերի սրբերին, ինչպէս՝ Թադէոս առաքեալ, Բարդուղիմէոս առաքեալ, առ Կարապետ, Տիրամայր Խալին։

Սալմաստի բազմաթիւ ուխտատեղիներից ամենամեծ ժողովրդականութիւն վայելողները հետևեալներն են, որոնք ընդհանուր երկրագութեան առարկա են թէ հայերի, թէ ասորիների, թէ թուրքերի և թէ քիւրդերի համար։

Անուններ.	Ուր գտնւելն ու ինչ լինելը.	Ուխտադնայութեան օրը և արդիւնքի ում պատկանելը.
Դրդիւա:	Խոսրովա գիւղում մի այդ գում մէջ, մատուռ:	Գնում են ցանկացած ժամանակ, արդիւնքն ասորի «արիւնա»-ինն (արքեպիսկոպոս) է։
Փրիւա:	Զեա, ջուլկ գիւղում, մատուռ, ընդ-	Գնում են «կարմիր կիրակի» օրը, արդիւնքը ներկայողքահանայինն

	հանրապէս լու րուսներն ու ականջացաւ ունեցողներն են յաճախում:	է Յաճախում են և ցանկացած ժամանակ:  Մար - Եա- դուք:	Հին-Քաղա- քում. եկեղե- ցի. ընդհանր- քապէս խելա- գարների. ընկ- նաւորների և ջերմախտա- ւորների հա- մար է:	Գնում են ցանկացած ժամանակ. արդիւնքը Խոսրովայի արքեպիս- կոպոսինն է. սակազա- լով տալիս է մասնա- ւոր անձերի:
Ա. Յովհան- նես:	Հին-Քաղա- քից հարաւ- հարաւ-արե- ւելք մի բլրի վրա մասսուռ:	Գնում են զատկի ու խաչի երկուշաբթի (մեռելոց) օրերը. ար- ւելք մի բլրի վրա մասսուռ:	Հին-Քաղա- քից հարաւ- հարաւ-արե- ւելք. մի հողա- շն մասսուռ:	Ա. Յովհաննէսից վե- րադառնում են այդտեղ, գնում են նաև զատկից յետո երրորդ կիրակին. արդիւնքը պատագիչ տէրտէրինն է:
Ա. Յովհան- նես կամ Մար - Իւ- խանա:	Սառնա զիւ- զում. եկեղե- ցի. գլխաւո- րապէս ջերմ- ախտաւոր- ների համար:	Գնում են զատկից յե- տո չորրորդ կիրակին. արդիւնքը Սառնայի տէրտէրինն է:	Գնում են զատկից յե- տո չորրորդ կիրակին. արդիւնքը Սառնայի տէրտէրինն է:	
Ա. Սարգիս:	Գուլիզան զիւզում. եկե- ղեցի:	Գնում են զատկից յե- տո հիգերորդ կիրա- կին. արդիւնքը պատա- րագիչ տէրտէրինն է:	Գնում են զատկից յե- տո հիգերորդ կիրա- կին. արդիւնքը պատա- րագիչ տէրտէրինն է:	
Վանեեր:	Մահմետից	Գնում են զատկից յե-	Գնում են զատկից յե-	

Ա. Հարսու- ապար:	Հարսու-արե- մուտք. աւե- րակ վանքի հետքեր, քա- րակոյս:	Պատկից յետո հինգե- րորդ կիրակին. ար- դիւնքը ներկայող տէր- տէրինն է:
Ա. Հախնա- զար:	Վա' թ' դան դիւղի արե- մտեան կող- մը, մի բլրի վրա աւերակ մատուռ:	Գնում են ցանկացած ժամանակ. արդիւնք չունի ընդհանրապէս:
Դրդասար: Երրդ - Եի- մօն:	Նոյնպէս:	Նոյնպէս:
Մար-Զայա -Ղդիշա:	Խոսքովա-	Խոսքովա-
Ա. Բարդու- ղիմեսսի աջ և նրա- շագործ ա- ւետարան:	Հա' ֆ' թվանի ս. Գէորգ եկե- ղեցում:	Նոյնպէս:
Ա. Թադէոս:	Հա' ֆ' թվա- նից արեկը. մատուռ:	Նոյնպէս:
Ա. Պօղոս:	Հա' ֆ' վանի մօտ:	Նոյնպէս:
Առլբալա'ն- դա'r:	Դալասարի ե- կեղեցու մօտ. խաչքար:	Նոյնպէս:
Մար - Գ'o'- վա'r'զիզ (Ա. Գէորգ):	Դալասարի մօտ. մատուռ:	Նոյնպէս:
Ա. Գէորգ:	Ուլա' յում. եկեղեցի:	Նոյնպէս:
Մար - Եի- մօն:	Ուլա' յում. մատուռ:	Նոյնպէս:

<b>Ա. Գեղրգ:</b>	<b>Մա՛հ' լ'ա՛մ.</b>	<b>Գնում են ցանկացած ժամանակ . արդիւնիք չունի ընդհանրապէս:</b>
<b>Վ. արդան- ջօրավար:</b>	<b>Մա՛հ' լ'ա՛մի մօտ, մատուռ:</b>	<b>Նոյնպէս:</b>
<b>Ս. Սարգիս:</b>	<b>Ք' օ՛չա՛միշ.</b>	<b>Նոյնպէս:</b>
<b>Ա. Ասւած- ձածին:</b>	<b>Եկեղեցին:</b>	<b>Աստւածածնի տօնին:</b>
<b>Նոյնպէս:</b>	<b>Դէյթանաւա.</b>	<b>Նոյնպէս (այժմքիւր- դերի ահից չեն գնում):</b>

**ՏԱՐԻԱ. ԿԱՐԵԽՈՐԱԳՈՅՆ ՏՕՆԵՐԸ. ԵՒ ՆԸ-  
ՐԱՆՑ ԱՌԻԹՈՎ. ԿԱՏԱՐԻՈՂ. ԾԷՍԵՐՆ ՈՒ  
ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

### **Ա. ՍԱՐԳԻՍ**

«Երեք-մէկ» (երեք օր ծոմ) են պահում —  
չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ. վերջին  
օրւա երեկոյին փոխինդ են ուտում, որպէսզի  
երազ տեսնեն. ինչ փողոցում որ գտնւեցին  
երազում, «ռուզին» (պարէնն) ալնտեղից կգտ-  
իսկ ջահէլներն ինչ փողոցում որ ջուր խմե-  
ցին երազի մէջ. ալդ փողոցից կլինի իրանց  
ապագա ամուսինը: Ով պաս պահեց, նա ուր-  
բաթ գիշերը կտեսնի ս. Սարգսին իր տասնու-  
չորս ձիաւորով: Եկեղեցում ալդ գիշեր  
փոխինդ են դնում, որպէսզի ս. Սարգսի ձին  
կոխի, և ալգապիսով օրհնուի:

**Ս. Սարգիսը մի ուռում (յոյն) աղջիկ է տե-**

սել, սիրահարւել, բայց ծնողները չեն տւել  
իրանց աղջկան, ուստի ս. Սարգիսը ձիով փախ-  
ցրել է. ահա թէ ինչու նա միշտ ձիով է  
նկարւած լինում:

Երկու որբեր, քոյր ու եղբայր, Սիմօն ու  
Սիմիկ, ապրելիս են լինում մի գիւղում, որի  
ջուրը վիշապը կտրում է, և գիւղացիներն  
ստիպւած են լինում ջուր ստանալու համար  
ամեն անգամ մի զոյտ մարդ ընծալել վիշա-  
պին կլանելու. Հերթը հասնում է որբերին,  
բայց ս. Սարգիսը խղճալով նրանց՝ խլում է  
վիշապի ձեռից, լանձնում գիւղացիներին և  
խնդրում, որ պահեն մինչև իր վերադարձն,  
իսկ ինքը գնում է, վիշապին սպանում «զի-  
դա»-ով (նիզակ). գիւղը վերադառնալով՝ տես-  
նում է, որ գիւղացիներն իրանց խնամքին  
լանձնւած որբերին մորթել, խաշել և կերել  
են, այնքան սոված են եղել. սուրբն անի-  
ծում է ալդ գիւղը, և գիւղացիները խաշւում  
են իրանց խաշած որբերի պէս. ուստի ալդ  
գիւղի անունը մնում է «Խաշինո՞ց» (իսկ թէ  
Խաշինո՞ցը որտեղ է գտնվում, ալդ չգիտէին  
պատմողները):

Ով ս. Սարգսի պասը չլուծի՝ շաբաթ օրը  
պասը բանալով, նա փորացաւով չի հիւան-  
դանալ:

ՏԵՍ. Ա. Ա. Ը. Գ. Ա. Ա. Զ.

(Տեղինդա՞ն կամ սա՞նդառէն)

Ժամերգութեան ժամանակ նորափեսաները  
մի-մի հատ մոմ են ունենում ձեռներին։ Ժա-  
մերգութիւնը վերջանալուց ամենքը մի-մի  
մոմ են կպցնում եկեղեցում և բերում տուն։  
Եթէ ճանապարհին հանգչում է մոմը, նորից  
են վերադառնում եկեղեցի և վառում։

Կտուրներին խոտից ու փշից խարոյի են  
կազմում, եկեղեցում վառած մոմով կպցնում։  
Նորապսակները (կին և տղամարդ) եօթն տն-  
դամ թռչում են խարոյի վրայով, որ բախ-  
տաւոր լինեն. Երեխաների մազերը խանձում  
են ալդ կրակով, որպէսզի գլուխները չցաւէ։

Կրակի մոխիրն ածում են հաւատունը, որ  
հաւերը շատ ձու ածեն. կամ կտրի չորս ան-  
կիւններում շաղ են տալիս, որպէսզի հարըս-  
տութիւնն ալնքան շատանա, որ կարողանան  
մոխրի պէս դէս-դէն ցրիւ տալ։

Խարոյի կրակից կրակից կպցնում են ճրագը և  
ամբողջ գիշերը վառ պահելով միւս օրը նրա-  
նով վառում են թոնիրը։

Խարոյի կրակի վրա փեշներն ալրում են,  
որ «չոռուցաւ»-ը հետն ալրւի։

Եթէ խարոյի ծուխը դէպի արեւելք գնա,  
տարին պտղաբեր կլինի, իսկ եթէ դէպի ա-

ըեմուտք — պատերազմ կլինի:

Խարովկը վառելուց հրացաններ են պարպում կտուրներից:

Այդ օրը «կարկատ» (բոված հունդ, աղանձ) են ուտում:

### ՄԵՌ ՊԱՍ (ճ n' չ պախս)

Մեծ պասը մի շքախումը է լիսուն ձիաւորից բաղկացած, ամենմի օրն անցնելիս՝ մի ձիաւոր հեռանում է խմբից, երեխալի ամենմի պաս ուտելուց՝ մի ձիաւոր մտնում է նրա փորը:

Պասի երկուշաբթի օրը կոչւում է «կրծո՞ն». այդ օրը խիստ չէ արգելում պաս ուտելը, մանաւանդ փոքրերին. այդ օրւա ձիաւորը բարի է լինում, երեխաների փորը չէ մտնում, այլ միտյն մատով սպառնում է, որ այլևս այդպիսի բան չանեն, պաս չուտեն. այդ օրը մաքրազարդում են երեկոյեանից մնացած բոլոր ուտիսւա բաները: Այդ օրը տնետուն են ընկնում և պաս շնորհաւորում: Երեխաները սոխի մէջ եօթը փետուր են խրում և շինում «գ'ա՞ն'դլա'փաշա» կամ «պախս», կապում թելի ծալրից և երդիքից կախում. ամենմի շաբաթ անցնելուց փետուրներից մէկը հանում են. զերջին փետուրը, որ հակառակ վեց

սե փետուրների՝ ճերմակ է լինում, հանում  
են զատկին և սոխը գցում կերակրի մէջ:

Պասի առաջին չորեքշաբթին կոչւում է  
«կատած շան կիրակի». այդ օրը տօնում են,  
որպէսզի կատաղած շները չկծեն: Ուրբաժ  
օրը կոչւում է «մկան կիրակի», որը նոյնպէս  
տօնում են, որպէսզի մկներն ամանների մէջ  
չընկնեն ու կեղտոտեն: Նաբաժ օրը կոչւում  
է «կէրծակի (կալծակի) կիրակի». տօնում են,  
որ կալծակից չզարնեն:

Մեծ պասի միջինքը կոչւում է «գ'ա՛շ'շ'տ»:  
Այդ օրւա նախընթաց երեկոյին թխում են  
միջուկով մեծ հաց (կլօճ), մէջը դնելով մի  
փող, թխելուց կարտում ու բաժանում են,  
ում բաժնի մէջ դուրս գա փողը, նա բախ-  
տաւոր է, տան «գա՛լ'վա՛թ»-ը նրանն է. եթէ  
կտրելիս դանակը փողի վրայով անցաւ, ու-  
րեմն բախտը կտրողինն է: Միջինքին նորա-  
պսակները խնջոյք են սարքում (եթէ եղա-  
նակը լաւ է՝ այդիներում, դաշտում) և հրա-  
ւիրում բարեկամներին:

**Ճ Ա. Կ Ա Ծ Ա. Բ Դ** (Ճառ զա՛ր' բա՛ր')

Եկեղեցում «օրհնած» ճիւղերից վերցնում,  
տուն են տանում, չորանալուց գցում են տա-  
քացող կաթի տակ, այրում, որպէսզի կաթը

«բա՛րա՛ք՝ ք'աթով» լինի. այլրւած ճիւղի մոխիրը լցնում են իբր լուսնի նսրից հիւանդ մանկան բերանը, որպէսզի առողջանա:

### ԶԱՐՁԱՐՄԱՆԻՒԹԻ ԾԱԲԱԹ

Որերն առանձին անուն չունեն, մինչև անգամ «չիք-չորեքշաբթի» և «ութի-ուրբաթ» անունները, որը կարծեմ ընդհանուր են հայութեան մէջ, այստեղ չկան:

Ուրբաթ օրը «խառնաս-խատիկ» (խառնած հատիկ, հունդերի խառնուրդից կերակուր) են պատրաստում և ուտում կամ աղքատներին բաժանում: Այդ օրը «կարկատ» չէ կարելի չըթել. չըթողը Քրիստոսի ոսկորներն է չըթում, ուրեմն հըետ է. Գիշերը դարբինները սալին խփում են: Նախընթաց երեկոլին գըլուխներն օծում են «օրհնած» իւղով, որի մի մասը գցում են իւղի օշնակի մէջ, որպէսզի իւղը բա՛րա՛ք՝ ք'աթով լինի: Այդ երեկո ճրադ չեն վառում:

### Զ Ա. 8 Ի Կ

Չւերը ներկում են, երեմն նախշում ներկերով: Հասարակութիւնից ժողոված փողով առած մատաղները մորթում ու բաժանում են: Կիրակի օրը գաթա կամ կաթնահունց են թիւում և միւս օրը մեռելոցին մի մասն աղ-

քատներին բաժանում:

Զատկից յետո երկրորդ կիրակին կոչում է «կանաչ», իսկ երրորդը «կարմիր». այդ օրերը ձւերը ներկում են անունների համաձայն—կանաչ կամ կարմիր:

### ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (կաթով)

Համբարձումը կոչում է «կաթնով», որով-հետև այդ օրը կաթնապուր են եփում:

Չորեքշաբթի երեկոյեան դռները դրսից զարդարում են ճիւղերով. երկու փշատի ցից են խփում շեմքի երկու կողմում, մի ցցի ծալրից մինչև միւսի ծալրը մի թել կապում, տակը կորեկ շաղ տալիս և կովին թելի վրայով անցկացնում, որպէսզի կաթը շատանա: Միւս օրը հինգշաբթի դռան վրալի ճիւղերը վերցնում, տալիս են կովին ուտելու նոյն նպատակով. իսկ ցցերը մնում են եօթն օր:

Չորեքշաբթի լոյս հինգշաբթի գիշերը ծառերը խոնարհում, ծունը են դնում: Այդ գիշեր ով կարողանա մինչև լոյս տրթուն կանգնել կտրին և աչքերն անթարթ լառել երկնքին, նա կտեսնի «Լէլլի և Մար'ջան» աստղերին թռչելիս և ինչ որ խնդրի նրանցից, կստանա: Մի պառաւ սխալմամբ խնդրել է իր թանը ջուր դարձնել՝ փոխանակ հակառակը խնդրե-

լու, և նրա թանը ջուր է դարձել, Մէկն էլ խնդրել է քար դարձնել իրան և քար է դարձել։ Մի պարտիզայան խնդրել է իր բահը թի դարձնել, որ և՛ կատարւել է։

Համբարձման օրն աղջիկները «ջուջունա՛ էն խաղալըի» («ջան-գուլում» են խաղում, վիճակ են հանում)։ Չորեքշաբթի երեկո գնում են հանդից եկող նախրի դէմ, նախրի առաջից բերանով եօթը փոքրիկ քար են վերցնում լուռումունջ, ածում կանաչ ամանի (կանանչիգ') մէջ, ուր քիչ ջուր ածած են լինում նախօրօք, բերանը կապում, տանում տուն, այնտեղ բերանը բանալով՝ դնում կտրին, որպէսզի քարերը գիշերը կարողանան տեսնել «Լէլի և Մա՛ր' ջա՞ն» աստղերին. առաւօտը—հինգշաբթի—ամանի բերանի շուրջը ծաղկով զարդարում են, ամանը ձեռներում խաղացընում ու «ջան-գուլում» ասում (տես «Վիճակի երգեր»). մի ուրիշ ամանում հաւաքում են աղջիկներից զանտղան մանրիկ իրեղէններ, գլխաւորապէս մատանիներ. մի փոքր աղջկանստեցնում են, գլխին քող գցում և դարձընում «խարս» (հարս). այդ հարսը՝ ամենմի «ջան-գուլում» ասելիս՝ հանում է ամանից մի իր, և ասւած «ջան-գուլում»-ը վերաբերում է հանւած իրի տիրոջը։

**Վ.Ա.Ր Կ.Ս.Ա.Ռ.Ռ.** (վա՛ր' քւն' ր)

Զուը են սրսկում իբար վրա և նոլնալէս  
վիճակ են հանում, ինչպէս համբարձմանը:

**Ե.Ս.Ի.Ա.Ս.Ա.Ռ.Դ.** (Խլվլիկ')

«Խլվլիկ»-ի տօնը կատարում են նաւասարդին. Խլվլիկ'ը բրդոտ գլխարկով սատանա է. Նա բարեկամի կերպարանքով գալիս, խարում է մարդկանց և իր հետ տանելով՝ ժայռից ցած է գլորում: Ալդ գիշերը գլուխ չեն լւանալ, գիւղից դուրս չեն գալ, Խլվլիկ'ը կտանէ:

Երեխաները երեկոյեան թելից գուլպա են կապում, երդիքներից քաշ անում և երդում.

Ակլու մարեմ, մարեմ, մարեմ,

Չեր տղալի սօլը կարեմ,

Փշատ տւէլ—ատամ շարեմ,

Չամիչ տւէլ—ատամ սըեմ,

Ընկ' օ'զ տւէլ—ճակատ կորրեմ:

Տնից միրգ են ածում գուլպալի մէջ, և երեխաներն անցնում են հետեւեալ երդիքը:

Ալդ օրելը ծառաները կամ նորից են վարձում, կամ հեռանում են իրանց տէրերից. մի խօսքով՝ ալդ օրը ծառաների համար նոր տարի է:



291

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մի այնպիսի տեղ, ինչպիսին Սալմաստնէ, ուր ժողովուրդը շնորհիւ ձախող հանգամանքների զբաղւած է միմիայն իր անձը պահպանելու հոգսով, բանաւոր գրականութիւնը չէ կարող զարգացած լինել. ամբողջ գաւառում չէ լուսում ոչ մի երգ տեղական բարբառով, մի «օրօր», մի «հօրօվել», տեղական դրոշմ կը ող նոյնիսկ մի հէքիաթ. ոչ մի աշուղ անգամ չկա, աւանդութիւններից իսկ զուրկ են համարեած. ժողովուրդը կարծես հոգեսոր կեանք չունի, ոչ երեակալութիւն, ոչ լուգումներ, ոչ բարձր տեսակի գւարճութիւններ. սալմաստեցու դէմքին գրոշմւած է միմիայն հոգսի կնիքը, զւարճանալու համար չէ էլ մտածում զարերով ճնշւած և «փորձւած» սալմաստեցի հայր...

Բանաւոր գրականութեան եղած տեսակներից՝ որքան կարողացանք գրի առնել՝ գնում ենք ստորեւում, այն էլ բերում ենք դիմաւորապէս Սալմաստի բարբառի վրա գաղափար տալու նպատակով:

Վ Ի Ճ Ա Կ Ի Ե Ր Գ Ե Ր <sup>1)</sup>)

Լուսնայն ի ամրի տակին,  
ես եմ քս կինդի տակին.  
ես քեզ վա՛րտեղ սիրացի –  
Մխակի ք'օլի տակին:

Առւի վը՛բա՛ն՝ սաց պիտի,  
իմ օ՛ր'գա՛զին զազ պիտի.  
ես ի՞նչ անեմ թուլունդին,  
իմ եալը շահրապ <sup>4)</sup> պիտի:

Թ Ա Ր Գ Ե Ր Ե Ն

Առւտա՞ն'բա՛ր՝ սուգա սա՛նի,  
Սախլասըն խուզա սա՛նի.  
Հուն'քի ագըմ ըսըսվա,  
Ալդա՛ն՝ գոյմարամ սա՛նի:

Թա՛ւշ'ըկի իշը՞ն'գա՛ բաղար,  
իշը՞ն'գա՛ բիր զըզ գ'ա՛զա՛ր'.  
Ալք'ն'գա՛ դիմիթ-գա՛լ'ա՛մ',  
Օլքըրը՛ դա՛ր'զը՛ եաղար:

Հայը շայդան իշը՞ն'գա՛,  
Աա՛ս' վէրդի բազ իշը՞ն'գա՛,  
Թարի մուրադըն վէրսըն  
Բու զ'ա՛լա՛ն' ալ իշը՞ն'գա՛:

Նստած տեղըս Սալմաստ է,  
Մատանիթս <sup>2)</sup> տըմաստ ի.  
Ուզողներըս իկ'ա՛ս' էն,  
Վը՛սկի ք'ա՛մա՛ր' պատրաստ <sup>3)</sup> ի:

Առւի վը՛բա՛ն՝ ամրիր ի,  
Վը՛սկի թփեր բա՞ն'դիր ի.  
Մէ տեղ տւէլ, ես ընսնեմ,  
իմ զարիր ախազօք տօնիմ :

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Քո զամբախը ջրումն է,  
Աստած պահի քեզ.  
Որ անունս խայտառակւած է,  
Հեռից շեմ թողնիլ քեզ:

Թաւրիզի միջում շուկա,  
Մէջը մի աղջիկ ման կըտ.  
Զեռին թանաքաման-դրիշ,  
Նստած վիշտը կըրէ:

Թէլը թէլամանի մէջ,  
Հայն տւաւ այզու մէջ.  
Աստած մուրազդ տա  
Այս եկող ամսի մէջ:

<sup>1)</sup> Ինչպէս երևում է, այս միքանի կտորներն էլ, թէև տեղական բարբառով, բայց վերցրւած են ուղղակի Երևանի նահանգում երգւող երգերից:

<sup>2)</sup> Այս բառը գործ է ածւած ոչ սալմաստի բարբառով. Սալմաստում ասում են «մանիկ»:

<sup>3)</sup> Այս բառը ևս միայն այստեղ է գործածւած յանդի համար. Սալմաստում ասում են «հա՛զըր»:

<sup>4)</sup> Շահ-Արքասի անունից է ծագում. ամենմի մեծ, քաջ մարդի անւանում են «շահրապ»:

իք'ը'մըզ, հա՛, իք'ը'մըզ,  
Քոււլ'ա՛րաթըն իւք'ը'մըզ.  
Մա՛հ'մա՛ր'դ'զո՛շա՛յ, գոււլ'եաստղ  
Սալախ, եաթախ իք'ը'մըզ:      || Երկուսս, հա՛, երկուսս,  
Ոսկեթել բեռներս.  
Թաւիշ ներքնարկ, ծաղիկ բարձ  
Գցենք, քնենք երկուսս:

## Հ Ե Գ Ի Ա Թ Ն Ե Ր

### ԽՈՐԹ ՄԱՅՐԵ

Կլի չի ըլի մէ մարթ ինա՞ն' մէ կնիկ',  
Կունեն մէ ախճիկ', մէ լաճ: Ետ մարթու կը-  
նիկ'ը կմեռնի, կեթա մէ թա՛զա՛ կնիկ' կպե-  
րի: Տա՛ր' կնիկ'ը դաստէն կխիւանդանա, ուր  
էրկան կասի.

— Ի՞մ սիրտս սիրտ ի ուզելլիի:

Մարթը ինչի սիրտ կպերի, կնիկ'ը չի ու-  
զի, կասի.

— Քո լաճու սիրտը' կուզեմ:

Ետ խեղճ մարթը' էնքան կասի.

— Ի՞շթա՛ր'զ' մորթեմ, ախ իմ հալալ տղաս ի:  
Կնիկ'ը կասի.

— Աղեկ' ի:

Ետ կնիկ'ը կպերի տա՛ն'ց (քրոչ ինա՞ն' ախ-  
պօրը') տէմը պլնձէ փլաւ կլցի, տա՛ն'ք կզար-  
մանան, որ խորթ մէրը' ուրենցը' պլնձէ փը-  
լաւ ի տալլի. տա՛ն'ք կուտեն փլաւը: Մէ ճըն-  
ջուղ կ'կ'ա, ծառի վ'րա՞ն' կնստի, հա՛ կասի.

— Ճիւ, ճիւ, մէ փշուր խաց տւէլ, եւ

ծեզի մէ պա՛րի խաբար ասեմ:

Ս.խալէրը՝ մէ ք'թէլ պըինձ կլցի ճնջղան  
տէմ, ճնջուղ կվերցի, կեթա, մէ տ'ը՛ր'  
էլ կ'կ'ա, էլ էնէնց կասի: Ս.խալէրը՝ մէ ք'ը-  
թէլ էլ պըինձ կլցի տէմը', ճնջուղը' կվերցի,  
կեթա, մէ տ'ը՛ր' էլ կ'կ'ա, էլ էնէնց կա-  
սի: Ս.խալէրն էս տ'ը՛ր'ը' զատ չի թա՛լի տէ-  
մը', տա՛ր' քուրը' խասկցող կլի, մէ տը՛ր'  
էլ պըինձ կթա՛լի տէմը'. ճնջուղը' կասի.

— Ծեր խէր մէր տունը տա՛նա՛կ կարեն,  
որ ծերը՝ սպանեն. Ելէք', փախէք:

Տա՛նք կլեն, հա կեթան: Ս.խալէրը' շատ  
ծարաւ կլի. քուրը' կասի.

— Կ'առու ոտի տեղ մի խմի, կլես կ'առ.  
կէլուն մի խմի, կլես կէլ:

Ս.խալէրը' կ'առու ոտի տեղի ճուրը' կխմի,  
կլի կ'առ, կ'նի իր քրոչ խտեէն, հա կեթա:

Մէ թաքաւո՛րի լաճ կտսնի էտ ախճկան,  
կանի ուրը' կնիկ':

Էտ խորթ մէրն էլ կ'նի ախշարք, շուռ  
կ'կ'ա, որ տա՛նցը' գ'նի. կ'կ'ա թաքաւո՛րի  
պալտաը', թաքաւո՛րի լաճուն կասի.

— Ես իմ ախճիդ' տանես էմ, տւէլ, թո՛  
տանեմ, էլ պերեմ:

Էտ ախճիդ' կասի.

— Մի տու տանի, իմ կ'լոկ կթոչեցուցի:

Թաքաւո՞րի լաճ ախճիդ՝ կտտ, կտանի  
խորթ մէրը՝, կտանէ, կթա՛լի ճուրը՝, ուր սե  
ախճիդ՝ կպերի տեղը՝:

Թաքաւո՞րի լաճ կասի ախճկան.

— Ընչի էտէնց սեցիր էս:  
Կասի.

— Ե՞նքան արևի տէմ էմ մնացե՞ւ:  
Ետ ախճիդ՝ մհում կպռնի, որ էտ կ'առ  
մորթի:

Կ'առու քուրը՝ ճ'րէն կասի ժամխարին,  
ժամխար կեթա ժամ, կծէնի.

— Վ'ավ որ ուր ասւած կսիրի,

Թաքաւո՞րի լաճուն կասի,

Իմ կ'առնիկ ախպօր չղինի:

Ետ ծէնը՝ կ'նի թաքաւո՞րի լաճու անգ'տ'-  
ճը՝, կեթա, ուր կնիկ' կխանի ճ'րէն, կպերի,  
խորթ մօրն ինա՞ն' ուր ախճկան կկապի ծի-  
ան պոչին, տա՞ն'ցը՝ կանեն կտո՞ր-կտո՞ր:

Երգ'ն'քէն իրեք' խնձո՞ր էչաւ. մէկ'ը՝ հա-  
ք'աթ ասող կրպուշին, էրկուսն էլ կ'ըող  
վարժապետին. մէն էլ չկա, որ տանք անգ'տ'  
տրողին:

### Ա. Ա. Լ. Ս Պ. Ա. Ն.

Կլի չի ըլի մէ մարթ, մէ կնիկ'. տա՞ն'ցը՝  
տղա չի ըլի. տըկեցքերէն կխառցուցէն,

տը՝ կեցքերը՝ կասեն.

— Իրկուն բա՛ղը ցանի՛ պակտ, առատունը՝ ըմեն կլեն տղա:

Ետ կնիկ'ն էտէնց ա՛րաց, առատուն իշկաց, ըմեն էլած ի տղա, մէլն տսելը՝ «մա՛մա՛, քախծած էմ», մէլն տսելը՝ «մա՛մա՛, ծարաւ էմ», մէկէլը՝ «մա՛մա՛, մսես էմ...» Մէրն ըմենին էլ կաւլի, կլցի թոնդիրը՝ իտև մէրը՝ կասի.

— Մէկ'ը՝ չժողիմ, խօրը՝ խաց տանէլ:

Ակէն մէկ'ը՝ կասի.

— Թո՛ղ ես տանեմ, մա՛մա՛:

Մէրը՝ տա՛ր՝ անունը՝ կտ'նի «ճոտօ-ըալա»։ մէրը՝ կասի.

— Փշատի տակէն չընսնես, դա՛ղ մէ դեւ կա, քեզի կուտի:

Տղան կեթա, կ'լի էն փշատի վ'րա՛ն'. մէ ծծում խեծնող պառաւ կ'կ'ա, կասի.

— Մէ փշատ թա՛լ', ուտեմ:

Ետ մէ փշատ կթա՛լի:

— Տա՛րով չկշտացամ, ճո՛ղ կզի՛, — կասի:

Տղան ճո՛ղը՝ կկզի. էտ տղալին կպոնի, կը-թա՛լի ջւալի մէչ, կտանի կտ'նի ճանբախ, որ դինջանա. էտ տղան կ'լի, կփախնի, կ'կ'ա, փշատի ծառին կնստի:

Պառաւ կտանի, ուր ախճկան կասի.

— Տուռը պա՛ց՝, խո՛ղածին էմ պերե՛:  
Սխճիգ՝ տուռ կոլա՛ցի, կիշկա, ջւալի մէջ  
պա՛ն՝ չկա:

Պառաւն իրեք՝ տ՛ը՛ր՝ էտէնց տղալին կպե-  
րի, տղան կփախնի. մէ տ՛ը՛ր՝ էլ տղալին կը-  
պերի տուն, կպերեն, որ խաշեն տղալին, դա-  
զանը՝ ճուլը՝ կլցեն, կըեռցուցեն, որ խաշեն,  
ուտեն, տղան կժռնի մէ պանցը թախչիկի  
վրա՛: Պառաւը՝ դա՛ր՝ կասի.

— Դո՞ր էլար, ես էլ ըլեմ:

Տղան կասի.

— Ոտս տ՛րիմ սանդեռքի վրա՛, էլամ:  
Պառաւը՝ կանի, որ ըլի, էնի կետին, կը-  
մեռնի: Տղան դա՛ր՝ ախճկան էլ կսպանի, տա՛ն-  
ցը՝ կխաշի, տա՛ն՝ ց միս կուտի, կասի.

— Անո՛շ ուտեմ տատկէ միս.

Անո՛շ ուտեմ մամկէ միս:

### Թ. Մ Ա Խ Ա Հ Ա Ր Ը

Կլի չի ըլի մէ մարթ, մէ կնիկ՝ էտ մար-  
թը՝ դհօլչի կլէր. մէ տ՛ը՛ր՝ դա՛ր՝ կնիկ՝ էն  
մարթուն կասի.

— Ե՛լ, քելի, կն խառնիսի զուռնա կա,  
դհօլչի չկա. Ե՛լ, տու էլ քո դհօլտ տա՛ր, թը-  
փի, փող առ:

Էտ էլ կ'լի, դհօլ՝ կվերցի, կեժա. էնքան

կեթա, կիշկա՝ մարթ չկա: Մութ կ'նի, կը-  
խասնի մէ մարաքի. կեթա դա՛ղ, որ քնի.  
կնստի, կտսնի մէ կնիկ', մէ մարթ վսկի, ար-  
ծաթ կալերեն, էնտեղ կտ'նեն, որ առատու-  
նը՝ վերցեն, տանեն: Էտ մառն էլ ուր դհօլ'  
կթփի, տա՛ն ք էլ ախու կփախնեն: Էտ ա-  
ռատունը՝ կլի, կվերցի էտ փողեր, կլի, կե-  
թա: Կեթա, կխասնի մէ չերի մէչ. կտսնի մէ  
առչ: Էտ մառն էտ առչն ի վախենալըի,  
էտ առչն էլ էտ մարթէն ի վախենալըի. Էտ  
էլի, ուր դհօլ' կթփի, կթփի, էտ առչ կ'լի,  
կխաղա: Մէ մարթ քուչալէն կընսնի, իշկա՝  
էտ լէրէն մէ դհօլի ծէն ի իկ'ա՛լի. Էտ  
էլ կմնի էտ լէրի մէչ, որ իշկա, էտ առչ կ'լի,  
կփախնի: Էտ մարթ կեթա, աղալին կասի.

—Ես մէ առչ պռնիր էմ էր, ընձի խմա-  
խաղուցես էմ էր, էտ մառն էկաւ, փախցուց:

Էտ աղան էլ կպռնի, էտ առչ փախցուցո-  
ղի մնէն տաս պեռ փառչա կառնի, կտա էտ  
առչի տիրոչ, էտ էլ կ'լի, ուրախուրախ կե-  
թա տուն, ստեփ էտ, ուր կնիկ' հա կուտեն,  
հա կուտեն:

### ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԻԼԻ

Կլի զի իրեք' ախպէր: Տա՛ն' ց հա՛ր' ամէկ'ը՝  
մէ պա՛ն' ի ասելըի, մէն ասելըի.

— Ես աստծէ մէկ՝ սուրու սիմճար կուզեմ  
մէ ամարաթի մէչ:

Մէկ՝ հրիշտակ կերևա, կասի.

— Ուզածտ տւիմ:

Առատունը՝ կ'լի, կիշկա՝ հմեն էլ կլի:  
Են մէկէլն էլ աստծէն մէ էքի կուզի, ը-  
մեն եմիշներն էլ մէչն ըլի: Էլ են հրիշտակ  
կերևա, կասի.

— Ուզածտ տւիմ:

Առատունը՝ կ'լի, կիշկա՝ հմեն էլ կլի:  
Են մէկէլն էլ կեթա, կնստի մէ ճ'րի երգ,  
կնստի, կասի.

— Ես աստծէն մէ ամարաթ կուզեմ:

Ետ էլ կլի:

Ստեփ կասի.

— Ես մենակ էտ յէրի մէչ ընչի էմ նստե,  
մէ ուլուշաղ չունեմ:

Ենտեղէն էլ մէ խարս կընցուցեն. Էտ մարթ  
կեթա, խարս տարողին կասի.

— Ետ խարսն տո՛ւ ընձի:

— Մենք կ'նացիր էնք, պերիր էնք, — Են  
մառն էլ կասի:

Ստեփ էն կասի.

— Ծիան կ'լոխ թող, որիս իտևէն էթա,  
դաշըն ի խարս:

Են ծին չի էթա էն խարս տարողի իտևէն:

Ստեփի էն խարսն կտանեն տմարաթ, խարս  
տարող տա՛ր՝ տակ՝ կեթա:

Էտ հրիշտակը՝ ջնքը ու կլի. էն ոխճրի տի-  
բոչ կասի.

—Ես եարա ունեմ, քելի, քո ոխճարէն մէկ՝  
աղեկը՝ մորթի, նրա էրունէն ալե՛, քսեմ իմ  
եարաներուն:

Էտ մառն էլ կեթա, մէ լաղար ոխճար կը-  
պերի, կմորթի, էրունը՝ կտա քասըին: Էտ  
մառն տուատունը՝ կ'լի, կիշկա, ոխճրքեր հը-  
մեն էլ տառցե քար:

Հրիշտակը՝ կեթա, ամարաթի տիրոչ կասի.

—Էտ խասուն խաւողքերէն տո՛ւ ընձի:

Էտ կեթա, էն քալ խաւողքերէն կպերի, էտ  
էլ տուատունը՝ կ'լի, կիշկա՝ հմեն խաւողքերն  
էլ էլե քար:

Հրիշտակը՝ կեթա, կխասնի էն մէկէլ մար-  
թուն: Էն մառն էլ աւչի էր, կ'նա՛ցիր էր  
մէշան. էն քասը մարթ (Հրիշտակ) կասի էն  
մարթու կնդան.

—Թա՛ղօ՛, քո լաճուտ վիզ կուի, էն է-  
րունէն քսեմ իմ եարաներուն:

Էտ կնիկ' կ'լի, ուր տղայի վիզ կկուի, է-  
րունը՝ կտա էտ քասըին. Էտ կքսի ուր եա-  
րաներուն, կսաղանա. Էն տղայի կլո՛խ զի՞նք'  
կվերցի, կտ'նի տղայի վրա՛ն', էտ տղան կը-

սաղանա։ Ստեփի հրիշտակ իշկաց, որ էտ մարթ  
աղել մարթ ի, որ ուր կնդան իշթա՛ր' զ' ի  
ուսուցե, ասաց։

— Մարթ կնիկ' աղեկ' ապրէք' ընչու յա-  
ւիդեան։ Կասի էտ մարթ ու կխամփարցւի։

### ՍՐԱՄԻՑ ՏՎԱՆ

Կար չկար մէ մարթ, մէ կնիկ' կար. տա՛ն'ց  
մէ տղա կար։ Մարթը սարակ' պռնեց, կ'նա-  
ցին արտը՛ քաղեն։ Սարալքերի խացն ուշա-  
ցաւ, սարալքեր էն տղալին ըղբկին տուն  
խաց պերի։ Էտ էկաւ տուն, խօրը՝ հռսեցուց,  
խէրն անթրոց թռնդրէն խանեց, թա՛լեց դա՛ր'  
իտեւ. տղան անթրոց տարաւ, սարալքերին ա-  
սաց։

— Դա՛դա՛ն' ասելըի՝ արտն ա՛նեն կարկա-  
ռուդ, ուտեն։

Տա՛ն'ք էլ ա՛րին։ Խէրն էկաւ, տսաւ, ասաց։

— Էտ ինչ էք ա՛րե։

Սարալքերն ասին.

— Ախ տու անթրոց տւիր տղալին, պերեց։  
Խէր ջորէն չաղուն խանեց, թա՛լեց տղալի  
իտեւէն։ Տղան չաղուն տարաւ տուն, մօրն  
ասաց։

— Դա՛դա՛ն' ասելըի, թո՛սւ եղ մորթի։

Տղան մորթեց եղ խէրն եկաւ, ասաց կնդան։

— Ետ ի՞նչ ես ա՛րե:

— Այս տու շաղուն տւիր, լաճտ պերեց:  
Խէրն ուը ք'դակ՝ թա՛լեց տղալի խաևէն.  
տղան ք'դակը՝ տարաւ քրոչ տուն:

— Դա՛դա՞ն մեռե, — ասաց, — եա՛ր' թա՞ն'ք':  
Քուրը՝ պագրաստութո՞ն տսաւ, խէծաւ էշ,  
էկաւ. խասան կէս ճանբախ, քրոչ ասաց.

— Տու քելի, ես կ'կ'ամ:  
Կ'նա՛ց, դա՛լեաղ էլաւ մէ քարի, իշկաց՝ մէ  
ծիաւոր ի իկ'ա՛լի, ասաց էն ծիաւորին.

— Եա՛ր, էս քար պոնի, մի թող իկ'տ, ես  
էթամ, մէ պծառ ճուրը՝ խմեմ:

— Ծիաւորն էկաւ, քարը պոնեց: Տղան ասաց.  
— Պինդ պոնի, կ'կ'ա վ'րա՛տ':

Էտ տղան խէծաւ ծին, կ'նա՛ց, խասաւ մէ  
չօբանի, տսաւ՝ մրուս չկա չօբանին, ասաց.

— Ի՞նչ կտաս, ես քեզի ըեղմրուս շինեմ:  
Չօբանն ասաց.

— Մէ էծ կտամ:

Մէ փոս փորեց, չօբանին մտուց մէչ, մէ  
գ'ա՛զ' առեց, էկաւ, զա՛ր'կեց չօբանի իրեսին,  
էնէնց ծակծկեց, որ հմեն էլաւ էրուն. ջան-  
դակ՝ խորեց խողի մէչ, վերցեց ոխճրքեր, կ'ը-  
նա՛ց տուն, ասաց.

— Դա՛դա՛, էտ ոխճարը քո ցորոնի տեղ,  
ծին էլ եղան տեղ:

Են ծիաւորն էլաւ քարի տակէն, տսաւ՝  
քարը չիկ'ա՛լի, էկաւ, որ էտ տղային գ'նի,  
տսաւ՝ մէ մարթ բոռալլի. էտ չօբանն էր.  
ծիաւորն ասաց.

— Ընչի՞ մտիր էզ էտ փո՞սը:

Չոբանն ասաց.

— Մէ տղա ա՛րաց, սիճրքերս տարաւ:

Ծիաւոր խանեց չօբանին, էլան, էկան  
թեխ տղան, էկան տղալի տուն, ասին.

— Մեր մալեր տու:

Տղան չալ ո՛րեց, խման, իտեփ ասաց.

— Քիչ խմէք, որ չշուէլ ծեր տակ. խէ շը-  
ռէլ ծեր տակ, իմ դա՛դա՛ն՝ կմեռնի:

Քնան:

Տղան էլաւ կ'շերը, հա՛ր'-մէկ'ի տակ մէ ըս-  
տքան ճուրը՝ լցեց: Կ'շեր էտ մտոները՝ զառ-  
նան, ծեռ տւին ուրենց տակ, իշկացին, որ  
շոփիր էն, էլան, փախան: Դամբախէն մէ  
մտոն ասաց ինգերին.

— Մարթ շոփ ուր տակ, մարթ կմեռնի:

Տառցան էկան: Էն մէկ' ուր կ'լոխ չառ-  
չվալէն մտուց, տղան ասաց.

— Իմ խէր սպանիք', խէրիք' չի, էլեք, էկէ:

Էն չօբանը՝ կ'լոխ իրար տւեց, որ խանի  
չառչվալէն, չառչվան էլաւ: Էն մէկէլ ինգե-  
րըն ասաց.

— Նաշը՝ պերին:

Թողին, փախան:

**ԽՈՐԱԳԻՑ ՄԱՐԴԵ**

Կլի չի, մէ մարթ կլի, մէ կնիկ' կլի, տան'-  
ցը՝ մէ էծ կլի: Մէկ' օր կնիկ' կասի մարթուն.  
— Տար, էծ ծախի՛, համ էծ պե, համ փող:  
Էտ մարթը՝ կվերցի, կ'կ'տ չօ'րա՛գ' չու կուշտ,  
կասի.

— Էծ տամ քեզի, մէ իմ փորով խաց տու,  
ուտեմ:

Չօ'րա՛գ' չին կասի.

— Աղեկ' :

Խաց կուտի, կպրծնի էտ մարթ, էծու ան-  
դէն կք'ա՛շի թեխ տուս. չօ'րա՛գ' չին կասի.

— Էտ ինչ էս անելրի, ախ էծը՝ իմն իւ  
էծու տէր կասի.

— Տանեմ, էծ ծախեմ, պերեմ, քո խացի  
կին տամ:

Կեթա քարաբչու տուն, կասի.

— Էծ տամ քեզի, մէ փորովս քարաբ  
ու-  
տեմ:

Քարաբչին կասի.

— Աղեկ' :

Քարաբ կուտի, կպրծնի, էծու անդ' ձէն կը-  
ք'ա՛շի թեխ տուս. քարաբչին կասի.

— Ի՞ւր՝ էս տանելլի էծը՛, ախ իմն ի:

— Էծ տանեմ, ծախեմ, պերեմ, քո փող  
տամ, — կասի էծու տէր, տէն կ'լի, կեթա  
մէլխանաչու տուն, էլ էնէնց կանի: Մութը՛  
կ'նի, կեթա բազրգ'ա՛նի տուն, փթրի շարի  
մէջ կմնա. կիշկա՝ մէ կնիկ' էթալլի էն կ'ը-  
լոխ, իկ'ա՛լի էս կ'լոխ. տուռ թփին, չօ՛րա՛գ՝  
չին էկաւ, կ'նա՛ց օթաղ. էլ տուռ թփին, քա-  
րաբչին էկաւ. էլ տուռ թփին, մէլխանաչին  
էկաւ: Մէ սհաթ կմնա. քաբարչին, մէլխա-  
խանաչին ինա՛ն՝ չօ՛րա՛գ՝ չին էկան, որ էթան,  
իրեքին էլ կանչեց, ասաց.

— Եա՛րէք՛, ծեր փողեր տամ:

Մէ քիչ մնաց, բազրգ'ա՛ն՝ էկաւ, կ'նա՛ց  
օթաղ: էծու տէրն ասաց չօ՛րա՛գ՝ չուն.

— Քանի՞ թումա՞ն՝ փող կտաս, որ բազրը-  
գ'ա՛նին չասեմ, թէ տու կ'նա՛ցիր էս էր դա՛ր՝  
կնգան կուշտ:

— Խինդ՝ թումա՞ն՝ կտամ, — ասաց չօ՛րա՛գ՝  
չին:

էծու տէրն էծու անգ'ա՛ճ օլլեց, էծ բո-  
ռաց: Բազրգ'ա՛ն՝ ասաց.

— Էտ ի՞նչ էծու ծէն ի:

Կնիկ'ն ասաց.

— Քուչալէն ընցիր էս, էծ ի պատահե քե-  
զի, մկա էն ծէն ինգե անգ'ա՛ճտ:

— Տու իշքան կտաս, մէլխանաչի, — ասաց  
Էծու տէր:

— Իրեք՝ թումա՞ն, — ասաց:

— Բըռու, — բոռբոռաց էծ:

Բազրդ'ա՞ն ասաց.

— Էծ կա պակ:

Կնիյն ասաց.

— Վնի, էծու խիալին էս:

— Տու իշքան կտաս, քաբաբչի:

— Մէկ՝ թումա՞ն, — ասաց:

Էծ բոռբոռաց: Բազրդ'ա՞նը՝ վեր թուաւ  
տեղէն, էկաւ պակ: Էծու տէրն ասաց.

— Էտ իրեք՝ քո կնգա սիրոքերն էն:

Բազրդ'ա՞նն սպանեց կնգան, չօ'րա՛գ՝ չուն,  
քաբաբչուն ինա՞ն՝ մէլխանաչուն, էծու տի-  
րոչ փող տւեց, էծու տէրն էկաւ տուն:

### ՓԱՎՐԻՆ ԳՈՂԸ

Կլի չլի էրկու ախալէր, էտ էրկուն էլ  
կ'ող կլեն, հմեն օր կեթան, թաքաւո՛րի խը-  
զինա՞ն կկ'ողնան. Էնքան թաքաւո՛ր դ'արաւուլ  
կտ'նի, չի նա՛ պռնել, անձարութո՞նէն դըռ  
կլցի. մէ ախալէրը՝ կ'նի մէջ, կիսեխտի, ուր  
ախալօր կասի.

— Իմ կ'լոխ կոի, տար, որ մնտ, տռատու-  
նը՝ կճաշնան:

Ախալէր դա՛ր՝ կ'լոխ կկոի, կտանի:  
Տա՛րը՝ մէ տղա կլի. կակօն կասի ուր ախ-  
պօր լաճուն.

— Ի՞շ կուզես ըլես:

Կասի.

— Իմ խէրն ի՞նչ է լե, ես էլ էն կլեմ:  
Կասի.

— Տու կ'ողըթո՞ն անել գինա՞ս':  
Կասի.

— Կուսնեմ:

Կ'լի, մէ դշան պո՞նէն դշան փառն էնէնց  
կք'ա՛շի, որ դուշ խաբար չի ըլի. Ստեփ կե-  
թան, որ մեռելը՝ պերեն. մէ էշ կտանեն կը-  
շերով, դարաւուլքերի խետը՝ կճանաշւեն, կա-  
սեն.

— Եա՛րէ, նստէք':

Տա՞ն'ք չեն նստե: Կասեն.

— Ծեր մեռել մեր էշուն կուտի:

Տա՞ն'ցը՝ կխմցուցեն. դարաւուլքեր կքնեն,  
տա՞ն'ք մեռելին կպառնան էշուն, էշ կվերցի,  
կ'կ'ա տուն: Տա՞ն'ք կ'լեն, դարաւուլքերուն  
կասեն.

— Ծեր մեռել մեր էշուն կերիր ի:

Տա՞ն'ք էլ կաւատան, մէ պարկ վոկի կտան  
տա՞ն'ց, տա՞ն'ք կ'կ'ան տուն:

Էտ տղալի կակօն կմեռնի. զինք՝ շտու կ'ո-

Պլթո՞ն կանի խզինա՛լէն։ Տը՛կեց թաքաւո՛ր  
էտ թաքաւո՛րի վ'րա՞ն՝ կծղղա, կասի։

— Ի՞շմա՛ր' զ թաքաւո՛ր էս, որ չես նա՛ մէ  
կ'ողի պռնե։

Թաքաւո՛րը՝ ջառ կտա կանչել.

— Ետ կ'ող վ'աւ ի, ես դա՛րը՝ խալաթ կը-  
տամ։

Ետ տղան կասի.

— Ես էմ։

Թաքաւո՛րը՝ կզարմանա տա՛ր՝ փստկութնի  
վ'րա՞ն՝, տա՛ր՝ խալաթ կտա. թաքաւո՛րը՝ կասի։

— Գինա՞ս՝ էն թաքաւո՛րի խզինա՛լէն կ'ող-  
նալ։

Տղան կասի.

— Կուզես ուրը՝ կ'ողնամ, պերեմ։ Երկու  
մարթ տու ընձի խետ, ինա՞ն՝ մէ ծի, մէ  
թաբութ՝ զանգլալքերի խետ։

Ետ զանգլալքեր կկախի, կեթա մէկէլ թա-  
քաւո՛րի տուն, ուրը՝ թափ կտա։

Թաքաւո՛ր կասի.

— Տու վ'աւ էս։

Կասի.

— Ես Կապրէ հրիշտակն էմ, եկիր էմ՝ քե-  
զի տանեմ տըտիւ։

Ենց էտ շորերով տղան տա՛րը՝ կտ'նի թա-  
բութի մէջը՝, կտ'նի ծիու վ'րա՞ն՝, կվերցի,

կեթա: Ճանբախ թաքաւո՞ր կխարցուցի.

— Հա՛լա՛ շատ կա:

— ԶԵ, կո մօտացանք, — կասի:

ՄԵԿԵԼ թաքաւո՞րն էլ մէլդանի մէջ ուր ըսեն ժողովուրթ կլցի, տղան թաթութ կպերի, էտ ժողովուրթի տէմը' կպա՛ցի, ըմեն կծղզան թաքաւո՞րի վ'րա՞ն'. էն մէկէլ թաքաւո՞ր կասի.

— Հա՛լ իմ խզնա՞ն' էր կ'ողնալի, մկա քեղի կ'ողցաւ. տսնաս էս, տու ընձի վ'րա' էս էր, կո քո կլխին էկաւ:

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Բ

Էն ի՞նչ ի.

Ճ'րիթա-ճր'ճ'րիթա,

Ճ'րի տակէն նաւչա կեթա (լուսին):

Էրգէն չւան

Թեխ նախչւան (մրջիւնների բարփան):

Էրգէն աղիք',

Ծէրը ծաղիկ' (վառող մով):

Սւ արար բեղերն օլլեց,

Խազար մարթ մէ տրա՛ցէ գ'լդրեց (զիշեր):

Մէ մարթ էկաւ Հա՛րա՛րուց,

Տել չնստած' մէկ թռուց (բարեւ):

Սարէն էկամ վաղէվազ,

Զիդա՞ն' թա՛լիմ օխտը՝ գ'տ'զ' (կայծակ):

Ուլուլիկ'-պուլուլիկ',

Մէջը՝ մէ տեղին ուլիկ' (ձու):

Խէրս իմ որթին ի, մօրս ես ծնամ (ձու):

Ընչու պոչ չկռես, չի մնի փայան (չամիչ):

Սարէն-քարէն թա՛լես, չի կռտրւի, ը՛նի  
ճրի մէջ, կկռտրւի (բուղբ):

Տւիմ քեզի, կպաւ (անուն):

Լինք'ը ըլի՛ կմնա իրես, տա՛ր'առ'կ' ըլի՛,  
կեթա տակ (սիկը ջրի մէջ):

Վերցես՝ կ'լա՛, թողնես՝ կդադրի (օրբա):

Մէ ծառ կա, էրկու թուփ ունի, մէկ'ը  
սև, մէկ'ը սվտակ' (օրուգիշեր):

Օրօրեմ' կ'լա՛, տ'նեմ' չի լա՛ (սազ):

Կապես՝ կեթա, չկապես՝ չեթա (սրեխ):

Կարմիր բուղան թուաւ. քո մա՛մա՛յի վը՝  
ը՛ա՞ն' (կաւե սափոր):

Չորս ախալէր վասնես էն մէլմէկ'ու իտե,  
մէլմէկ'ու չեն մլոնելլի (սայլի անիւները):

Էրկու ախալէր մէ սարի իտե, մէլմէկ'ու  
չեն տսնալլի (աչֆեր):

Չորս ախալէր մէ ք'դա՛կի տակ (սեղանի  
ոնիերը):

Կարմիր թաղին տունը՝ կբուա, սև թաղին  
տնիսը կբուա (բոց եւ ծուխ):

Մէ օրօրոց կա, մէջ տասսը՝ տղա քնիր ի, սը ի-  
րար տանք, հա՛ր' մէկ'ը մէ ծէն կխանի (լարեր):

Մէ ծառ ունեմ, տասներկու ճող ունի,  
Հա՛ր'-մէ ճո՛ղին եառսուն խնձոր ունի, խնձո-  
րի կէսը՝ սե, կէսը՝ սվտակ' (Տարի, ամիսներ,  
օրեր, զիշեր ու ցերեկ):

ԱՌԱԾՆԵՐ ԵՒ ԱՍՍՅԻԱԾՆԵՐ

Եշիկ', քե կասեմ,

Մարթիկ', տո՛ւ լոի:

Կատւին խաղ ի,

Մկան մախ ի:

Զա՛ր'կին ա՛ք'ուն',

Կպտւ ծա՛ք'ուն':

Ըմենին լո՛ս ի,

Մեզի փո՛ս ի:

Մեզի կրակ,

Ուրշին ճրաք:

Ընչու Շուշտ'ն' զա՞նթըւի,

Ժամ-պատարայ կարցըւի:

Քիչ պո՛ր'ցի:

Շո՞տ տա՛ր'ցի:

Վիր իշտահ կա՛ փլաւ չկա,

Վիր փլաւ կա՛ իշտահ չկա:

Ակաս-մակաս,

Տու էս էր պակաս:

Դատ կար ա՛լըտուն,

Տու էլ էկար ճ'ռտուն (Տեղ չկա):

Ախշարք աղով,

Աղն էլ խամով:

Ախ

Կպերի մախ:

Ես աղա, տու աղա,

Բա մեր աղուն վ'աւ աղա:

Պա'նի վա'խտ փախնեմ, էթամ,

Խացի վա'խտ իկ'ամ, պազեմ,

Պտուկ լզեմ:

Պարթկը տալով,

Մեխկը լալով:

Առած մարթուն դա'ր'դ' ի տւե,

Դա'ր'դ'ին էլ դա'ր'մա'ն' ի տւե:

Հա'լ էշն աղեկ' ըլէր,

Տիրո'չ տուռը կխատնէր:

Կէլէն աղադւաւ,

Առչի ծեռն ը'նգ'աւ:

Ծուռը կ'նա'ց խառնոտուն,

Ասաց՝ «Ես լաւ ի ք'ա'ն'ց իմ տուն»:

Կինի ի, թան չի,

Ըմեն մարթու պա'ն' չի:

Ուլուլիկ'-պուլուլիկ',

Ինչ սատանէն,

Ինչ ուր կնիկ':

Կ'ողը կ'ողէն կ'ողացաւ,

Առած վերէն զա'ր'մացաւ:

Եշ ծնւե, առաջ այս գործութիւնը կամ այս գործութիւնը  
Եշ մեծացե: առաջ այս գործութիւնը  
Ընչու տղան չ'լա՛, առաջ այս գործութիւնը  
Մէրը ծիծ չի տա: առաջ այս գործութիւնը  
Թան, թան, թան, թոթան,  
Պապիկ' ուտի, էթա կ'ուտան':  
Տուս քահանա, առաջ այս գործութիւնը  
Տուն սատանա:  
Ետ ա'րո՛ղին շալէ շապիկ',  
Քիչ ա'րո՛ղին նալէ շապիկ':  
Եշ խեզնելը' մէ ա'լիբ,  
Եշնելն էրկու ա'լիբ:  
Ետ քեզ խրատ,  
Ել չցանես կտաւատ:  
Ժամից ես էմ իկ'ա'լի,  
«Օղորմի ասւած» տու էս ասելըի:  
Ես ծեր տուն,  
Տու վիր տուն:  
Ուր խմա քնել ի,  
Ուրշի խմա երազ ի տսնելի:  
Ել էն կիկօն,  
Զէլ էն կիկօն:  
Կիսուըս մեռաւ,  
Տեղս լէնցաւ:  
Պաս ուտեմ,  
Ժա՛ժիկ' ուտեմ:

ՏԵԼ ՀԵ ԼԵ ԽԱՌ,

ԿԹՈՆԻ ԹԹՈՒՇ:

Կատուն տուն չի, մկներ եա՞ր՝ հալդիլան  
էն խաղալըի:

Ծուռ ակօս սև եզան տակէն ի (ծնողն է  
մեղաւոր որդու անպիտանութեան համար),

Ափսո՛ս չի շա՛քա՛ր՝ շան պերան:

Ծին ինա՞ն՝ ճո՛րին կուտան, էշը՝ ո'տի տակ  
կ'նաց :

Արտը՝ խասիր ի, քաղողքերը՝ շատացիր էն:

Լուծը՝ առաջուց կ'ըտը՝ տ'նել եզան վզի  
վրա՞ն:

Աղեկ'ութո՞ն ա՛րողին կ'լոխը՝ ծակ կլի:

Օց Մալրամա խո՛տէն կփախնի, Մալրամա-  
խո՞տ օցու պո՞նի տէմ կկանանչի:

Սափո՛րը՝ ճ'րի ճանբախը՝ կկոտրւի:

Դա՛րդալի ծէնը՝ ասւած խէ լսի, վա՛ր'թ-  
ո՛րին ծուն՝ կ'կա:

Քա՞նի քաղցենան, զատկի փլաւ միտը՝ կը յնի:

Օցու կծած կաղելնա, լեզւի կծած չաղելնա:

Ասսու նշանած կ'առը՝ կէլ չուտի:

Քուրթն ուր թանին թթու չասի:

Օցը՝ չղմշի խո՛ղն ուտի:

Ախչկան ուր քէֆով թողնես, կեթա, զուռ-  
նաչուն կառնի:

Ուրշի խացով փո՛ր չի կշտանա:

Համաշը՝ մամատ լաճ չպերե:  
Անսկամին ոչ ասւած:  
Պաս ուտողի կ'լոխն առիքին չխասնի:  
Համաշը՝ մամիկտ կ'ատը՝ չթխի:  
Ամբ օր կէլը՝ կուրախանա:  
Կորտի իրեսը՝ թքին, ասաց՝ «ք'ան'ց ճ'ռւ-  
րը՝ շատ չի»:  
Անլւը՝ ք'թէլի պէս կընի տ'ըլլ'լդ:  
Ըմեն ամբ գոռալուն ծուն չկ'ա:  
Կասես անգ'ճէն կանչին:  
Կակո'զ լեզւով օցը՝ պո'նէն կխանեն:  
Անտէրի տէրն ասւած ի:  
Պերանը՝ կուշտ, փո'րը՝ քաղցած:  
Աւել մալը՝ փո'ր չ'ծակե:  
Կ'ողը որ տնէն ըլի, եզը երթիսէն կխանեն:  
Վա՛ր՝ մատ կուս, էրուն կ'կ'ա:  
Չաղ'ուն վսկոին ի խասե:  
Տղալին պանի տիր, խետը՝ քել':  
Իրես տւինք', աստառ էլ ուղելի:  
Մէ ծեռը՝ ծափ չ'տա:  
Էն ճ'րէն վախեցի, ո'ր կայնուկ ի:  
Աղել կէշ ասեն, ք'ան'ց էշ:  
Կատւին ասին՝ «աղբդ տեղ ի», տար'ցաւ,  
խո'զ տւեց վ'րան',  
Պառաւած ծիին կ'արի չեն տա:  
Շունն ուրենց տուան մէչը՝ կհոռանա:

Ուլը՝ կողովի տակ չ'մնա: Կէլը՝ հալվաչուն դա՛ս'տ՝ կանի: Ընձնէ էլե, լողս ի ուսուցելըի ընձի: Էշուն ասին. «Քեզի քուռակէ էլե», ասաց. «Ե՞նչ անեմ, որ իմ պեռը՝ շլ'այս ի»:

### ԱՆ Է Ծ Ք Ն Ե Ծ

Կըող քեզի տանի: Զար կըողին խուր ըլես: Ծեր դա՛յան մոմոա: Ծեր դա՛յան ծեր սեր՝ կտպի: Ք'դա՛կ'տ կլիսիտ վ'րա՛ն՝ մնա: Նաշիկ'տ տռնէն խանեն: Տղամարթ մեռնես: Խորած, ջիգ'ա՛ր'դաղ, չոփւած, ջիգ'ա՛ր'-մեռ, սրտախո՛ր, մոմոաւո՛ր: Լո՛ս չտսնես պա՛րով, սեարի՛: Քո ծնունդն անիծւի: Խո՛ղկո՛տ: Խո՛րեմ քեզի: Ծեր դա՛յան անլաճ մնա: Ծեր ք'դա՛կ'ը՝ ծեր դա՛յու ծեռը՝ մնա: Էս կ'շեր ժամը՝ մնաս, քռշնա: Լաճուտ սե թուխտն իկ'ա, մոմոաս: Ք'աշո՛ւմ՝ պերնէտ ըլի, ծո՛ցտ թա՛փւի: Ասւած քեզի եռ տա, եղունգ չտա:

Օ Բ Հ Ն Ա Ն Ք Ն Ե Բ

Ա.սւած քեզ պախի, կանանչես:

Ծլես, ծաղկես:

Քո ծնունդն օխնւի:

Ա.սւած քեզի քո դա՛յու, քո բարալի խմա  
պա՛րի լիշտատակ անի:

Ա.սւած քեզի օխնի:

Օղորմի դա՛յուտ, խօրտ:

Օխնւես:

Դատ ապրես:

Ա.սւած քո դա՛դա՛ն' պախի:

Ա.սւած քո չարը՝ փրկի:

Խէր-Ա'պ'րխամի օխնիտկ'ը՝ վ'րա՛տ ըլի:

Ա.սւած ծեռտ հա՛մա՛շը՝ լինք'ն անի:

Ա.սւած դուշ'մա՛նի սրտով չանի:

Ա.սւած հա՛մա՛շը՝ տուռտ պա՛ց անի:

Ա.սւած մեռնողի խո՛քին լո՛սաւորի:

Ա.սւած զալդալէն փրկի:

Ա.սւած քեզկ'ա՛ր՝ էրգէն ա՛մ'ր՝ տտ:

Ա.սւած քեզի պինդ ձեռով պախի:

Ե Ր Գ Ա Կ Մ Ն Ե Բ

Քիրիստո՛սը՝, էն վրալքերիս ասւածը՝, էն  
մասերը՝, էն խաչերը՝, էտը՝ տըլ՝, ժամտան  
լո՛սը՝, սըր Օհանէսը՝, սըր Կարապիետը՝, Տի-

ըամէրը', Օհան Մկրտիչը', Պարտամո'ս առաքեալլ':

Են օրէնք'ը':

Իմ արևը':

Քո կ'լիմիկ'ը':

### ՄԱՅՐԱԿԱՆ ՓԱՂԱՔՇԱՆՔՆԵՐ

Դուրբան ըլեմ դուրբնին,

Ալգարահա թումբնին.

Ինչ էս պա'ը'ցէ քո էշուն,

Ըմեն ըլեն առփըշուն.

Ըմեն տարար սիրողիտ,

Մէկ չ'պերիր ծնողիտ

(ասում են փոքրերին՝ ձեռների վրա խաղցնելով):

Անունիտ դուրբան ըլեմ, դա'դա'լի՛ բալա:

Արևիտ մեռնեմ, իմ տ'զիզ:

Իմ իրեսը' քո ո'տի տակի խո'զն ըլի, նա'-նա'լի՛ բալա:

Քո զադը՛-բալան իկ'ա իմ վ'րա'ն', խոքուն ճըպք:

Են փուշը, ինչ կմնի քո ո'տը, թող մնի իմ աշկը, սրտիս սուն, խո'քուն տուն:

Պա'ըով քո ծեռովի խո'զ մտնեմ, ը'քի՛ զ'օ'-զը'մ:

### ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Չաղուան կզար' կեմ, ցին-փսորտ կթափեմ:  
Ճո՛չ թիք' ա'տ անգ' ա'ճտ կթողնեմ:  
Իմ խօ՛ր տղան չլեմ, հա՛յ քեզի չսպանեմ:  
Հա՛յ կինես ծեռս, տու ընձի դ' ուրբան ըլես:  
Ես շան տղա եմ, հա՛յ քեզի սաղ թողնեմ:  
Կդաղեմ քեզի, հա:

Էնէնց թա'փուկ' տամ քեզի, որ օխտը՝ դա'մ-  
բալ շրջւես:

### ՄԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Խելացի՛ ել, դ' ուրբան, էնէնց արա, որ ու-  
րշքերը՝ բա'խա'լ'նա'ն քեզի վ' րա':

Մարթու խետ մի՛ ը'նգի, ը'քի՛ գ'օ'զը'մ, չա-  
րութո՛ն մի՛ արա, խօրտ մօրդ խօսկէն տուս  
մի՛ ել', ճ'րերի մօտ մի՛ քելի, պատերի վ' րա'ն'  
շուռ մի՛ եա'րի, սատանան կմշկի:

Ճո՛չերուտ պատիւ պախի՛, որ ասւած էլ  
քեզի սիրա:



ՅԱԿԵԼԻՍԾ

**ԽՕՑԻ ՀԱՅԵՐԸ**

(Տեղագրական համառօս տեղեկութիւններ)

Խօցի գաւառը գտնւում է ալինտեղ, ուր հին Հեր և Զարեանդ գաւառներն էին. դեռ մինչեւ այժմ Խօցի գաւառում քաղաքից դէպէ արելահիւսիս մօտ 15 վերստ հեռու գոյութիւն ունի Զարեան անունով դիւզը, որ ներկայումս զուտ թուրքաբնակ է. Խօցից դէպէի հարաւ, Սալմաստի սահմանին մօտ, գտնւում են այն կարմիր բլուրներն, ուր՝ ըստ աւանդութեան՝ կանգնած է եղել Վարդան Մամիկոնեանը և հրամաններ է եղել տալիս Տղմուտի (այժմեան Ղօթուր-չայի) ափերին մարտնչող զօրքերին. այդ բլուրներից մէկի վրա ընկել է Վարդանն, ուր և՛ կառուցւած է մի մատուռ, որ նրա անունով կոչւում է «ս. Վարդան». այդ բլուրները կազմւած են կարմիր աւաղաքարից. ըստ ժողովրդական աւանդութեան՝ Վարդանանք են կարմրացրել իրանց արիւնով:

Մինչեւ 1828 թւի գաղթականութիւնը Խօցի գաւառը հայաշատ է եղել. դրան իբրև

ապացոյց կարող են ծառալել նաև՝ այստեղ-  
այնտեղ չըրւած Հայկական հին գերեզմանա-  
տներն ու եկեղեցիները, սակայն այժմ, ինչ-  
պէս երեսում է մեր վիճակագրական ցուցա-  
կից, Հայերի թիւը խիստ նւազ է այդտեղ—  
ընդամենը 317 ընտանիք 1552 անդամով,  
այսինքն բոլորը միասին կարող են կազմել  
միջակ մեծութիւն ունեցող մի գիւղ։

Խօյի գաւառում Հայերը բնակւում են հե-  
տեւեալ տեղերում։ Խօյի արւարձան, Սէլլո՛-  
վա՛ր՝, Շօրաւ, Մա՛հ'լա՛զան, Դիզա՛, Վառ,  
Փերա և Ղարաջա՛մ։

Խօյի արւարձանը կամ «Եր՛մա՛նիստան»-ը  
(Հայաստան, որպէս անւանում են թուրքե-  
րը) գտնւում է Խօյքաղաքից մի վերստաչափ  
հեռու գէպ արևմտաՀարաւ։ Հայերն ապ-  
րում են թուրքերի հետ խառն։ Եր՛մա՛նիս-  
տանը բաղկացած է հետեւեալ երեք թաղե-  
րից՝ Ելվագի թաղ կամ Ք'ուշա՛-բաղ, Փոս թաղ  
(թուրքերէն՝ չուխուր մա՛հ'լա՛), Աղայի թաղ  
(սէհէդների շատութեան սկառճառով). «աղա»  
սէհէդների տիտղոսն է) կամ Թախտա-Ք'օլ'փի  
(թուրքերէն՝ փալտէ կամուրջ)։ Փոս թաղում  
են գտնւում միդասեան երկսեռ դպրո-  
ցը մէկ ուսուցչով, մօտ 25—30 տշակերտ-  
աշակերտուհիներով, և հողաշէն, փոքրիկ

եկեղեցին (բացի ալդ՝ մի խարխուլ եկեղեցի էլ կտ Ելվազի թաղում, որև ուխտատեղի է): «Ապրոցն ունի գրադարանի պէս մի ըան՝ մօտ 200 կտոր գրքով։ Բողոքական միսսիօնարութիւնն ունի մի դպրոց մի թերուս ուսուցչով։ Այստեղ աչքի ընկնող կրթական և բարեգործական հիմնարկութիւնը դօկտօր Լեպսիուսի հիմնած «Որբախնամ Ընկերութեան» («Արևելեան միսսիօնարութեան» մի ճիւղը) հանգանակած նպաստներով գոլութիւն ունեցող «Որբանոց-դպրոցն» է, որ պատսպարել է իր մէջ 85 որբ և կիսաորը (35 արական և 50 իգական, գլխաւորապէս տաճկահալ) երեխա, որոնց կրթութիւն են տալիս եւ արհեստներ սովորեցնում։ Որբանոց-դպրոցը բաղկացած է 3 բաժանմունքից, ունի 2 ուսուցիչ և 1 ուսուցչուհի (որը հսկում է նաև՝ մաքրութեանը և խնամում հիւանդներին), բոլորն էլ հալ-լուսաւորչական։ Կառավարչուհին կամ «մայրիկը»—Աննա Զարնակ—և իր օդնականուհին բողոքական գերմանուհիներ են, երկուսն էլ կրթւած, ինտելիգէնտ անձնաւորութիւններ։ Աղջիկները սովորում են նաև՝ տնտեսագիտութիւն։ Արհեստանոցում սովորում են տղաներից 14-ն ատաղձագործութիւն, որն ուսուցանում է մի գերմանա-

Հայութնական գործողութեան

Տարբերակի համար	Բնակչութեան գործողութեան:													Փառագութեան	
	Տարբերակի		Գործողութեան		Հայութնական գործողութեան		Մասնակցութեան		Հայութնական գործողութեան		Մասնակցութեան				
	Քաղաքական	Վարչական	Աղյուղական	Վարչական	Աղյուղական	Աղյուղական	Վարչական	Աղյուղական	Վարչական	Աղյուղական	Վարչական	Աղյուղական	Վարչական		
1 Հա'վ'թ'վան	323	100	423	932	823	1815	514	278	221	499	83	1270	1044	2314	597 Հայտ հայտնակ:
2 Փայտչափ.	190	104	294	531	417	948	251	290	240	530	108	821	657	1478	359 > "
3 Մ'հ'հ'լ'ամ'	134	51	185	383	350	733	136	173	142	315	38	556	492	1048	174 > "
4 Սպարա.	101	67	168	271	227	498	283	175	142	317	71	446	369	815	354 Թուրք և հայ:
5 Հին-Քաղաք	70	57	127	209	153	362	102	176	150	326	90	385	303	688	192 Թուրք, հայ և հրէա:
6 Հալասար	69	52	121	193	188	381	79	160	143	303	21	353	331	684	100 Հայտ հայտնակ:
7 Սարմեհիկ'	91	9	100	329	269	598	139	22	14	36	8	351	283	634	147 Հայ և Թուրք:
8 Սահնա	7	97	104	20	17	37	14	275	231	506	173	295	248	543	187 Հայտ հայտնակ:
9 Արտախանա	48	12	60	132	97	229	82	45	31	76	16	177	128	305	100 Թուրք և հայ:
10 Հրզրչա	42	5	47	128	112	249	18	12	10	22	4	140	122	262	22 > > "
11 Վարչան.	25	2	27	106	76	182	37	5	7	12	1	111	83	194	38 > >
12 Խորովա	13	23	36	29	21	50	16	51	47	98	5	80	68	148	21 Խորի, հայ և քիւրդ:
13 Հորկ-աւա	13	1	14	70	55	125	32	4	3	7	2	74	58	132	34 Թուրք և հայ:
14 Թ'ա'վ'չան	0	28	28	0	0	0	0	77	53	130	18	77	53	130	18 Թուրք, հայ և տարի:
15 Դրիշ'	9	15	24	24	19	43	6	46	36	82	10	70	55	125	16 Թուրք և հայ:
16 Այան.	19	2	21	54	51	105	31	6	4	10	1	60	60	115	32 > > "
17 Ք'օ'չամիչ	0	23	23	0	0	0	0	60	49	109	19	60	49	109	19 Թուրք, հայ և տարի:
18 Ձէլթան-աւա	15	4	19	40	36	76	8	6	5	11	1	46	41	87	9 Թուրք, տարի և հայ:
19 Ա-ւ'մ'	7	2	9	15	13	28	11	5	5	10	1	20	18	38	12 Թուրք, տարի և հայ:
20 Ճիմ'ջուկ.	0	6	6	0	0	0	0	16	17	33	2	16	17	33	2 Քիւրդ, Թուրք, հայ և տարի:
21 Վ'ո-ւիլան.	3	0	3	9	15	24	2	0	0	0	0	9	15	24	2 Թուրք, տարի, հայ և քիւրդ:
22 Աղա-Սմայիլ.	1	4	5	1	3	4	0	10	8	18	2	11	11	22	2 Թուրք և հայ:
23 Փա'թ'ա'ւ-ւիլ'	0	3	3	0	0	0	0	9	8	17	3	9	8	17	3 Պորի և հայ:
Ընդամենը .	1180	667	1847	3536	2942	6478	1761	1901	1566	3467	677	5437	4508	9945	2438

Խ Օ Ֆ Ի Վ Ի Հ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ց Ա Ւ Յ Ա Ր

օրի սովորական .	115	19	134	278	248	526	21	36	36	73	0	314	284	598	21 Հայ և թուրք:
սէլդ'պ'պ'պ' .	87	7	94	230	199	429	64	18	15	33	10	248	214	462	74 > > "
Քօրս .	0	33	33	0	0	0	0	108	79	187	29	108	79	187	29 > > "
Մ'հ'հ'լ'աման .	23	2	25	73	59	132	10	3	2	5	1	76	61	137	11 Թուրք և հայ:
Դիզա .	7	11	18	10	15	35	0	33	26	59	5	41	94	5 Հայ և թուրք:	
Դարձակամի.	0	4	4	0	0	0	11	6	17	4	11	6	17	4 Թուրք և հայ:	
Փիրտ .	3	0	3	11	7	18	0	0	0	0	0	11	7	18	0 > > "
Ընդամենը .	240	77	317	632	540	1172	98	213	167	380	49	845	707	1552	147

4. Տրամադրութեան  
աշխարհապետական
- 1 ~ 453 - 2600 - 367  
2 ~ 350 - 2000 - 511  
3 ~ 200 - 1100 - 534  
4 ~ 168 - 809 - 494  
5 ~ 125 - 625 - 474  
6 ~ 121 - 685 - 337  
7 ~ 90 - 450 - 429  
8 ~ 90 - 450 - 429  
9 ~ 60 - 388 - 354  
10 ~ 47 - 262 - 424  
11 ~ 21 - 105 - 54  
12 ~ 36 - 190 - 137  
13 ~ 14 - 70 - 47  
14 ~ 28 - 130 - 24  
15 ~ 24 - 125 - 1916-10.2  
16 ~ 21 - 115 -  
17 ~ 15 - 66 - 104  
18 ~ 19 - 87 - 104  
19 ~ 9 - 38 - 69  
20 ~ 6 - 33 - 17  
21 ~ 2 - 19 -  
22 ~ 4 - 19 -  
23 ~ 3 - 17 -  
1916-10.2 - 5914
- 1 ~ 110 - 680  
2 ~ 86 - 430  
3 ~ 17 - 75  
4 ~ 22 - 110  
5 ~ 18 - 90  
6 ~ 4 - 28  
7 ~ 1 - 7
- 258 - 1400  
26 Fuzas

222 - 223

ցի մասնագէտ վարպետ, 3-ը ուստանանկութիւն և 1-ը կօշկակարութիւն։ Դպրոցն ունի փոքրիկ գրադարան և մանկապարտէզ, ուր լաճախում են և՛ գրսից երեխաներ։ Այս բարեգործական հիմնարկութիւնն, ուր բնաւգոյութիւն չունի կրօնական պրօպագանդա, խղճի բռնաբարումն, և սրբութեամբ ծառայում է իր նպատակին—անտուն-անտէր որբեր խնամելուն բառի բուն նշանակութեամբ, միմիայն խորին երախտագիտական գգացումներ պէտք է զարթեցնէ ամենմի հայի սըրտում թէ դէպի մարդասէր դօկտօր Լեպսիուսն ու նրան այս գործում ստար եղողները, և թէ դէպի կառավարչուհին—յարգելի Աննա Հարնակը։

Խօլեցի հայերի մէջ գրագէտների թիւը կազմում է ազգաբնակչութեան մօտ <sup>1/6</sup> մասը։ Հայերը թէև վարելահողեր ու այգիներ չունեն, բայց բակերում պարտէզներ շատ կան, Եղած հողը սեփականութիւն է։ Հարկ չեն վճարում, միայն տարեկան 2 դռան (մօտ 33 կոպէկ) տալիս են սա՞ր' ֆիա՞րա՞ս' տին (ք' տ' ր' գ' ս' ւզա՞ր' — հայերի դատաւոր) իբրև ոռճիկ, և իւրաքանչիւր արհեստաւոր վճարում է իր արհեստի համար տուրք 2—5 դռան տարեկան։ Ապրուստի գլխաւոր աղբիւրն արհեստն

է. ալդտեղ կա 7 պայտառ, 4 զինագործ, 2 ջրաղացալան, 2 առևտրական, 1 մաքսաւոր, իսկ մնացած հասակաւոր տղամարդիկ համարեան բոլորը հիւսներ և ատաղձագործներ են։ Ալդտեղ կա մի հալ-բողոքական բժիշկ։

Սեյդավար'ը համարեան գուտ հալաբնակ է, որովհետեւ թուրքերը կազմում են ընդամենը 20 տուն։ Այստեղ երբեմն գոլութիւն է ունենում գալրոց, ինչպէս անցած տարին, երբեմն ոչ, ինչպէս այստարի (1905 թ.)։ գրագէտների թիւը հասնում է մօտ 30-ի։ Մի խրճթանման եկեղեցի կա մի քահանալով, որը հովւում է նաև Գիզա'լի և Ղարաջա'լիի հալերին։ Ապրուստի միջոցը պանդխուութիւնն ու հողագործութիւնն են տալիս. ալգիներ համարեան չունեն, հողն աղալը է. բերքի կէսն աղալինն է։

Մօտիկ Գօ՛հ'ը՝ ևան թուրք (նախկին հալ) գիւղում կա մի հին եկեղեցի «Աստւածածին» անունով, որ ուխտատեղի է. ալդտեղ ուխտ են գնում շաբաթ երեկոներն, աստւածածնի տօնին և զատկից յետո առաջին կիրակին։

Տօրաւ փոքրիկ գիւղը գտնվում է մի ճահճային տեղում. հալերը, որ թուրքերից շատ են (հալ 33 տուն, թուրք 15 տուն), բոլորն էլ գաղթած են Վառ գիւղից։ Գիւղն ունի

եկեղեցի մի քահանալով, ոյը հովւում է նաև՝  
Մա՛հ'լա՛զանի, Վառի և Փերալի հալերին.  
կոչնակ են խփում։ Ապրուստի աղբիւրը հո-  
ղագործութիւնն է. հայերն ունեն երկու ալ-  
գի. հողն աղալըդ է։

Մա՛հ'լա՛զանը 1828 թւի գտղթականու-  
թիւնից առաջ գուտ հալարնակ մեծ գիւղ է  
եղել, 500 ընտանիքից աւելի. լիշած թւին  
հոյլերը գաղթել են Նախիջևանի գաւառի Զահ-  
րի գիւղը, և նրանց տեղը բռնել են թուր-  
քերը. բայց ժամանակի ընթացքում միքանի  
ընտանիք վերադարձել է Հայրենիք։ Ապրուս-  
տի աղբիւրը պանդխտութիւնն ու հողագոր-  
ծութիւնն են. բաւական այգիներ ևս կան.  
Հողատիրութեան տեսակն աղալդ է, բերքի  
<sup>1/3</sup> մասն աղալինն է։ Քարաշէն եկեղեցին  
հոյակապ է, բայց հին, որը ժողովրդի տսե-  
լով՝ Շահ-Աբբաս Մեծն է շինել, բայց ինչ-  
պէս երևում է եկեղեցու գուան գլխին գըտ-  
նւող արձանագրութիւնից, Շահ-Աբբաս Մե-  
ծը չէ շինել, այլ շինւել է Շահ-Աբբաս Փոքրի  
ժամանակ, տոմարական ոնե (Ք. 1656) թւին<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Աբբաս Ա. շահը մեռաւ 1629 թւին Պարզ է,  
որ եկեղեցին շինւել է Շահ-Աբբաս Բ.-ի կամ  
Փոքրի ժամանակ, որ գահակալում էր 1641-ից  
մինչև 1665 թւականը։

Գրագետ հինգ հոգի կա, որից մէկը կին է։  
Ուխտատեղիներն են «Լուսութուն» մատու-  
ռը և «Օջաղ»-ը։ Գիւղից մօտ 8 վերստ հե-  
ռու լեռներում մի ալրի մէջ կա մի աղբիւր,  
որի գլխին մի կապուտ քար կա կախւած։ ըստ  
աւանդութեան՝ տարին մի անդամ — համբարձ-  
ման տօնին — արիւն է կաթում ալդ կապուտ  
քարից աղբիւրի մէջ, որովհետեւ ալդուդ սուրբ  
մարդ է նահատակւել. ալդ տեղը կոչւում է  
«Փիր» (սուրբ), Ասում են, թէ մի եկեղեցի  
էլ կա Ղօրուղ (նախկին հայ, ալժմ թուրք)  
գիւղում, որ շինել է իբրթէ Շահ-Արքասը(՞)։

Դիզա՝ գիւղի հայ ազգաբնակութիւնը՝ փո-  
խանակ տւելանալու՝ շնորհիւ գաղթականու-  
թեան հետզհետէ նւազել է։ Այստեղ կա հին  
եկեղեցի. կոչնակ են խփում։ Գրագետ չկա։  
Գիւղացիների գլխաւոր զբաղմունքը հողագոր-  
ծութիւնն է. ալդիներ քիչ կան, այն էլ նո-  
րատունկ։ Հողատիրութեան տեսակն աղայի  
է. բերքի կէսն աղայինն է։ Գիւղի գէմուդէ-  
մը, հարաւալին բլուրների վրա է գտնւում  
«Ա. Վարդան» մատուռը։

Վառ գիւղում 1897 թւին 46 տուն հայ  
կար, բայց քիւրդերից նեղւելու պատճառով  
փախան, ցըւեցին ուրիշ տեղեր, ալժմ կա  
ընդամենը վեց ընտանիք, որից մէկը գաղ-

թական է։ Գիւղի մօտ ժայռի վրա մի աւելակ բերդ կա, որից քիչ ցած մի լղկած քարի վրա հալերէն (<sup>6</sup>) արձանագրութիւն է գտնւում տեղացիների ասելով. այդտեղ գնալը վտանգաւոր լինելու պատճառով չկարողացանք բովանդակութիւնն իմանալ։ Գիւղի ս. Գէորգ Եկեղեցին ընդհանուր ուխտատեղի է. Եկեղեցու աւազանի մօտ քարի տակ դրւած կա մի կարաս, և հնումն՝ ըստ աւանդութեան՝ Աստծու հրամանով քարից ձէթ է Եղել դուրս գալիս և կարասը թափւում՝ Եկեղեցում վառելու համար. բայց երբ ս. Գէորգի աջը 1828 թւի գաղթականութեան ժամանակ տարել են Երևանի գաւառի Աղամզա՛լը գիւղն, այդ ձէթն ալես չե բղխում։ Հայերը պատմում են, թէ թուրքերի ասելով՝ Հայոց հին գերեզմանատընից միքանի անգամ լոլս է դուրս Եկել և մտել Եկեղեցին։ Կոչնակ են խփում։ Գրագէտ չկա։ Գիւղացիների գլխաւոր զբաղմունքը հողագործութիւնն է. այգիներ ևս ունեն. Հողն աղալզ է. բերքի <sup>1/3</sup> մասն աղալինն է։

Փերա թուրքական մեծ գիւղից վերջին տարիներս Հայերից մօտ 20 ընտանիք գաղթել է զանազան կողմեր, մնացել է 3 ընտանիք։ Հին Եկեղեցի ունեն։ Գրագէտ չկա։ Զբաղմունքը հիւսնութիւնն ու ջրաղացպանութիւնն է։

Հողն աղալղ է. բերքի <sup>1/3</sup> մասն աղալինն է:  
 Դարացալի փոքրիկ գիւղը (4 տուն հալ,  
 7 տուն թուրք) նշանաւոր է նրանով, որ՝  
 ինչպէս ասում են՝ ալդտեղի հին Պօղոս-Պետ-  
 րոս (ալժմ խարխուլ) եկեղեցումն է մկրտւել  
 Ստեփանոս Նազարեանը: Հայերի զբաղմուն-  
 քը երկրագործութիւնն է, թէև հողը ճահ-  
 ճալին է. հողն աղալղ է, բերքի կէսն աղա-  
 լինն է: Գրագէտ չկա:

Մօտել Դարա-Շաքան (ալժմ զուտ թուր-  
 քաբնակ) գիւղում կա հայկական հին գերեզ-  
 մանատուն:

1905 թ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպւած է	Պէսֆ է լինի	Երես Տող
(Հանքա-	(Բորի ջուր, Հանքա-	8 1
2	8	43 12
2	22	92 8
Փող	Փող է	101 17
անամ	անգամ	131 2
Վէրքի	կամ բորի Վէրքի	135 7
(տիկնիկներ	(Հարսնիկ, տիկնիկ	145 17
օրերը	օրը	190 20

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես

ՍԱԼՄԱՍՏԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ 3—20

Սահմանները . . . . .	3
Սալմաստի հովիտը . . . . .	5
Լեռները . . . . .	7
Ջրերը . . . . .	11
Հանքային ջրերը և հանքերը . . . . .	14
Կլիման . . . . .	15
Բուսականութիւնը . . . . .	17
Կենդանիները և թռչունները . . . . .	20
 ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԸ . . . . .	21—58
 Հա՛ֆ'թվան . . . . .	23
Փալաջուկ . . . . .	26
Մա՛հ'լ'ա՛մ . . . . .	29
Յաւրա . . . . .	31
Հին-Քաղաք . . . . .	34
Ղալասար . . . . .	37
Սարամերիկ . . . . .	39
Սառնա . . . . .	40
Ախտախանա . . . . .	41
Ղզլղա . . . . .	43

Վա՛ր'դան	.	.	.	.	44
Խոսքովա	:	.	.	.	46
Ըսլեռաւա	.	.	.	.	47
Ք'ա՛լա՛շան	.	.	.	.	48
Դըիշկ'	.	.	.	.	49
Ալան	.	.	.	.	50
Ք'օ՛չա՛միշ	.	.	.	.	51
Նէլթան-աւա	.	.	.	.	52
Ոււշ'	.	.	.	.	53
Զեա՛ջուկ	.	.	.	.	54
Գ'ոււլիզան	.	.	.	.	56
Աղա-Սմալիլ	.	.	.	.	57
Փա՛թա՛ւուր'	.	.	.	.	58
ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԾ			59—	60	
ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒ- ԹԻՒՆՆԵՐ			61—	62	
ՀԱՅԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ					
ՈՒ ԻՐԱՆՑ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ			63—	73	
ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԽՄԵԼՔ			74—	75	
ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ			76—	86	
ԿԵՆՑԱԳ ԵՒ ԶԲԱԴՄՈՒՆՔ			87—	93	
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ ՈՒ ՍՈ- ՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ			94—	133	
Ամուսնութիւն և հարսանիք	.	.		94	

Ծնունդ և կնունք . . . . .	103
Մանուկների դաստիարակութիւն և խաղ . . . . .	106
Ընտանեկան կեանք . . . . .	109
Մտաւոր և բարոլական լատկութիւններ . . . . .	111
Հիւանդութիւն և բժշկութիւն . . . . .	113
Մահ, թաղումն և մեռելոց . . . . .	126
Հոգու և հանդեղձեռլ կեանքի մասին . . . . .	130
<b>ՀԱԽՈՏՔ</b> . . . . .	<b>134—190</b>
Աստւածութիւն, որբեր և կրօնական գրւածներ . . . . .	139
Աշխարհածնութիւն. հաւատալիք տարրերի, ֆիզիքական երևոլթների և բնութեան թագաւորութիւնների մասին . . . . .	148
Կերպարանափոխութիւն, կախարդներ և կախարդութիւն . . . . .	152
Սնոտիապաշարմունք . . . . .	156
Բախտ, ճակատագիր և երազ . . . . .	175
Պաս և ուխտագնացութիւն . . . . .	177
Տօները . . . . .	182
<b>ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b> . . . . .	<b>191—219</b>
Վիճակի երգեր . . . . .	192

Հեքիաթներ	.	.	.	193
Հանելուկներ	.	.	.	209
Ոռածներ և ասացւածներ	.	.	.	211
Անէծքներ	.	.	.	216
Օրհնանքներ	.	.	.	217
Երդումներ	.	.	.	—
Մալրական փաղաքշանքներ	.	.	.	218
Սպառնալիքներ	.	.	.	219
Մալրական խրատներ	.	.	.	—

### Յ Ա Խ Ե Լ Ի Ա Ֆ

Խօթի ՀԱՅԵՐԸ	220—228
ՍԱԼՄԱՍՏԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ	
Խօթի ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ	
ՍԱԼՄԱՍՏԻ ՔԱՐՏԵԶԸ	



John C. Smith



7510

2000's



2013



2013

